

ՄՈՒՇԵՂ ԼԱԼԱՅԱՆ

**ՑԵՂԱԿՐՈՆ ԵՎ ՏԱՐՈՆԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ**

(պատմություն և գաղափարախոսություն)

*Հրատարակիչ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ*

Երեւան - 2011

*ՆԿԻՐՎՈՒՄ Է ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅԻ
ԾՆՆԴՅԱՆ 125 ԱՄՅԱԿԻՆ*

**«Ապրել ու գործել միայն այն բանի համար,
որի համար արժե մեռնել,
եւ մեռնել միայն այն բանի համար,
որի համար արժեր ապրել»:**

Գ. ՆԺԴԵՅ

Ուսումնասիրությունը ներկայացնում է 20-րդ դարի 30-ական թվականներին սփյուռքում ծավալված Ցեղակրոն եւ Տարոնական շարժումները. դրանց պատմությունը, գաղափարախոսությունը, ինչպես եւ հիմնական գաղափարախոսներին՝ Գարեգին Նժդեհին եւ Չայկ Ասատրյանին:

Այդ շարժումները ներկայացնող գաղափարախոսությունները՝ Ցեղակրոնությունը եւ Տարոնականությունը, մեր օրերում վերածնունդ են ապրում, սակայն հաճախ մնում են չհասկացված, կամ էլ դրանց արհեստականորեն կպցվում են տարբեր պիտակներ:

Միաժամանակ, երբ ներկայում այս կամ այն կերպ արժարժվում է ազգային գաղափարախոսության խնդիրը, այդ ուսմունքները մնան խնդրով զբաղվողների համար խիստ կարեւորություն են ձեռք բերում:

ՀԱՅ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ
ՎԵՐԵԼՔԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ
20-ՐԴ ԴԱՐԻ 30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

«Աղաչում ենք, հայրենակիցներ, խռովքոտ այս օրերին, ձեզ պահեք ձեր իմաստությունները եւ եթե կարող եք, տվեք մեզ երկաթ, վառող, ցեղի ցավից ցնցված վրիժառու ոգիներ, նրա գոյության հրամայականով առաջնորդվող կամքեր, ինքնափրկումի հավատով սպառազեն սրտեր եւ մենք կդառնանք կարոտի սլաք, հաղթանակի նետ, բացարձակապաշտության օրենքները խորտակող ուժ, պատմության անիվը դարձնող գործոն»:

«խռովք» 1932թ.

**«Կորած է այլևս հայկական
դատը - աշխարհը կարող է ասել, այո՛:
Բայց մենք կասենք - հա՛յ, տո՛ւր ցեղորեն
արթնացած մի սերունդ, զարկող ու զարկելով
ստեղծագործող մի սերունդ եւ պատմությունը
քեզ պիտի վերադարձնի քո երկիրը»**

«Ցեղ եւ Հայրենիք» 1936թ.

Լոզանի խորհրդաժողովը վերջնականապես թաղեց արեւմտահայության հույսերը, որը, սփռված լինելով աշխարհով մեկ, սկսեց աստիճանաբար հարմարվել իր անհայրենիք վիճակին: Վտարանդի դարձած արեւելահայերը եւս, որոնց հիմնական մասը Խորհ. Հայաստան մուտքի արտոնություն չունեն, իր հաստատված երկրներում սկսեց բավարարվել ընդամենը հայկական կյանքը զարգացնելով:

Այս ամենը տեղի էր ունենում հայ քաղաքական կուսակցությունների անհաշտ կռիվների, Հայրենիք-սփյուռք հարաբերությունների բարդ ընթացքի պայմաններում:

Նման իրավիճակում, գաղութահայությունը պետք է որոշեր իր անելիքը մի շարք հրատապ հարցերի վերաբերյալ. ի՞նչ միջոցներով պիտի կանխվեր հայերի ծուլումն օտար միջավայրում, ինչպիսի՞ն էր լինելու վերաբերմունքը Խորհ. Հայաստանի նկատմամբ, վերաբերմունքը Թուրքիայի նկատմամբ: Դրա հետ կապված՝ ինչպիսի՞ն էին լինելու հայրենատիրության (կորսված Հայրենիքի վերատիրման) հետագա ընթացքը, նրա հետապնդման ձեւերը:

30-ական թվականների սկզբից սփյուռքում ծայր առած հայ ազգայնական (ազգային) շարժումները բացառապես ածանցվում էին Ղ.Յ.Դ.-ից՝ սփյուռքի առավել հզոր եւ ազդեցիկ քաղաքական կազմակերպությունից: Մնացած հայ քաղաքական ուժերը զուրկ էին իրենց ներսում ազգայնական ուժեր խմորելու կարողությունից:

Դաշնակցությունը, Հայրենիքից վտարվելուց հետո, վարում էր հակախորհրդային քարոզչություն, որը միայն գաղափարական տարբերություններով չէր թելադրված. վտարանդիության սկզբից (մասնավորապես շուտ) կուսակցության ղեկավար կորիզը ներկայացնողների մի մասը սկսել էր կողմնորոշվել դեպի Թուրքիա՝ փորձելով մերձենալ վերջինիս՝ ընդդեմ Խորհ. Ռուսաստանի: Հ.Յ.Դ. մի շարք ղեկավարներ սկսեցին կապեր հաստատել 1922թ.-ին Կ.Պոլսում ստեղծված, կովկասյան վտարանդի կազմակերպությունների «Պրոմեթե» կոչվող քաղաքական միության հետ, որի նպատակն էր Թուրքիայի աջակցությամբ Կովկասն ազատագրել բոլշևիկյան տիրապետությունից: 1923թ.-ից դադարեցվեցին ահաբեկչական գործողությունները թուրք ջարդարարների նկատմամբ («Նեմեսիս» օպերացիան, որն առաջադրել էր Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհ. ժողովը 1919թ.-ին, փաստորեն, կիսատ մնաց): Հայության հիմնական թշնամի սկսեց նկատվել ո՛չ թե Թուրքիան, այլ՝ խորհրդային վարչակարգը, եւ առաջնային սկսեց համարվել ո՛չ թե Արեւմտյան Հայաստանի վերատիրումը, այլ՝ Արեւելյան Հայաստանի ազատագրումը բոլշևիկյան լծից: Այդ տարիներին, մեկը մյուսի ետեւից, լույս տեսան Ռուբեն Դարբինյանի «Հայ քաղաքական մտքի դեզերումները» («Հայրենիք» ամսագիր, 1922-1923թթ.), Սիմոն Վրացյանի «Խարխափումները...» (1924թ.), Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայ-թուրքական կնճիռը» (1924թ.), որտեղ հեղինակները հարց էին դնում դրացի ազգերի հետ միասին համագործակցել Թուրքիայի հետ՝ ընդդեմ խորհրդային իշխանության:

Դրան հակառակ, Հ.Յ.Դ. մի շարք գործիչներ սկսեցին քարոզչություն ծավալել հակաթուրքական ուղղությամբ. լույս տեսան Հովհաննես Քաջազնունու «Թուրքիա թե՞ Ռուսիա» (1924թ.), Գարեգին Նժդեհի «Որդիների պայքարը հայրերի դեմ» (1927թ.), «Ցեղի ոգու շարժը» (1932թ.), Զարեհանդի «Կրնա՞նք հաշտվիլ թուրքին հետ» (1926թ.), «Միացյալ եւ անկախ Թուրանիա» (1926թ.), Շահան Նաթալիի «Թուրքիզմը Անգորայեն Բաքու...» (1928թ.), «Թուրքերը եւ մենք» (1928թ.) հրապարակումները:

Այս պայմաններում, Հ.Յ.Դ. շարքերում տեղի ունեցան պա-

ռակտուճներ, վտարուճներ, առաջ եկան բյուրոյի կողմնակիցներ, հակաբյուրոյականներ:

Ընդհանրապէս, այդ տարիներին, սփյուռքի հայ քաղաքական կուսակցութիւնները կրավորական դիրք էին բռնել հայրենատիրութեան խնդրի նկատմամբ՝ նրա հետապնդումը համարելով աննպատակահարմար, ոչ իրատեսական: Իսկ Խորհ. Զայաստանում՝ բոլշեւիկյան տիրապետութեան պայմաններում, երբ քարոզվում էր համերաշխութիւնը թուրք աշխատավորութեան հետ, նման խնդրի արժարժումն իսկ պատժելի էր:

Չենց հայրենատիրութեան, հակաթուրքականութեան հողի վրա էլ, հիմնականում Յ.Յ.Դ.-ի ներսում կամ նրանից սերված, սկիզբ առան ազգայնական հասարակական-քաղաքական շարժումները սփյուռքում, որոնք ի սկզբանէ նպատակ չունեին անջատվել Դաշնակցութիւնից, այլ՝ կուսակցութիւնը վերադարձնել հին, հեղափոխական ավանդութիւններին, զինել նոր՝ ազգայնական գաղափարախոսութեամբ:

Սակայն, սփյուռքահայութեան մեջ ազգայնական շարժումների սկզբնավորումը միայն հակադրութիւն չէր հայ քաղաքական հոսանքների՝ Թուրքիայից հողային պահանջների շարժարժմանը: Դա պայմանավորված էր նաեւ՝

- ա) գաղութահայութեան՝ օտար միջավայրում ծնւնան վտանգով,*
- բ) գաղութներում տարվող բոլշեւիկյան ազգամերժ քարոզչութեանը դիմագրավելու մտահոգութեամբ,*
- գ) այն համոզմունքով, որ աշխարհը դեռ կանգնելու է նոր պատերազմի առջեւ եւ պետք է նախապատրաստվել գալիք արհավիրքին,*
- դ) վերջապէս, այդ տարիներին աշխարհում, մասնավորաբար Եվրոպայում, ազգայնական շարժումների վերելքով:*

Այժմ համառոտ անդրադառնանք այդ տարիներին սփյուռքում առաջացած հայ ազգայնական հասարակական-քաղաքական շարժումներից մի քանիսին:

ՑԵՂԱՅԻՆ-ՎԵՐԱՆՈՐՈԳՉԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

1932 թվականի նոյեմբերին, Սոֆիայում, Հայկ Ասատրյանի խմբագրությամբ, «Խռովք» իմաստասիրական-գիտական ամսագրի հրատարակումով ազդարարվեց հայկական ցեղային-վերանորոգչական շարժման սկիզբը:

Ի՞նչ խնդիրներ էր առաջադրում «խռովքը»:

Հայոց անցյալի ողբերգականությունը պայմանավորող ենթակայական գործոնների մեջ մատնանշելով նաեւ այն, որ «մեր կյանքի եւ գործի մեջ գիտականություն չմտցրինք», «խռովքը» նպատակ էր դնում իրականացնել հետեւյալ առաջադրությունները.

ա) Համակարգել հայ իմաստասիրական մտքի արդյունքները, այսինքն՝ վեր հանել հայ իմաստասիրության գծերն ու մշակել նրա պատմությունը եւ ներածությունը: Ուսումնասիրել նաեւ հայ կյանքում առկա հոգեւոր խնդրումները եւ վերլուծել գործող հայ հոսանքների գաղափարաբանությունը:

բ) Հոգեբանորեն կազմակերպել հայության ինքնապաշտպանության գործը, որի համար՝ վերծանել հայոց հոգեբանական առանձնահատկությունները, միջոցներ առաջարկել մեր հոգեբանական թերությունները սրբագրելու եւ առավելությունները համահայկականացնելու:

գ) Մշակել հայոց պատմության փիլիսոփայությունը: Գիտական ուսումնասիրության նյութ դարձնել Հայկական Բարձրավանդակը:

դ) Արժեքավորել հայոց հնագույն եւ նորագույն ազատագրական կռիվները, գտնել մեր պատմության զարգացման տրամաբանությունը, մատնանշել հայոց քաղաքական-հասարակական վերածնության ուղիները:

Ցավոք, «խռովքը» լույս տեսավ ընդամենը մեկ համար, որում ամփոփված լրջախոհ հոդվածների զգալի մասը մնաց շարունակելի: Հատկապես հիշատակելի է Գ. Նժդեհի «Ցեղակրոնությունն իբրեւ հաղթանակի զորույթ» հոդվածը, որը Ցեղակրոն ուսմունքի վերաբերյալ՝ մեզ հայտնի առաջին հրապարակումն է (1):

Չմայած կարճ ընթացքին, «Խռովքը» էական դեր ունեցավ հայկական ցեղային շարժման համար: Այս պարբերականում «հստակորեն բնութագրված է ցեղակրոնությունը, ուրվագծված է տարոնականությունը եւ առաջադրված է վերանորոգչական շարժումը» (2): «Խռովքի» առաջադրությունները խթան հանդիսացան Ցեղակրոն եւ Տարոնական շարժումների ծավալման եւ դրանց գաղափարաբանությունների ձեւավորման համար:

* * *

«Խռովքի» օրգանական շարունակությունն է **«Ցեղ եւ Չայրենիք»** հանդեսը, որը, հիմնականում Չայկ Ասատրյանի, ինչպես նաեւ Ներսես Աստվածատուրյանի ջանքերով, սկսեց լույս տեսնել Սոֆիայում, 1936 թվականի մայիսից: «Ուղղության եւ ոգիի տեսակետով մազաչափ տարբերություն չկա 1932թ.-ի «Խռովքի», 1936թ.-ի «Ցեղ եւ Չայրենիքի» եւ 1938-են հրատարակվող «Տարոնի Արծիվի» միջեւ» (3):

Սակայն, ինչպես եւ պետք էր սպասել, շուտով հալածանք կազմակերպվեց «Ցեղ եւ Չայրենիքի» դեմ՝ կապված Չ. Ասատրյանի եւ Չ.Յ.Դ. ղեկավարության հարաբերությունների սրման հետ, ու ընդամենը երեք համար լույս տեսնելուց հետո, հանդեսը փակվեց:

Չանդեսի վերնագիրն արդեն վկայում է, որ նրա գաղափարաբանության հիմքում ընկած են Ցեղի եւ Չայրենիքի հավիտենարժեք գաղափարները: Գաղութահայ կյանքի ողբերգական վիճակը պայմանավորելով հայության մեջ հաղթանակի կամքի կորստով, նրանում հանրապարտադիր բարոյականի չգոյությամբ՝ «Ցեղ եւ Չայրենիքը» կարելուրում է այն ճշմարտությունը, թե իր կյանքի առօրյան իր գոյության հավիտենականին կապելու բարոյականը եւ իմաստությունը չունեցող ժողովուրդը դառնում է հոգեւոր խաժամուժ:

«Կվիճենք, որովհետեւ տկար ենք: Կչարախոսենք, որովհետեւ չենք առաջնորդվիր ներցեղային բարոյականի սկզբունքներով», - գրում է հանդեսը (4)՝ խնդիր դնելով մեր ներքին տկարությունների հաղթահարումը եւ համահայկական բարոյականի գործադրումը:

Այն հայության ուշադրությունը սեւեռում է երկու ճշմարտության

վրա եւս. «Սեփական ես-ի մեջ տեսնել իր դժբախտության պատճառները եւ սեփական ոգու մեջ որոնել իր հզորանքի գաղտնիքը» (5):

«Ցեղ եւ Հայրենիքի» գերխնդիրը հայրենագուրկ գաղթահայության մեջ հայրենատեր դառնալու կամքի մշակումն է: «Այս է, որ պիտի քարոզենք, ասոր համար է, որ պիտի մաքառենք, ասոր վրա է, որ պիտի ջանանք կենտրոնացնել հայ մտավորական ընտրանիի եւ նոր սերունդի ուշադրությունը» (6):

Ձգտելով առաջ բերել հոգեւոր-բարոյական հեղաշրջում, հանդեսը նախապայման է տեսնում՝ «Ցեղ» ըմբռնման հարազատումը սփյուռքահայ կյանքում, քանզի «Ցեղն է բոլոր աստվածներու, մարդկային ողջ կյանքի արմատը եւ չափանիշը» (7), Ցեղի կամքը՝ մեր պատմության առաջնորդը:

«Թո՛ղ ամեն հայ գիտնա, որ մենք Ցեղեն եւ Հայրենիքեն դուրս ամեն գաղափար, ամեն արժեք, ամեն երջանկություն եւ ամեն իմաստ կժխտենք», - գրում է հանդեսը (8), որով՝ Հայն ու Հայաստանը հաստատագրում իբրեւ բացարձակ եւ գերակա արժեքներ:

«Ցեղ եւ Հայրենիքը» իր էջերում տպագրում էր արժեքավոր ուսումնասիրություններ Հայկական Բարձրավանդակի վերաբերյալ, տալիս սահմանումային եւ ծագումնաբանական ծանոթություններ Ցեղի մասին, վերագնահատում մեր պատմության առանձին դրվագներ, ներկայացնում գաղթահայությանը վերաբերող հարցեր եւ այլն: Նրա էջերում հանդես էին գալիս Հայկ Ասատրյանը, Ներսես Աստվածատուրյանը, հայ խոշոր տնտեսագետ (կոոպերացիայի տեսաբան), պրոֆ. Վահան Տոտոնյանցը, դոկտ. Պերճ Հաճոյանը (մասնագիտությամբ բժիշկ), բանաստեղծ եւ ուսուցիչ Օնիկ Ջարմունին (իսկական ազգանունը՝ Փանիկյան) եւ ուրիշներ:

«Ցեղ եւ Հայրենիքը» փորձել է արժեքավորել նաեւ Գ. Նժդեհի տեսական ժառանգությունը եւ Ցեղակրոն շարժումը: Այս տեսակետից, ուշագրավ են Հ. Ասատրյանի խորհրդածությունները Նժդեհի «Ամերիկահայությունը - Ցեղը եւ իր տականքը» գրքի վերաբերյալ (9) (դրանք, ցավոք, կիսատ են մնացել) եւ Օ. Ջարմունու «Ցեղակրոնությունը եւ գաղթաշխարհի հայ երիտասարդությունը» հոդվածը (10):

ՄԱՐՏԿՈՑԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՅԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՈՒՒՏԸ

1932թ.-ի սեպտեմբերին Յ.Յ.Դ. բյուրոյի կողմից՝ «ծանր հակա-կարգապահական հանցանքների համար» մեղադրականով կուսակ-ցութեան շարքերից արտաքսված Մկրտիչ Երիցանցը, Լեւոն Մոզյանը, Վազգեն Շուշանյանը, Մեսրոպ Գույումճյանը եւ Աբո Աբոյանը (բոլորն էլ՝ Յ.Յ.Դ. Արեւմտ. Եվրոպայի կենտրոնական կոմիտեի անդամներ) սկսեցին հրատարակել **«Մարտկոց»** թերթը, որով սկզբնավորվեց այսպէս կոչված Մարտկոցական շարժումը:

Շարժումը համակիրներ ձեռք բերեց հիմնականում Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի հայկական շրջաններում. դրան հարում էին հատկապէս Յ.Յ.Դ.-ից հեռացած կամ հեռացված եւ բյուրոյի քաղաքականութ-յունից դժգոհ տարրերը: Մարտկոցական շարժման նկատմամբ հա-մակրական վերաբերմունք ունեին Շահան Նաթալին, գոր. Սմբատը, Մատթեոս Ֆերահյանը եւ այլ նշանավոր նախկին դաշնակցականներ, որոնք նաեւ հանդես էին գալիս «Մարտկոցի» էջերում: «Մարտկոցին» Ռումինիայից թղթակցում էր, այն ժամանակ դեռ ուսանող, Կարապետ Պալճյանը՝ ապագա Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Իրենց պայքարի գլխավոր նպատակ ունենալով արեւմտահայու-թյան խնդրի լուծումը՝ մարտկոցականները թշնամական կեցվածք ունեին Թուրքիայի եւ համակրական, աջակցական դիրքորոշում՝ Խորհ.Հայաստանի նկատմամբ: Մեկնակետ ունենալով այն համո-զումը, թէ «աշխարհի քարտեզի գույները վերջնական չեն», նրանք կոչ էին անում գաղթահայ բոլոր ուժերին՝ պատրաստվել թուրքի հետ «վճռական բախումի մը համար, որ պիտի գա. պիտի գա անկախորեն մեզմէ, մենք ուզենք թէ չուզենք» (11): Հատկանշական է, որ արդար վրեժ տածելով թուրքի հանդէպ, մարտկոցականները Ապրիլի 24-ը դիտել էին տալիս *«ոչ թէ սգատոն, այլ վրիժատոն»* (12):

Յ.Յ.Դ.-ի ղեկավարութեան քաղաքականութիւնը նրանք համա-րում էին աղետավոր եւ խնդիր էին դնում՝ փոխել բյուրոն: Մարտկոցականներն իրենց համարում էին հավատավոր դաշնակ-

ցականներ եւ փորձ էին անում Դաշնակցության մեջ առաջ բերել հեղափոխություն, սրբագրել կուսակցության սխալ ուղեգիծը: Եվ իբրեւ դրա իրականացման ճանապարհ, նրանք առաջադրում էին վճռական երկրնտրանք. «Կան Բյուրոն է, որ պիտի ապրի եւ կան Դաշնակցությունը» (13): Վ. Շուշանյանը գտնում էր, որ անհրաժեշտ է վերականգնել կուսակցության հին, հեղափոխական բարքերը՝ զոհողության ոգին, հեղափոխական կարգապահությունը: Նա կարելուրում էր կուսակցության ղեկավարության անընդհատ նորոգությունն ու երիտասարդացումը եւ քննադատում էր ղեկավարությանը, որ միահեծան եւ շարքայիններից կտրված ուժ է դարձել (14):

Իր «Ո՞վ է դաշնակցականը» հոդվածաշարում Ֆերահյանը գործող պայմաններում Դաշնակցության կոչումն ու պարտականությունն էր համարում «Տաճկահայաստանի ազատագրությանը նվիրվել, գործունեության դաշտ ընտրել Տաճկաստանը, հեղափոխական ձեռնարկները ուղղել թուրք պետության դեմ եւ մտածումի առարկան դարձնել հայրենագուրկ հայ գաղթականությունը» (15):

Թեւ Մարտկոցական շարժումը ծնունդ առավ Դաշնակցության ներսից, սակայն այն ընդամենը ներդաշնակցական խնդիրներ չէր դնում, այլ նաեւ՝ համացեղային: Շարժման նպատակների մասին ահա՝ թե ինչ է ասում նրա ղեկավարներից Մ. Գույումճյանը. «Մարտկոցականությունը ցեղի կրած դաժան ճակատագրի պատմական պարտադրանքն է, իբրեւ այդպիսին այն ուղղված է՝... ազգային ուղեգիծը կերտելու, մեր ազգային կամքի տաճարը կառուցանելու» (16): *«Այս շարժումը ցեղապաշտ շարժում է՝ մեր այս տրտում, ցավագին, անհրապույր օրերուն, զանգվածները շարժելու համար. մեր հնագույն պատմության անշեջ կրակը կփնտրե, մեր ցավագին եւ հերոսական պատմության «խորհուրդ»-ը վերականգնել կուզե եւ անոր հառիլ կուզե կարոտահեղձ ու հայրենաբաղձ բազմությանց աչքը, հոգեղեն աչքը»* (17):

Մարտկոցականությունը հայության խնդիրների լուծման ճանապարհին, իբրեւ առաջին գործ, առաջադրում էր Նոր Հայի կերտումը. *«Հայ, որ գիտակից լինի իր էությանը, իր արժեքին եւ կոչումին: Հայ, որի հոգին բխի հին արմենների հոգիեն, բայց որ իր սնունդն առնե*

նոր օրերի մտքերեն ու խոյանքներեն: Հայ, որ արմենների նյութեն շինված լինի, առանց խառնուրդի եւ հարազատ, բայց որի պատկերը պայծառանա նոր օրերի լուսի տակ: Վերջապես, Հայ՝ ամբողջական եւ կատարյալ, որով կարելի լինի մեծ երազների եւ վսեմ գործերի ձեռք երկարել» (18):

Արեւմտահայությանը համախմբելու համար, մարտկոցականները նպատակ ունեին գումարել Արեւմտահայ երրորդ համագումար, ինչը նրանց չհաջողվեց:

Մարտկոցական շարժումը վարկաբեկելու նպատակով, Հ.Յ.Դ. ղեկավարությունը նրա մի շարք դեմքերի պիտակեց՝ որպես Չեկայի հետ առնչվողների: Միաժամանակ, ահաբեկման փորձեր արվեցին Վազգեն Շուշանյանի եւ Շահան Նաթալիի նկատմամբ:

Հ.Յ.Դ. 12-րդ Ընդհանուր ժողովի նախաշեմին, մարտկոցականները դիմեցին ժողովի պատգամավորներին՝ սատարել շարժմանը եւ նրա նպատակներին: Ընդհանուր ժողովի կողմից մերժում ստանալով՝ 1933թ.-ի ապրիլին նրանք իրենց հռչակեցին «Հայ հեղափոխականների մարտական դաշնակցություն»:

Հարկ է նշել, որ Ընդհանուր ժողովում Գաբրիել Լազյանը, Դրոյի եւ Ռուբենի թելադրմամբ, հարց բարձրացրեց՝ Մարտկոցական շարժումը քայքայելու նպատակով ահաբեկչական գործողություններ կատարել: Նժդեհը դեմ արտահայտվեց՝ փաստարկելով, որ մարտկոցականները դրան կպատասխանեն ավելի լայն, համարժեք գործողություններով, եւ ժողովը մերժեց Լազյանի առաջարկը (19):

Շուտով, Մարտկոցական շարժման ղեկավարության ներսում տարակարծություններ առաջացան, որոնք հանգեցրին ներքին պառակտման: Շարժման ղեկավարներից ոմանք փորձեցին դիմել այդ օրերին գումարված Հ.Յ.Դ. Ընդհ. ժողովին՝ իրենց կուսակցական իրավունքները վերականգնելու նպատակով, բայց ժողովը չուզեց նույնիսկ լսել նրանց (20):

* * *

Ներքին պառակտումներին վերջ դնելու նպատակով, 1933թ.-ի հոկտեմբերին Փարիզում կայացած Մարտկոցական շարժման Ա. Ընդհանուր ժողովը լուծարեց շարժումը եւ նրա հիմքի վրա հռչակեց

«Արեւմտահայ ազատագրական ուխտ» կազմակերպությունը, որի պաշտոնաթերթը, «Մարտկոցի» վերանվանումով կոչվեց **«Ամրոց»** Փաստորեն, «Արեւմտահայ ազատագրական ուխտը» կազմակերպական ձեւ էր տալիս այդ տեսակետից անորոշ Մարտկոցական շարժմանը:

«Ամրոցի» առաջին համարը լույս տեսավ Փարիզում, 1934թ.-ի հունվարի 13-ին: Նրա էջերում շարունակում էին հանդես գալ Նաթալին, Ֆերահյանը, զոր. Սմբատը:

Սկսած թիվ 21-ից (1934թ.), «Ամրոցը» «Մարտիկ» խորագրով էջ տրամադրեց «Հայ կամավորների եւ նարտիկների ազգային միությանը» (21), իսկ թիվ 29-ից՝ բացեց ֆրանսերեն բաժին, փորձելով նաեւ այդ ձեւով նպաստել ֆրանսահայ նոր սերնդի հայապահպանմանը:

«Արեւմտահայ ազատագրական ուխտի» գաղափարաբանությունը, բնականաբար, էական տարբերություններ չունեւ Մարտկոցականության հետ: Այդուհանդերձ, կազմակերպությունն ուներ իր հատուկ «Դավանանքը», որը լրիվությամբ բերում ենք ստորեւ (22).

ԴԱՎԱՆԱՆՔ ԱՐԵՎՍՏԱՅԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՈՒՒՏԻ

Ա - *Կը հաւատանք ու կը դաւանենք մէկ Աստուած՝ Յեղն Արմէններու:*

Կը դաւանենք զԱյն ամէն բանէ վեր:

Ամէն բան Անոր համար, եւ ոչինչ Անկէ նախընտիր:

Մեր կրօնն է՝ Յարութիւնը Արմէններուն, որ կը մերժէ ցեղային որեւէ նուաստութիւն եւ կը պահանջէ ցեղային յարգանք՝ հաւասար որեւէ ազգի:

Չենք հաւատար անշահախնդրութեանը որեւէ ոյժի: Մեր ոյժն է միայն մեզ անդաւաճան:

Բ - *Մէկ է մեր ցեղասպան թշնամին՝ Թուրքը:*

Նա է պարտական մեր միլիոններով նահատակներու արիւնին: Իսկ Արեւմտահայութիւնը՝ պահանջատէրը:

Նա է բռնատէրը Թորքահայ հողերուն, իսկ Թորքահայութիւնը՝ պահանջատէրը:

Մէկ է մեր դատը - Թորքահայ դատը:

Մէկ է անոր տէրը - հայրենավտար Թորքահայութիւնը:

Դատ՝ ծով արիւնհին եւ մէկ միլիոն հայրենավտար Թորքահայերու հողերուն:

Մեր արիւնը թափեցաւ, մեր հողերը ււերուեցան Թուրքիայի սահմաններուն մէջ: Մեր Հայրենիքն էլ այդ սահմաններու մէջն է: Գերեզմանոց է այն, բայց մեր Հայրենիքն է: Եւ մեր ուխտն է վերականգնել զԱյն, գեղեցիկ ու հաւասար բոլոր հայրենիքներուն:

Գ - Կը հաւատանք ու կը դաւանենք միութիւնը մեր Ցեղին:

Կը յարգենք Արմէնեան նոր ոգիով՝ այդ միութեան ցեղատիպ բոլոր ոյժերն ու հաստատութիւնները, որոնք քառասուն դարեր հաւաքաբար ապրեցուցին մեր Ցեղը: Եւ իբրեւ հաւաստիք՝ կը մերժենք որեւէ յաւակնութիւն, որ իրեն կը վերագրէ Ազգին գոյութիւնը ու կը ժպրհի (վատաբար կհանդգնի- Ս. Լ.) տէրը լինել Ազգին, փոխանակ լինելու Անոր հաւատարիմ ծառան:

Կը ճանաչենք ամէն մէկը իր տեղը, ու կը մերժենք որեւէ մէկի ամէն տեղ լինելու յաւակնութիւնը:

Առաջինի մէջ կը դաւանենք ճշմարիտ միաբանութիւնը, որովհետեւ վերջինի մէջ գտած ենք խարդախ անմիութիւնը:

Մէկ է մեր տեղն ու դերը, ըստ կոչումի, երբեք գերիվեր ու գերազանց որեւէ ուրիշի տեղէ ու դերէ: Մէկ քարը, շիտակ տեղը, Ազգային տաճարին մէջ:

Ամէն մէկը իր տեղը, եւ միայն իր տեղը: Ահա՛ մեր նոր դրութիւնը ճշմարիտ միութեան:

Կը մերժենք Ազգը մենք լինել, որովհետեւ կը դաւանենք, որ մեր Ցեղը «մենք»-երով ապրեցաւ քառասուն դարեր, եւ անմիութիւնն սկսաւ, երբ մէկ «մենք» յաւակնեցաւ լինել բոլոր «մենք»-երը:

Կը դաւանենք Արմէնեան ոգին բոլորին մէջ: Եւ ամբողջի ներդաշնակութեան միջոցով՝ կը դաւանենք մասնիկը - մենք մեզ - միայն մեր ճշդուած տեղով՝ Թուրքին դէմ, միայն մէկ դերով՝ պայքարի մէկ գործիք հայրենապահանջ Թորքահայութեան ձեռքին մէջ:

Նշենք նաև, որ Ա. Ա. Ուխտն ուներ իր զինանշանը, որի վրա գրված էր՝ «Գաղթահայեր՝ բոլոր երկիրներու, միացե՛ք» եւ քայլերգը: Ստորեւ ներկայացնում ենք քայլերգը՝ վերցնելով «Ամրոց»-ի 1942 թ.-ին Լոս Անջելոսում հրատարակված բացառիկ համարից.

ՔԱՅԼԵՐԳ ԱՐԵՎՄՏԱՅԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՈՒԽՏԻ

*Մէկ է մեր Աստուած՝ Ազգը Վահագնի,
Ահա դարերէ կրկին կը կանգնի,
Փողն յարութեան ոգին հայրենեաց,
Կու տայ արծազանգ մահու եւ կենաց:
Ուխտած ենք արին արիւնի դիմաց:
Ոտքի՛ Վահագնի բազմին որդեգիր,
Ոտքի՛ եւ յառաջ, ջոկատ մահակիր,
Վրէժն Զայերուս հերի՛ք անհատոյց
Գամուի Զայ ճակտին խարան հրալոյց:
Աւեր հայրենիք, անթաղ դիակներ,
Մեզմէ կը սպասեն գերեզման ու տէր:
Վրէժ վրէժի դէմ, ոտքի՛ անվեհեր,
Ոտքի Վահագնի կորիւնք Ուխտակիր,
Ոտքի՛ եւ յառաջ, ջոկատ մահակիր:*

* * *

Չարկ է նշել, որ եւ «Մարտկոցը», եւ «Ամրոցը» հիմնականում բացասաբար են արտահայտվել Ցեղակրոն շարժման եւ Նժդեհի հասցեին: Մասնավորապես, երբ Նժդեհը եւ Կոպեռնիկ Թանդրճյանը 1933թ.-ին, Յ.Յ.Ռ. Ընդհանուր ժողովի որոշումով մեկնեցին ԱՄՆ, «Մարտկոցը» խոստացավ իր շարքայիներին՝ պարզել այդ երկուսի «խաբեական զարշէլի դերը» (23). իհարկե, այդպես էլ չպարզեց: Իսկ Մ. Երիցանցը Ցեղակրոնությունը անգիտաբար որակեց «օտար ցեղապաշտ շարժումների անշնորհ կապկում» (24):

Նժդեհի նկատմամբ նման վերաբերմունքը չէր բխում գաղափարախոսական շարժառիթներից, քանզի, ըստ էության, չկան սկզբունքային տարբերություններ Արեւմտահայ ազատագրական ուխտի

«Դավանանքի» եւ Ցեղակրոնության «Չավատանքի» միջեւ: Խնդիրը առավելապես անձնավորված էր: Մարտկոցականները հույս ունեին, թե կուսակցության մեջ բարձր հեղինակություն վայելող Նժդեհը կմիանա կամ կհարի իրենց: Սակայն, դրա փոխարեն, վերջինս նախաձեռնեց Ցեղակրոն շարժումը, ինչը մարտկոցականների կողմից ընկալվեց՝ իբրեւ իրենց շարժումը ձախողելու փորձ: Կարծում ենք, սրանով էլ պայմանավորված էր նրանց բացասական դիրքորոշումը Նժդեհի ու նրա գործի նկատմամբ:

Որոշ ընդմիջումից հետո, «Ամրոցը» լույս տեսավ Աթենքում՝ 1936-1937 թվականներին: 1942թ.-ին Ա. Ա. Ուխտի Լոս Անջելոսի մարմինը հրատարակեց «Ամրոցի» բացառիկ համար: 1949թ.-ին Ա. Ա. Ուխտը, Շահան Նաթալիի առաջաբանով ԱՄՆ-ում հրատարակեց Արամ Երկանյանին նվիրված «Գիրք մատուցման եւ հատուցման»-ը, ինչից հետեւում է, որ կազմակերպությունը, թեւ քայքայված, գործել է առնվազն մինչեւ 40-ականների վերջը: Նրա հետագա գործունեությունը մեզ հայտնի չէ:

ՀԱՅ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Նացիստական գաղափարախոսության ազդեցության տակ, փարիզահայ շրջանակներում 1935թ.-ի մայիսի 24-ին հիմնվեց **«Հայ Ազգայնական կազմակերպությունը»**, որը 1935-39թթ.-ին հրատարակում էր «Ազգ» պաշտոնաթերթը՝ Վիգեն Շանթի (25) խմբագրությամբ: Մայիսի 24-ը (այլ ոչ մայիսի 28-ը) կազմակերպությունը համարում էր ազգային տոն՝ իբրեւ Սարդարապատի հաղթանակի օր:

Հայ ազգայնական կազմակերպության անդամների մի մասը սկզբում եղել է Փարիզի ցեղակրոն հայ երիտասարդների ակումբի անդամ: Նրանցից Գ. Դեշտյանը, որ Դաշնակցությունն այլեւս տեսնում էր «իբրեւ իր էությունից հեռացած եւ սխալ ճամփա բռնած մի պարզ կուսակցություն» եւ, միաժամանակ, ոգեւորված էր Ցեղակրոնությամբ, առաջարկում էր Հ.Յ.Դ. ծրագրից դուրս նետել հակաազ-

զայնական, նյութապաշտ, սոցիալիստական ու դեմոկրատական մտածողությունները եւ ունենալ կուսակցության մի պետ, այսինքն՝ առաջնորդ (26):

«Ազգ» պարբերաթերթի շուրջ հավաքված Հայ ազգայնական կազմակերպությունը 1939թ.-ի սկզբից միացավ «Կավկազին» (27): 1934թ.-ին ստեղծված այս խմբակը իր շուրջ համախմբել էր ազգայնական եւ հակամարքսիստական կովկասյան գործիչների (վրացիներ, ադրբեջանցիներ, լեռնականներ) եւ յոթ լեզուներով (հայերեն, վրացերեն, թուրքերեն, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն) հրատարակում էր «Կովկաս» ամսագիրը: «Կավկազի» նպատակն էր «Կովկասի ազատագրումը օտար գրավումից եւ ստեղծումը անկախ Կովկասյան պետության՝ համադաշնակցային հիմունքների վրա» (28): Ամսաթերթի հայկական հրատարակության խմբագիրն էր Վ. Շանթը: Նրա էջերում հանդես էին գալիս Գ. Դեշտյանը, Յ. Արիստակեսյանը, Կ. Ռոստոմյանը եւ ուրիշներ, իսկ օտարներից՝ հատկապես «Կավկազի» ղեկավարներից Հայդար Բամմատը:

Բավական անսովոր էր Հայ ազգայնականների քարոզած ազգայնականությունը: Նրանք հատկապես անընդունելի էին համարում «միացյալ Հայաստանի» գաղափարի արժարժումը՝ այն դիտելով իբրեւ առկա պայմանների մեջ ոչ իրապաշտ: Հետամուտ լինելով Կովկասյան համադաշնակցային պետության գաղափարին՝ նրանք Կովկասը տեսնում էին որպես միասնական տուն՝ կովկասցիների համար, որի նախապայման էին դնում Կովկասի՝ ընդհանուր ջանքերով ազատագրումը Ռուսաստանից:

Արտաքին հարեւանների հետ բարի դրացիություն պահպանելու ձգտումով, նրանց առաջ (այդ թվում եւ թուրքիայի) հողային պահանջներ չէին դնում: Մեկնաբանելով իրենց՝ հարեւանների նկատմամբ հողային խնդիրներ չդնելու հանգամանքը, Հայ ազգայնականները գրում էին. «Մենք այժմ վարում ենք այն քաղաքականությունը, որ համապատասխանում է մեր իրական ուժերին եւ ընդունում ենք այն, ինչ որ գոյություն ունի այսօր իբրեւ ելակետ: Բայց մենք հավատում ենք մեր ժողովրդի բարձրորակ ձիրքերին եւ համոզված ենք, որ իր ազատությունը վերգտնելուց հետո, նա կհաջողի իր ուժերը

վերականգնեցնել. այն ժամանակ, ինչպես բոլոր առողջ օրգանիզմները, նա կընդարձակվի» (29):

Միաժամանակ, լինելով հակամարքսիստ եւ հակամիջազգայնական, նրանք որոշակի համակրական վերաբերմունք ունեին նացիստական Գերմանիայի նկատմամբ:

Հայ Ազգայնական կազմակերպությունն առանձնակի այլ դրսեւորումներ չունեցավ եւ շուտով մարեց:

Ծանոթագրություններ

1. «Խռովք», Սոֆիա, 1932թ., թիվ 1, էջ 32-40:
2. «Տարոնի Արծիվ», Սոֆիա, 1939թ., թիվ 8, էջ 2:
3. Նույնը, էջ 2-3: «Տարոնի Արծիվ»-ին մենք կանդորադառնանք, երբ խոսք կլինի Տարոնականության մասին:
4. «Ցեղ եւ Հայրենիք», Սոֆիա, 1936թ., թիվ 1, էջ 1:
5. Նույն տեղում:
6. Նույն տեղում:
7. Նույնը, թիվ 3, էջ 2:
8. Նույն տեղում:
9. Նույնը, թիվ 2-3:
10. Նույնը, թիվ 2:
11. «Մարտկոց», Փարիզ, 1933թ., թիվ 72:
12. Նույնը, թիվ 87, 1933թ.:
13. Նույնը, թիվ 22, 1932թ.:
14. Նույնը, թիվ 1, 1932թ.:
15. Նույնը, թիվ 63, 1933թ.:
16. Նույնը, թիվ 103, 1933թ.:
17. Նույնը, թիվ 113, 1933թ.:
18. Նույնը, թիվ 91, 1933թ.:
19. ՀՀ ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գործ 11278, հտ. 2:
20. Տե՛ս Լեւոն Չորմիսյան, «Համապատկեր Արեւմտահայոց մեկ դարու պատմության», Դ. հտ., Բեյրութ, 1975թ., էջ 103, էջ 300:

21. «Հայ կամավորների եւ մարտիկների ազգային միությունը» Առաջին աշխարհամարտում հայկական եւ դաշնակից բանակներում ծառայած եւ Հայաստանից դուրս բնակվող հայերի կազմակերպություն էր, որի հիմնադիր-պետն էր զոր. Սմբատը: Միությունը 1936-38թթ.-ին Մարսելում հրատարակում էր «Հայ մարտիկ» պաշտոնաթերթը:

22. «Ամրոց», թիվ 2, Փարիզ, 1934թ.:

23. «Մարտկոց», թիվ 96, 1933թ., էջ 1:

24. «Ամրոց», թիվ 6, 1934թ.:

25. Լեւոն Շանթի որդին է, գոհվել է Բեռլինում, 1944թ.-ին, օդային ռմբակոծության ժամանակ:

26. Ռ. Մարտիրոսյան, «Ռաշնակցության հակաժողովրդական գործունեությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին», Երեւան, 1987թ., էջ 41-42:

27. «Կավկազ» քաղաքական խմբակն անջատվել է «Պրոմեթեից»: «Պրոմեթեյն» կովկասյան տարագիր կազմակերպությունների միություն էր, որ ստեղծվել էր 1922թ.-ին Կ.Պոլսում, Թուրքիայի անմիջական բարոյական եւ նյութական աջակցությամբ եւ նպատակ ուներ վերջինիս օժանդակությամբ ազատագրել Կովկասը ռուս-բոլշեւիկյան տիրապետությունից: Կազմակերպությունը, որի մեջ մտնում էին վրաց մեմշեւիկները, մուսավաթականները եւ Հյուսիսային Կովկասի լեռնականներից՝ Հայդար Բամմատի հետեւորդները, 1925թ.-ին տեղափոխվեց Փարիզ, ուր 1927թ.-ից սկսեց հրատարակել «Պրոմեթե» ամսուհով հանդեսը:

Թեւ Բ.Յ.Դ. մի շարք գործիչներ որոշ հետաքրքրություն դրսեւորեցին «Պրոմեթեի» նկատմամբ, իսկ 1938թ.-ին կուսակցության բյուրոն նույնիսկ անհրաժեշտ գտավ մտնել նրա կազմի մեջ, սակայն, Ռաշնակցությունը (եւ որեւէ հայ կազմակերպություն), բարեբախտաբար, «Պրոմեթեի» անդամ չդարձավ եւ գործուն մասնակցություն չունեցավ նրա աշխատանքներին:

1934թ.-ին Բրյուսելում «Պրոմեթեյն» վերանորոգվեց՝ կնքելով «Կովկասյան համադաշնակցության ուխտը». հավանաբար այդ ժամանակ էլ նրանից բաժանվեց «Կավկազը» (մասնավորապես՝ Բամմատի հետեւորդները):

28. «Կովկաս», թիվ 1, Փարիզ, 1939թ.:

29. Նույնը, թիվ 3-4, Բեռլին, 1939թ., էջ 41:

- **ՑԵՂԱԿՐՈՆ ՇԱՐԺՈՒՄԸ**
- **ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅ**

**«Ցեղակրոնություն - ահա՛ համադարձանը, առանց
որի հայությունը կմնա
մարդկության քաղաքականապես
ամենատնանկ մասը»:**

Գ. ՆԺԴԵՅ

Ա) ՑԵՂԱԿՐՈՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1932թ.-ին, Սոֆիայում լույս տեսնող «Խռովք» ամսագրում, Գարեգին Նժդեհը, «Յոգեւոր նորոգության խնդիրներ» խորագրի տակ, լույս ընծայեց **«Ցեղակրոնությունն իբրև հաղթանակի զորույթ»** հիմնադրությամբ հողվածը (Նժդեհի մի բանախոսության սղագրումն է սա), ուր մասնավորապես կարդում ենք. «Եթե ցայսօր մեր ժողովուրդը հարվածներ է միայն ստանում եւ ողբերգորեն՝ անկարող է հակահարվածել - դրա պատճառն այն է, որ նա չի ապրում ցեղորեն... Ցեղակրոնություն - ահա՛ համադարմանը, առանց որի հայությունը կմնա մարդկության քաղաքականապես ամենատնանկ մասը» (1):

Նժդեհը գալիս էր ավետելու ցեղահայտության ժամը՝ սկզբնավորելով Հայկականության տեսությունը:

1933թ.-ի ամռանը, Նժդեհը, Յ.Յ.Ղ. 12-րդ Ընդհանուր ժողովի որոշումով մեկնեց ԱՄՆ, ուր նախաձեռնեց Ցեղակրոն շարժումը եւ այն ծավալելու համար հիմնադրեց Ցեղակրոն Ուխտերը, որոնց «Ծրագիր-Կանոնագիր»-ի մեջ կազմակերպության ստեղծման նպատակն ամրագրված է. «Ստեղծել ցեղակրոն սերունդ մը, որուն անդամները ապրին եւ գործեն որպէս ցեղի հպատակն ու մարտիկը, ուր որ էլ լինեն եւ ընկերային ինչ դիրք էլ ունենան...» (2):

Մինչեւ Նժդեհի ԱՄՆ գալը, այնտեղ գործում էին մի շարք երիտասարդական միություններ՝ «Հայորդիք», «Որդիք Հայաստանեայց» եւ այլն: Իրարից անջատ գործող այս միությունները համախմբելու եւ մեկ հայտարարի բերելու դժվարին գործը ստանձնեց Նժդեհը՝ ծավալելով Ցեղակրոն շարժումը, որի գաղափարախոսությունը շարադրեց 1933թ. վերջին, Բոստոնի «Հայրենիք» օրաթերթում՝ **«Ցեղային արթնություն»** խորագիրը կրող հողվածաշարով (3):

Ի՞նչ հանգամանքներով էր թելադրված շարժման անհրաժեշտությունը:

Դա մի ժամանակաշրջան էր, երբ գաղթահայության մեջ տիրող պարտվողական հոգեվիճակը, ներքին ճակատում մոլեգնող միջ-

կուսակցական պառակտիչ կռիվները եւ դրանց միացած՝ օտար այլասերիչ միջավայրը, մղել էին դրսի հայությանն իր նվաստ վիճակին հնազանդորեն համակերպվելու, սպառնալով՝ դարասկզբի մեր պարտությունը վերջնական դարձնել: Սրանց ավելացել էր նաեւ հիվանդագին կրոնականությունը. հայկական գաղթօջախներում գործում էին մի շարք ապագային աղանդներ, որոնք քարոզում էին հրաժարում Չայրենիքի գաղափարից, հեռացում ազգային-հասարակական կյանքից եւ նվիրում «երկնային հայրենիքին»:

Ստեղծված մթնոլորտն անխուսափելիորեն պիտի բերեր գաղթաշխարհի շուրջ մեկ միլիոն հայության փոշիացմանը, իսկ ավելի ճիշտ՝ ինքնասպանությանը: Պետք էր կանխել այն:

Շարժման անհրաժեշտությունը թելադրված էր նաեւ թուրքերի կողմից տարվող հակահայկական քարոզչությամբ: Դրա համար, թուրքերն օգտագործում էին եվրոպացի ծախու հասարակական գործիչների, որոնք հայերին ներկայացնում էին աշխարհին՝ որպես անհայրենասեր, անարի ու անմարտունակ, անիշխանական ու բարոյականությունից զուրկ թալանչիներ: Չարկավոր էր հակաքարոզչությամբ ու իրական քայլերով ցրել հայության մասին ստեղծվող թյուր պատկերացումները:

«Կար Ցեղակրոն շարժման անհրաժեշտությունն ընդգծող մի կարեւորագույն հանգամանք եւս. դա մեր հին սերնդի քաղաքական տեղատվությունն էր Թուրքիայի նկատմամբ: Մեր հին կուսակցությունները սկսել էին լքել Չայկական հարցն ու համակերպվել այն մտքի հետ, որ պետք է հրաժարվել Թուրքիայում մնացած հայկական տարածքներից ու մերձենալ թուրքերի հետ: Այդ ուրացումը երիտասարդ սերնդի աչքում մեզ կդարձներ արհամարհելի ժողովուրդ», - գրում է Նժդեհը (4): Անհրաժեշտ էր անհայրենիք գաղթահայության մեջ բորբոքել հայրենասիրության գաղափարը, նրան «հոգեւոր ու քաղաքական անտուն-անտիրությունից փրկելով, դարձնել հայրենատեր» (5):

Միաժամանակ, շարժումը նպատակ ուներ հոգեւոր հուսալի պատվար ստեղծել բուլշեւիկյան բարոյագուրկ քարոզչության դեմ, որ բացիլի պես տարածվում էր հայ գաղթօջախներում:

Այս վիճակից դուրս գալու մեկ ելք կար՝ հոգեւոր-բարոյական վերանորոգումը, որն էլ հնարավոր էր միայն սեփական (ցեղային) արժեքների ու ձգտումների վերարժարժման եւ դրանք վերապրելու ճանապարհով:

Բնական էր, որ հոգեվերանորոգչական այդ շարժման կրող (շարժիչ ուժ) պիտի դիտվեր երիտասարդությունը՝ որպես հասարակության առավել կարող եւ վերանորոգվելու ընդունակ տարր: Եվ այս առումով, շարժումը նպատակ ուներ՝ վերածվել սփյուռքահայ երիտասարդության համահայկական շարժման, իսկ Ցեղակրոն Ուխտերը դարձնել աշխարհի հայ նոր սերնդի ընդհանուր կազմակերպության կորիզը: «Որպես ծով՝ դա պիտի միացնի իր մեջ նորահաս սերունդին պատկանող բոլոր «գարնանային ջրերը», բոլոր ազգային միությունները» (6). սա՛ էր Նժդեհի սպասելիքը Ցեղակրոն շարժումից:

Քանի որ գաղթահայության ամենամեծ զանգվածն ապրում էր ԱՄՆ-ում, որտեղ եւ հայությունն առավել շատ էր ենթակա ծուլման, ուժացումի, շարժումը սկզբնավորվեց այնտեղ:

Շարժման սկզբնավորման համար էական հանդիսացավ նաեւ ժամանակի գործոնը: Աշխարհում ազգայնական շարժումների աննախընթաց վերելք էր ընթանում. աշխարհն ազգայնանում էր՝ պարտադրելով նոր բախումներ: Անհրաժեշտ էր սեփական արժեքների վեր հանումով հոգեբանորեն նախապատրաստվել գալիք արհավիրքին...

Եվ վտանգված Ցեղը ցնցվեց. նա երկնեց ու Նժդեհի շուրթերով հնչեցրեց Ցեղակրոնության խոսքը՝ «որպես կազդուրիչ կանչ»:

Ժամանելով ԱՄՆ՝ Նժդեհը, «օժտված մարգարեական շունչով ու մոզական հմայքով, Ամերիկայի մեկ ծայրեն մյուսը էլեկտրականացուց մթնոլորտը իր կուռ բանախոսություններով, անկեղծ ու անվախ արտահայտություններով եւ անվիճելի փաստերով» (7):

Շնորհիվ Նժդեհի կազմակերպական ու քարոզչական անզուգական տաղանդի, Ցեղակրոն շարժումը միանգամից լայն թափ ստացավ: Եվ ինչպես խոստովանում է Ռուբեն Դարբինյանը, «առանց Նժդեհի ներշնչած ոգեւորության, առանց անոր մղիչ ուժին, առանց

անոր առինքնող անձին հմայիչ ազդեցության, դժվար թե ամերիկահայ մեր նոր սերունդը կարողանար կազմակերպվիլ այնքան կարճ ժամանակի մեջ» (8): Այս շարժման շնորհիվ էր, որ նրանով խանդավառված ամերիկահայ «բազմահազար երիտասարդ-երիտասարդուհիներ սկսան ո՛չ միայն ամոթ չզգալ իրենց հայության համար, այլ՝ հպարտություն...» (9):

Ցեղակրոն Ուխտերի առաջին ներկայացուցչական ժողովը գումարվեց 1933թ.-ի հուլիսին, որից հետո, շուրջ մեկ տարի կազմակերպությունը գործեց չեզոք՝ ոչ կուսակցական հողի վրա: 1934թ.-ի հունիսին, Բոստոնի «Չայրենիք» ակումբի սրահում, Նժդեհի նախագահությամբ բացված Ցեղակրոն Ուխտերի առաջին Պատգամավորական ժողովը որոշեց մտնել Դաշնակցության դրոշի տակ եւ հետայսու կազմակերպությունը կոչել *Յ.Յ.Դ. Ցեղակրոն Ուխտեր*:

Մի քանի խոսք Ցեղակրոն Ուխտերի մասին:

Կազմակերպությունն ուներ իր Ծրագիր-Կանոնագիրը եւ «Չավատամքը» */տես Չավելվածը/* (10):

Կազմակերպությանն անդամակցում էին Ցեղակրոնության դավանանքը (հավատամքը) ընդունող երկսեռ հայորդիներ: Կազմակերպության միավորը Ուխտն էր, որն ուներ առնվազն յոթ անդամ: Ցեղակրոն Ուխտերի ղեկավար վերին մարմինը Կենտրոնական վարչությունն էր, որն ընտրվում էր Պատգամավորական ժողովի կողմից. վերջինս գումարվում էր տարին մեկ անգամ: Կենտրոնական վարչության նիստերին մասնակցում էր Յ.Յ.Դ. ԿԿ-ի որեւէ անդամ՝ մեկ ձայնի իրավունքով:

Ուխտերը կազմակերպում էին ընկերական հավաքույթներ, Չայոց պատմության նյութի վրա՝ ցեղային ինքնաճանաչմանը նպաստող ասուլիսներ, ինչպես նաեւ՝ մարզանք, զբոսանք եւ այլն: Ուխտերի ժողովներին կամ հավաքույթներին հայերենը պարտադիր էր:

Ուխտերի ներսում առկա էր խիստ կարգապահություն:

Ուխտակիցների միջեւ գործում էր «*Բոլորը մեկի եւ մեկը բոլորի համար*» սկզբունքը:

Ցեղակրոն Ուխտերը ներդաշնակ հարաբերություններ էին պաշտպանում Չայկական Կարմիր Խաչի, Յ.Յ.Դ. Ուսանողական

միության եւ նման այլ հաստատությունների հետ, որոնք համակրում էին Յեղակրոն շարժմանը:

Ուխտերի նշանաբանն էր. **«Հայաստանը՝ հայերին»**

Կազմակերպության պաշտոնական տոներն էին՝ *Յեղակրոնության օրը*՝ հունվարի 14-ը (11), *Դրոշակի օրը*՝ օգոստոսի 10-ը:

Յեղակրոնները պարտավոր էին նաեւ մասնակցել՝ Հայոց սգատոնին՝ ապրիլի 24-ին, Հայաստանի անկախության օրվան՝ մայիսի 28-ին, Դաշնակցության օրվան՝ հոկտեմբերին (12):

Ուխտերի խորհրդանշանն առյուծն էր:

Յեղակրոն Ուխտերի առաջին Պատգամավորական ժողովում *«Հառաջ, նահատակ»* հայտնի քայլերգը (խոսք՝ Գ. Կառավարենցի, երաժշտություն՝ Բ. Կանաչյանի) ժամանակավոր ընդունվեց՝ իբրեւ կազմակերպության քայլերգ, իսկ *«Հայրենիք»* անգլերեն շաբաթերթը՝ իբրեւ ցեղակրոնների օրգան:

«Հայրենիք» շաբաթաթերթը (*«Hairenik Weekly»*) հրատարակվում էր 1934թ.-ի մարտից՝ նպատակ ունենալով ամերիկահայ նոր սերնդին զոնե անգլերեն լեզվով ծանոթացնել իր ազգի պատմությանը, մշակույթին, զերծ պահել նրան օտարացումից: «Անոր օգնությամբ էր, որ Գարեգին Նժդեհը, որ անգլերեն բնավ չէր գիտեր, իր խանդավառությամբ եւ մազմիսական շունչով կրցավ ազդել մեր նոր սերունդի վրա եւ մեկ ընդհանուր կազմակերպության դրոշի տակ հավաքել հոս ու հոն գոյություն ունեցող *«Հայորդիներու»* խումբերը, ինչպես եւ՝ նորեր կազմել: Առանց *«Հայրենիք Ուիքլիի»* հոգեբանորեն հող պատրաստելուն, անկարելի պիտի լիներ, հարկավ, մեր նոր սերունդի ընդհանուր կուռ կազմակերպությունը... Այլապես անգլերեն չխոսող Գ. Նժդեհը իր տպավորիչ հռետորությամբ եւ զեղեցիկ հայերենով չպիտի կրնար երբեք խանդավառություն ստեղծել մեր նոր սերունդին մեջ», - գրում է Ռ. Դարբինյանը (13)՝ մի փոքր գերազմահատելով այդ շաբաթաթերթի դերը:

ԱՄՆ-ում Յեղակրոն շարժման կենտրոնը Բոստոնն էր: Յեղակրոն Ուխտերը գործում էին նաեւ Չիկագոյում, Դիտրոյտում, Ֆրեզնոյում եւ Ամերիկայի հայաշատ այլ վայրերում: Դրանք մասնաճյուղեր ունեին Բուլղարիայում (Սոֆիա, Պլովդիվ, Վառնա,

Բուրգաս եւ այլն), Յունաստանում, Ֆրանսիայում, Ռումինիայում եւ այլուր:

Իսկ ինչո՞ւ Նժդեհը Ցեղակրոն կազմակերպությունը կոչեց ուխտ եւ ոչ, ասենք, խումբ: Դիմենք իրեն. *«Մեր ժողովրդի բոլոր մեծագործությունները արդյունք են իր որոշ գավակների ուխտվածության: Վաղը քաջաբար կռվելու պատրաստ զինվորներ կունենա միայն նա, ով այսօր ուխտ ունի. այս հասկացողությամբ ժամանակին ես ծնունդ տվի «Դավիթբեկյան ուխտ»-երին, որոնք լիուլի արդարացրին իրենց անունը վտանգի ու պարտականության ճակատի վրա: Միեւնույն հոգեբանական հաշիվներով «ուխտ» անվանեցի նաեւ Ամերիկայի մեր ցեղակրոն միավորները... Չկա ավելի անպիտան իմացական էակ, քան ուխտագուրկ հայ մարդը: Անուխտ հայ, ասել է՝ անոգի, իսկ անոգի հայ, ասել է՝ աննվեր, անարի, անզոր» (14):*

1934 թվականի աշնանը Նժդեհը ԱՄՆ-ից վերադարձավ Բուլղարիա՝ նպատակ ունենալով ընդլայնել Ցեղակրոն շարժումը եւ այն դարձնել համահայկական, համագաղութային: Նա գտնում էր, որ հայրենատիրական այդ շարժման մեջ «վերանորոգվելով միայն պիտի միանան հայության բոլոր հատվածները» (15): Այս առիթով, Բուլղարիայի Ցեղակրոն կազմակերպության գործուն անդամներից Օնիկ Ջարմունին 1936թ.-ին գրում էր, թե «պետք է ստեղծել ընդհանուր մի կենտրոն եւ հայ պատանեկությունն ու երիտասարդությունը դաստիարակել ու ղեկավարել համացեղային սկզբունքներով ու ոգիով», եւ ապա՝ եզրակացնում. «Մեզի կթվի, թե պատմությունը այդ դերը վերապահած է Ցեղակրոնության: Չկա՛ ավելի ընդհանուր արժեք եւ գաղափար, քան ցեղը: Չունինք ավելի կենսունակ մի կազմակերպություն, քան Ցեղակրոն ուխտերը: Կմնա, որ ցեղակրոնությունը իր մեջ ձուլել է մշակութային ու մարզական բոլոր միությունները եւ դառնա հայ երիտասարդության համահայկական շարժումը» (16):

Հետաքրքիր են նաեւ Ջարմունու դատողությունները Ցեղակրոնություն-Դաշնակցություն հարաբերությունների խնդրի վերաբերյալ, որն այդ տարիներին բավական կնճռոտ էր. *«Ինչ որ էլ ասվի ու գրվի, որքան էլ ժանգոտ սլաքներ ուղղվին նոր շարժումի հասցեին, սա արելի պես պայծառ ճշմարտություն է, որ ցեղակրոնությունը ո՛չ*

միայն հայության եւ Չայաստանի դատին, այլ նաեւ զանոնք հետապնդող մեր կուսակցության համար բացարձակ անհրաժեշտություն է: Եւ ճշմարիտ դաշնակցականությունը սկիզբեն իսկ եղած է եւ մինչեւ հավիտյան պիտի մնա հայ ժողովուրդի ցեղային ուխտը: Ուրիշ կարգի սովորություններ ո՛չ հայոց պատմությունը կրնա հանդուրժել, ո՛չ ալ դաշնակցական ուխտի նահատակներու սրբազան հիշատակը» (17):

Սակայն, Նժդեհի հարաբերությունները Յ.Յ.Դ. ղեկավարության հետ սրվեցին այն աստիճան, որ 1937թ.-ին նա խզեց իր կապերը կուսակցության հետ, ինչը զգալիորեն անդրադարձավ նաեւ Ցեղակրոն շարժման հետագա ընթացքի վրա:

Դեռ 1934թ.-ին Նիկոլ Աղբալյանը Բեյրութից գրում էր ԱՄՆ-ում գտնվող Նժդեհին. «Ցեղակրոնության շարժումը, որ այդպես հաջողությամբ կժապալի քո խոսքի հմայքով, պիտի կարողանա՞ տեսել, երբ դու թողուս Ամերիկան: Մարգարեն աշակերտներ ունի՞, որ պահեն ոգին եւ ուրեմն գործը» (18): Ցավոք, Աղբալյանի մտավախությունը արդարացավ, եւ Ցեղակրոն շարժումը ԱՄՆ-ում՝ Նժդեհի Յ.Յ.Դ-ից հեռացումով, սկսեց տեղատվություն ապրել: Իսկ 1941թ. հուլիսին, Չիկագոյում գումարված ամերիկահայ Ցեղակրոն Ուխտերի 8-րդ Պատգամավորական ժողովը որոշեց կազմակերպությունը վերանվանել «Ամերիկայի Չայ երիտասարդաց դաշնակցություն»: Վերանվանումը բացատրվում էր նրանով, որ իբր ցեղակրոնների հակառակորդները ամերիկյան շրջանակներում տարածում էին, թե նրանք նացիստական ցեղապաշտության դավանակիցներ ու գործակիցներ են եւ, միաժամանակ, դժվար էր օտարներին բացատրել «ցեղակրոն» բառի նշանակությունը:

Այս անվանափոխությունը վերաբերում էր միայն ամերիկահայ ցեղակրոններին, իսկ այն վայրերում, ուր Նժդեհի ազդեցությունը մեծ էր (հատկապես Բուլղարիայում, որտեղի կառույցն ամենաուժեղն էր), Ցեղակրոն կազմակերպությունները, այդ անունով՝ գործեցին մինչեւ Նժդեհի ձերբակալությունը՝ 1944թ.-ը:

Բ) ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆ

***«Ես կարդացի ցեղիս թողած
աստվածային հետքերը երկրագնդի վրա,
տեսա, համբուրեցի, պաշտեցի
- ես դարձա ցեղակրոն»***

Ցեղակրոն շարժման գաղափարաբանությունը Ցեղակրոնությունն է:

Անշուշտ, Ցեղակրոնությունը գաղափարական դատարկության վրա չէր ստեղծվում: Դրան նախորդել էին Ալիշանի, Ռաֆֆու, Պատկանյանի, Վարուժանի, Ահարոնյանի եւ այլոց ցեղաշունչ գաղափարները: Սակայն նրանք տվել են գաղափարներ, բայց ոչ՝ գաղափարախոսություն: Նժդեհին էր վիճակված, խտացնելով ու ամփոփելով իր մեջ մինչ այդ եղած Հայ ցեղային միտքը, համակարգելով ու ամբողջացնելով այն, հիմք դնել հայկականորեն հիմնավորված՝ Հայի էության եւ բարոյականի վրա կառուցված մի ուսմունքի, որը կոչեց Ցեղակրոնություն: Ցեղակրոնության գաղափարները ծնունդ չառան գաղթաշխարհում, այլ՝ բերվեցին Հայրենիքից, որի լեռներում կյանքի կոչվել ու հաջող քննություն էին բռնել դրանք 1919-21թթ.-ին՝ Դավիթբեկյան Ուխտի ձեռով: «Հանձին մեր Դավիթբեկյան ցեղապահ ուխտերի՝ 1920-ին գործեց ու հաղթանակեց ցեղակրոնությունը», - գրում է Նժդեհը (19):

Նժդեհն իր ուսմունքը խարսխեց այն աստվածային ուժ-էության վրա, որ կոչվում է «Հայ ցեղ»: Եվ Ցեղակրոնությունը, առաջին հերթին, այդ ուժ-էությունից սերված լինելու, ասել է՝ Հայ ծնված լինելու գիտակցումն ու հպարտությունն է, այդ ծնունդին անմնացորդ նվիրվելու եւ ցմահ հավատարիմ մնալու ուխտը:

Նժդեհի համար՝ «ցեղ» հասկացության՝ մարդաբանության տված սահմանումներից «եւ ո՛չ մեկն է ընդունելի»: Առհասարակ, ըստ նրա, «դժվար է դա սահմանել գիտական լեզվով. այստեղ միայն

հարաբերական գիտականության մասին խոսք կարող է լինել»։ Նժդեհին «բավական չեն հին եզրերը (տերմինները)», քանզի «ներանցով չի կարելի սպառել ցեղի ողջ տարողությունը»։ Ըստ նրա ընդհանրացումների՝ «ցեղն ավելի՛ հոգի է, քան՝ կավ (իմա՛ նյութ-Մ. Լ.)» (20)։

Այն նախաստեղծ է եւ գոյություն ունի արարչագործության սկզբից. «Ցեղը նախագո է Աստծո նման» (21)։ «Նա ժամանակների վկան է, հավիտենական հայը, Աստծո գործակիցը» (22)։

Ցեղը Ոգու եւ Արյան միություն է, հոգեկան խառնվածք ու կենսաբանական կազմվածք, միաժամանակ. այն անկրկնելի հոգեկանն ու անխառն մարմնականը, որ մարդկային տեսակը (իմա՛ էթնոսը) դարձնում է ինքնատիպ եւ, որով տեսակները տարբերվում են իրարից (23)։ Այս ինքնատիպության պահպանման ու հավիտենականացման ճիգն է Ցեղակրոնությունը - հայորեն ապրելու եւ հարատեւելու տենչ, մղում։

Ցեղակրոնության հիմքում ընկած են երկու հիմնարար սկզբունքներ՝

ա) մեր դժբախտությունների համար մեղավոր ենք նախ եւ առաջ մենք,

բ) մեզ պետք եղած ուժը փնտրենք մեր մեջ։

Ցեղակրոն ուսմունքը կառուցված է հետեւյալ տրամաբանական հաջորդականությամբ. **«Էս ճանաչում եմ իմ ցեղը, ես հավատում եմ իմ ցեղին, ես պաշտում եմ իմ ցեղը, ես ցեղակրոն եմ»** (24)։

Յուրաքանչյուր աշխարհայացքային ձեւ, լինի դա դիցաբանություն, կրոն, թե փիլիսոփայություն, սկսվում է ճանաչողությունից։ Ցեղակրոնությունը սկսվում է Ցեղի ճանաչումով՝ ճանաչումը Ցեղի պատմության, մշակույթի, կենցաղի, ճանաչումը նրա արժեքների ու արժանիքների, նրա ներկայի ու ձգտումների, ճանաչումը համաշխարհային քաղաքակրթության մեջ Հայ ցեղի բերած պատկառելի ավանդի։

- Ցույց տվեք ժողովրդին իր ցեղի արեւդեմքը, որ նա ինքնատեսությամբ բարձրացնե իր խոնարհ ճակատը,- ասում է Նժդեհը՝

համոզված, որ իր արժեքների ու առաքինությունների ճանաչումով է ժողովուրդն ընդունակ հոգեփոխումի եւ որ դրանում է մտավորականության, գրականության, նաեւ, հեղափոխական շարժումների դերը (25):

Ցեղաճանաչողությունը, նաեւ, մեր ցեղային թերությունների ճանաչումն է, եւ Ցեղակրոնությունը դրանց սրբագրման՝ ցեղային վերաշինության լուրջ փորձ է:

Եվ պատահական չէ, որ Նժդեհը Ցեղակրոնության սուրբ գիրք է համարում «*Հայոց Պատմությունը - Ցեղի կյանքի գիրքը*», որը ցեղաճանաչումի, ինչպիսիքն աճանաչումի գլխավոր աղբյուրն է:

Ցեղակրոնությունը անհատի ինքնաճանաչումը բխեցնում է ցեղաճանաչումից, քանզի «ճանաչի՛ր ինքդ քեզ» կնշանակի՝ ճանաչի՛ր նախ քեզ ծնող հավաքականությունը, այսինքն՝ Ցեղդ, որի ընդհանրական հատկանիշները պայմանավորում են քո անհատական կերտվածքը:

Ճանաչի՛ր Ցեղդ. սա Ցեղակրոնության պատգամն է հայ նոր սերնդին:

Ցեղի ճանաչումից է բխում *ցեղահավատությունը* - հավատը մեր ցեղի ուժի, հանճարի, նրա կամքի ու կարողությունների, նրա ապագայի ու հավիտենականի նկատմամբ:

Հավատալ Ցեղին, կնշանակի՝ ունկնդիր լինել նրա ձայնին, հաղորդակցվել նրա հետ, լինել *ցեղահաղորդ*: Դա ասել է՝ հաղորդակից լինել Ցեղի ուժին ու հանճարին, նրա ցավին ու հրճվանքին, դժբախտություններին ու մեծագործություններին: Վտանգի պահին Ցեղի ձայնը, մռնչո՛ցը լսելու ու դրան հետեւելու կամքն է ցեղահաղորդությունը:

Ցեղահաղորդությամբ թելադրված՝ Ցեղակրոնությունն անհատից պահանջում է անխախտ միություն իր Ցեղի հետ՝ վերջինիս ճանաչելով որպես գերագույն ծնող: Այս առումով, նա ընտանիքը դիտում է որպես միջոց՝ Ցեղի հզորացման համար եւ գտնում, թե ընտանիքի զավակներն ավելի պատկանում են Ցեղին՝ գերագույն ծնողին, քան անմիջական ծնողներին:

Հաղորդակից լինել Ցեղին, կնշանակի՝ նրանով որոշել քո անհատական երջանկությունն ու ազատությունը:

Ցեղակրոնությունը Ցեղի հավաքական բախտավորությամբ է պայմանավորում անհատի բաղձալի երջանկությունը, որ է՝ *«տեսնել թե ինչպե՛ս աճում է իր ժողովրդի զորությունը եւ արդարորեն ընդարձակվում է Հայաստանը»* (26):

Ըստ Ցեղակրոնության, անհատի ազատության եւ նրա՝ որպես անհատականության ինքնադրսեւորումի մեծագույն չափը, «ամենաբարձր արարքը»՝ հնազանդվելն է Ցեղին: Այլ խոսքով, անհատն ազատ է այնքանով, որքանով չի հակադրվում Ցեղի շահերին եւ չի վնասում նրա բարոյականը, եւ նրա ինքնադրսեւորումը չպետք է վերածվի ցեղամերժ եսականության:

Որպես Ցեղի ապագայի նկատմամբ հավատ սերմանող բարոյախոսություն, Ցեղակրոնությունը չի քարոզում անգոր ճակատագրապաշտություն, այլ պարտավորեցնում է՝ պայքարով կերտել այն մեծ ճակատագիրը, որին արժանի է Ցեղը:

Ցեղակրոնության էական մասն է կազմում *ցեղապաշտությունը* - պաշտամունքը Ցեղի որակների, արժեքների ու սրբությունների:

Հայրենապաշտություն

Դա նվիրական պաշտամունքն է այն հողի, որի վրա բնականորեն առաջացել է Հայ ցեղը, որի վրա նա կերտել է իր պատմությունը եւ ստեղծել իր մշակույթը, որում ամփոփված են իր զավակների աճյունները եւ որի սիրո ու ազատության համար զոհաբերվել են մեր մեծ մեռելները:

Արյան պաշտամունքը

Ցեղակրոնության մեջ Ցեղի արյունը աստվածություն է, քանզի սրանով է նաեւ պայմանավորված Ցեղի հոգեմարմնական կերտվածքը: Ցեղակրոնությունը քարոզում է պաշտամունք Ցեղի արյան նկատմամբ, որի անարատության մեջ է տեսնում մեր ցեղի ապագան: Այլ խոսքով, Ցեղակրոնությունը մերժում է խառնացեղ ամուսնությունները:

Լեզվի պաշտամունքը

Լեզվի հարցում Ցեղակրոնությունն անզիջում է. նա Հայից պահանջում է՝ հայ մարդու հետ խոսել հայերեն, հիշեցնելով, թե լեզվի մահը արագացնում է ժողովուրդների հոգեւոր մահը: Այդ մտահոգությամբ՝ նա պահանջում է պաշտամունք դեպի մայրենի լեզուն, որի մաքրությամբ եւ իմաստավորմամբ (27) է պայմանավորված մեր ցեղի հոգեւոր ապագան:

Ձոհապաշտություն

Դա պաշտամունքն է մեր ցեղի սրբազան մեռելների, «որոնք առյուծացան իրենց արիության մեջ, աստվածացան իրենց հոյակապ նվիրումի մեջ, որոնք իրենց արյունը շռայլեցին մեր ցեղի գոյությունը եւ պատիվը հավիտենականացնելու համար» (28):

Նախնիապաշտություն

Ցեղակրոնությունը մեծագույն վատություն է համարում հոգեւոր խզումը հին ու նոր սերունդների միջեւ, որով խախտվում է Ցեղի երեկվա ու վաղվա օրգանական կապը: «Նորահաս սերունդը կտրվե՞ց անցնող կամ անցած գնացած սերունդներից՝ նա էապես կտրվում է մինչ այդ գոյություն ունեցող Ցեղի արժեքներից ու սրբություններից... Հին սերունդից կտրվողը դառնում է հոգեպես անհող եւ անուղի: Էականը հոգեհաղորդակցությունն է սերունդների միջեւ, որի շնորհիվ վերջինները փոխանցում են Ցեղի հավիտենական բոցը...» (29):

Հոգեհաղորդակցվել, ասել է՝ «պատմական հիշողությամբ վերապրել անցյալ սերունդների կյանքը՝ նրանց ճակատագրին կապելով մերը» (30):

Ցեղակրոնության մեջ հատկապես առկա է խորին ակնածանք դեպի Մամիկոնյան ռազմաշունչ ասպետները (31): «Ով այս կամ այն չափ ծանոթ է Հայոց պատմությանը, անմիջապես կհասկանա, որ Ցեղակրոն շարժումը, որպես ուխտ, նման է Մամիկոնեից ասպետների Ուխտին: Մամիկոնյանների պես, ցեղակրոնը դավանում է՝ ազգին անչափանդիր նվիրվածություն եւ հանուն Հայրենիքի մահը քաջաբար ընդունելու վճռականություն» (32):

Ուժապաշտություն

Ցեղակրոնությունը քարոզում է ուժի՝ պաշտամունք, քանզի աշխարհը ճանապարհ է տալիս ուժեղներին՝ հոգով, մտքով եւ բազկով ուժեղներին. հաղթում է ուժեղը եւ ո՛չ արդարը:

- Ավելի՛, է՛լ ավելի զորություն,- նշանաբանում է Ցեղակրոնությունը (33), ձգտելով աշխարհ բերել զորության մարդուն - վահագնապաշտին՝ ուժապաշտ եւ արիապաշտ, որի մոտ մշտակա է ծարավը ուժի, արիության, ճիգը՝ կատարելագործումի եւ կամքը՝ զոհաբերության:

Առաջնորդապաշտություն

Ցեղակրոնության մեջ պաշտամունքի է ենթակա նաեւ Ցեղի ճշմարիտ առաջնորդը, որի աջն է գծում ճակատագիրն ազգերի, որին են պարտական ազգերն իրենց վերելքներն ու անկումները: Եվ Ցեղակրոնությունը պահանջում է՝ հնազանդվելով Ցեղի կամքին՝ գիտենալ հնազանդվել նաեւ Ցեղի առաջնորդին, որ կրողն ու ուսուցիչն է ցեղային բարոյականի:

Ցեղակրոնությունը գերագույն սրբություն է ճանաչում Ցեղին եւ հռչակում. «Չայ կոչվելու արժանի չէ նա, ո՛վ մեր երկրագնդի վրա հայ անունից ավելի մի այլ բան է սիրում» (34):

- Եղի՛ր Չայ, նա՛խ Չայ,- պատգամում է Նժդեհը,- որովհետեւ Չայն իր պատմության մեջ ավելի մարդ եղավ, քան Չայ մարդ, եւ, այդ իսկ պատճառով, նրա ողբերգությունը եղավ անօրինակ... (35)

Ցեղակրոնությունը չի՛ ընդունում միայն կույր բնագրի կամ զուտ տրամաբանության վրա հենված ցեղապաշտություն, ցեղասիրություն: Նա կողմնակիցը չէ նրանց, «որոնք ցեղը սիրում են իրենց զգացումի ուժով, բայց մտքի տկարությամբ, ինչպես եւ նրանց, որոնք սիրում են մտքի ուժով, բայց կամքի տկարությամբ»: Նա ջատագովն է նրանց, «որոնք ցեղը սիրում են իրենց անհատականության բովանդակ ուժով՝ մտքի, զգացումի եւ կամքի բովանդակ թափով» (36):

Ցեղի արժեքների ու առաքինությունների իմացությունից, դրանց նկատմամբ ակնածանքից, պաշտամունքից է ծնվում անհատի ցեղային (ազգային) հպարտությունը: «Բարոյապես սնանկ է անհատը, երբ

նրան պակասում է ազգային հպարտանքի զգացումը - ծնունդ՝ ազգային ինքնաճանաչության, որ իր սնունդը առնում է մեր պաշտամունքից դեպի այն ամենը, ինչ որ գեղեցիկ է, վսեմ եւ հերոսական Չայրենի Պատմության մեջ» (37):

Հպարտանքի հետ կապված՝ Ցեղակրոնության մեջ կա մի էական խորհուրդ եւս. դա Ցեղի տիտանական ցավի, նրա դարավոր տառապանքի ու ամոթանքի վերապրումն է: Եվ Նժդեհը համոզված է, որ այդ ավրումից պիտ վերագարթնի մեր նվաստացած հպարտությունը եւ ծնունդ առնի մեր նոր՝ հպարտության կրոնը: Եվ այնժամ աշխարհ կգա ցեղի ցավից ցնցված, «սեփական տառապանքի մեջ մկրտված» ՆՈՐ ՀԱՅԸ (իմա՝ ցեղակրոն Չայրը)՝ «ցեղային բարոյականով մյուռոնված», որ կոչված է հաղթահարելու մեր տկարությունները եւ «վերականգնելու մեծությունը Չայ անունի» (38):

Ըստ այդմ, Ցեղակրոնությունը աշխարհի անիրավությունից վիրավորված, այդ աշխարհից զարնված ու անարգված Չայ հոգու ահեղ զայրույթն է: Դա պոռթկումն է ստրկության դարավոր քնից արթնացած Չայի, որի տառապանքից ու հալածանքից փոթորկվել է նրա խոցված հպարտությունը:

Անիմաստ պիտի համարել Ցեղի նկատմամբ հավատը, ցեղապաշտությունը, ցեղային հպարտությունը, եթե այդ ամենը վերացական են, դատարկախոսություն ու չեն դրսեւորվում իրական կյանքում եւ անհատական վարքում: Ճանաչելով Ցեղի արժեքներն ու բարոյականը, անհրաժեշտ է նաեւ կրել դրանք, ապրել դրանցով՝ ապահովելով մտքի, խոսքի ու գործի ներդաշնակությունը: Իսկ ապրել Ցեղի ձգտումներով, նրա արժեքներով ու բարոյականով, դրանք կենսածեւ դարձնել մեզ համար, կնշանակի՝ կրել մեր մեջ Ցեղը, լինել *ցեղակիր-ցեղակրոն*:

Այստեղից էլ, մեր կարծիքով, Նժդեհի կողմից ցեղ եւ կրոն զոյականների միացումով՝ «ցեղ-ա-կրոն» բառի ընտրությունը (39): Ցեղակրոն լինել, ասել է՝ կրել քո մեջ Ցեղը (կրոն բառի արմատը «կրել»-ն է (40). հայերենում մենք ունենք նման կարգի այլ բառեր եւս՝ հոգեկրոն, խաչակրոն, մոլեկրոն, մյութակրոն, մաքրակրոն, խստակրոն, կուսակրոն), Ցեղի որակները, բարոյականը, կրել քո մեջ այն

ամեն ցեղային-հայկականը, որն առկա է մեր պատմության ողջ ընթացքում: «Ցեղակրոն է նա, ո՛վ ապրում է ցեղորեն՝ ցեղի կյանքով եւ ցեղի համար» (41):

Պարզ է դառնում նաեւ, թե ինչու է Նժդեհը «ազգասիրություն», «հայրենասիրություն» եւ նման կարգի այլ բառերի փոխարեն, նախընտրել «ցեղակրոնություն»-ը: Ցեղակրոնությունն ավելին է, քան ցեղապաշտությունը կամ հայրենապաշտությունը. այն վերջիններս ներառում է իր մեջ:

Նոր բառ, բայց հին էություն: Եվ, ըստ այդմ, Ցեղակրոնությունը, որպես Հայ ցեղի էության արտահայտություն, դրսեւորում, նույնքան հին է, որքան ինքը՝ Հայ ցեղը:

ՆԵՐՑԵՂԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Ազգային միասնության միակ գրավականը, ըստ Ցեղակրոնության, *Ներցեղային բարոյականով* առաջնորդվելն է, երբ ազգի անդամները, երկրորդական համարելով կրոնական եւ քաղաքական իրենց անհատական համոզումները, միավորվում են Հայ լինելու հանգամանքով: Այդ եսամերժ բարոյականը յուրաքանչյուր հայից, որին անտարբեր չէ հայության ապագան, պահանջում է մեծագույն զոհողություն՝ հանուն Հայ ցեղի ու Հայաստանի գալիքի՝ զոհաբերել իր ԵՍ-ը: Եվ Ցեղակրոնությունը, որն ունի Ցեղն ամեն բանից վեր դասելու անխախտ սկզբունք, հայության տարանուն հատվածներին ու անհատ հայորդիներին պատվիրում է՝ առաջին հերթին լինել՝ Հայ. մնալ հպատակն ու մարտիկը Ցեղի, անկախ կուսակցական կամ կրոնական համոզմունքից, ընկերային դիրքից եւ աշխարհում գտնվելու վայրից:

Այդպիսով, Ցեղակրոնությունը ձգտում է ապահովել մեր ներքին համերաշխությունը եւ հաշտեցնել հայության տարբեր շերտերը, քանզի «առանց գերագույն հաշտարարի, որպիսին է Ցեղը, գերեզմանի հողը միայն կարող է հաշտություն պարտադրել օրվա ոգեսպառ հայությանը» (42): Եվ Նժդեհը հավատացած է, որ Ցեղակրոնության

չնչով կարող է ծնվել ներցեղային բարոյականով առաջնորդվող այն մի հատիկ սերունդը, որն անհրաժեշտ է Ցեղի վաղվա առաջնորդին՝ ապահովելու համար հայ ժողովրդի տեղն արելի տակ:

Որպես վերկուսակցական ուսմունք, որը հետամուտ է քաղաքական միադավանության, Ցեղակրոնությունն անհաշտ է կուսակցամոլության հետ: Ապրելով մի ժամանակաշրջանում, երբ կուսակցականացվում էր ամեն մի ազգային սրբություն, Նժդեհը, վեր կանգնած եսակենտրոն կուսակցականությունից, վստահորեն ավետում էր. *«Չկան կուսակցական նահատակներ ու հերոսներ, կան ու կմնան ազգային մարտիրոսագրությունը եւ հերոսականը»* (43):

ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅՐԵՆԱՏԻՐԱԿԱՆ ՈԳՈՐՈՒՄ ԵՎ ՎՐԻԺԱԿՆԵՐԻ ԴԱՐԲՆՈՑ

«Լոզա՞նը - ո՛չ, երբեք» կարգախոսը զարդարում էր Ցեղակրոն Ուխտերի առաջին Ծրագիր-Կանոնագրի տիտղոսաթերթը: Ցեղակրոնների համար՝ Հայկական հարցը չէր վերջանում Լոզանի թուրքանպաստ պայմանագրով, եւ նրանք շարունակում էին մնալ Թուրքիայի պարտատերերը:

- *Մի ժողովրդի հայրենի հողը չի՛ կարող ուրիշի մնայուն Հայրենիքը դառնալ... Մնայուն Արդարության Օրենքի ուժով՝ բռնագրաված երկրամասերը միշտ էլ, վաղ թե ուշ, անցնում են իրենց պատմական տերերի ձեռքը՝ պայմանով, որ այդ վերջինի մեջ ժամանակը տկարացրած չլինի սերը, կարոտն ու պաշտամունքը դեպի Հայրենի Երկիրը,-* ասում է Նժդեհը (44)՝ համոզված լինելով, որ Հայկական հողերի վերանվաճումը հնարավոր է միայն սեփական արյամբ, քանզի միայն հայ զինվորի արիությամբ ու հայրենապաշտությամբ զծված Հայաստանի սահմանները կարող են լինել կայուն եւ իրական:

Ցեղակրոնությունը, այդպիսով, հայրենատեր դառնալու կամք է. դա տարագիր հայի, մեծահարուստ թե օրավարձով աշխատող բանվոր, դեպի Երկիր դարձի սրբազան ուխտն է:

Այն նաեւ վրեժխնդրության պարտավորություն է, թուրքին չներե-

լու պատգամ եւ, ըստ այդմ, վրիժակների դարբնոց, ուր «ամեն մի հայ զոհի փոխարեն աշխարհ կգան երկու նոր վրիժակներ» (45):

Թուրքից վրեժխնդիր չլինել՝ նշանակում է ներել. իսկ «նրան մի հանցանք ներել, ասել է՝ երկու նորերը արտոնել» (46): Ցեղակրոնությունը պահանջում է՝ աններում վրեժ թուրքից, անողոք դատաստան այդ արնապարտ ցեղի նկատմամբ, որ սպանիչը հանդիսացավ հայության կեսի: Այդ թշնամանքն այլեւս պատմական չէ, այլ՝ կենսաբանական:

ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՏԱՐ ՑԵՂԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաճախ, միամիտ կամ միտումնավոր կերպով, Ցեղակրոնությունը որակվում է որպես փոխառյալ ֆաշիզմ կամ նացիզմ:

Երբ 1933թ.-ին, Ղ.Յ.Դ. Ընդհանուր ժողովում Նժդեհին հարցրին՝ արդյոք իր քարոզածը ֆաշիզմ է, թե՞ հիտլերիզմ, նա պատասխանեց. «Իմ քարոզածը այդ վարդապետություններից ո՛չ մեկն է. ես կփափաքեմ ի հայտ բերել մեր պատմական հին հերոսությունները եւ հայ մշակույթի ծալքերը, որոնք փոշիներու տակ մնացած են» (47):

Ֆաշիզմը ազգայնականության, ցեղապաշտության իտալական դրսեւորումն է, նացիզմը՝ գերմանական: «Գերազանցորեն հայկական է ցեղակրոնության գաղափարը: Այդ շարժումը կաղապարված է մեր ցեղի էության վրա: Դեռ խոսք չկար ֆաշիզմի եւ հիտլերականության մասին, երբ ցեղակրոնության գաղափարը 1919-ին ոտքի էր հանել մեր Դավիթբեկյան Ուխտերը Սյունյաց աշխարհում...» (48): Երբ Նժդեհի ուխտյալները արշավների ժամանակ սեւ պատանքներ էին կրում («պատանակրաց» արշավանք) եւ ցեղային առյուծացման ու հպարտության դասեր առնում իրենց սպարապետից, Մուսուլիմին դեռ նոր էր նախածեռնում «Սեւ շապիկավորների» իր շարժումը:

Նժդեհի ուսմունքի եւ հիտլերականության ընդհանրությունը հիմնականում միայն այն է, որ երկու դեպքում էլ, իբրեւ գերակա արժեք, հռչակված է տեսակը (ցեղը), ինչը բնորոշ է ցանկացած ազգայնական կամ ցեղապաշտական ուսմունքի: Սակայն, էականը

դրանց միջև առկա սկզբունքային տարբերություններն են, որոնցից կթվարկենք մի քանիսը:

Հիտլերը Արիական ցեղը (որի բնորոշումը նրա մոտ անստույգ է) հռչակում է միակ մշակութաստեղծ ռասա, իսկ մնացած ազգերին՝ իբրև ստորադաս տեսակներ: Նժդեհը զերծ է ընտրյալության կամ բացառիկության քարոզներից:

Հիտլերը, այսպես կոչված «կենսական տարածքների» անհրաժեշտությամբ, փորձում է հիմնավորել ծավալապաշտությունը, որը, անբնականորեն, դուրս է գալիս նաև հայրենիքի սահմաններից: Նժդեհը խնդիր է դնում մեր բուն հայրենիքի՝ Հայկական Բարձրավանդակի վերատիրումը:

Հիտլերը հրեաներին դիտում է իբրև մարդկության չարիք, մշակութակործան տեսակ, եւ հակահրեականությունը նրա ուսմունքի մեջ գրավում է առանցքային տեղ: Նժդեհի մոտ այն իսպառ բացակայում է: Նա Ցեղի թշնամի է հռչակում թուրքին, քանզի վերջինս, հայության մի մասի ոչնչացմամբ, տիրել է մեր հայրենիքի մեծ մասին:

Թերեւս, այսքանն էլ բավարար է՝ նկատելու Ցեղակրոնության եւ նացիզմի ակնհայտ սկզբունքային տարբերությունները:

Համոզիչ չեն նաև Համաստեղի այն խոսքերը, թե «իր (*հմա՝ Նժդեհի- U. L.*) ցեղային ըմբռնումն ու ներշնչումը առավելապես հրեա ժողովուրդեն կուգար» (49): Թեև Նժդեհը հարգալից էր արտահայտվում Սիոնականության (ինչպես եւ այլ հայրենատիրական, ազգայնական շարժումների) մասին, սակայն միանշանակ պնդում ենք, որ նրա ներշնչման աղբյուրը Հայ ցեղն է՝ իր ողբերգականով ու հերոսականով:

«Ցեղակրոն շարժումը ո՛չ մի ընդհանուր բան չունի եւ չէր էլ կարող ունենալ օտար վարդապետությունների հետ, քանզի նա, նախ եւ առաջ, բարեփոխիչ շարժում-վերածնունդ է, որը հնարավոր է միայն սեփական, այլ ոչ փոխառնված արժեքներով» (50):

Չկա՝ հայկական ֆաշիզմ կամ նացիզմ, կա՝ իտալական ֆաշիզմ, գերմանական նացիզմ, հրեական սիոնիզմ, կա՝ հայկական Ցեղակրոնություն:

* * *

Հաճախ, միանգամայն անհիմն, պնդվում է, թե իբր Նժդեհի ուսմունքը ձեւավորվել է Ֆ.Նիցշեի գաղափարների ազդեցությամբ: Նժդեհի ուժապաշտ մտածումները, նրա խոսքի վճռակային ոճը, իրոք, որոշ նմանություններ ունեն Նիցշեի իմաստասիրության հետ, սակայն կան աշխարհընկալման եւ բարոյախոսության սկզբունքային տարբերություններ:

Օրինակ, Նիցշեի փիլիսոփայության առանցքը անհատ-գերմարդն է, որը հանդես է գալիս իբրեւ *նպատակ*: Նժդեհի ուսմունքի հիմքը Ցեղն է, եւ ցեղամարդը *միջոց* է Ցեղի համար: Նիցշեն հակաքրիստոնյա է, մերժում է որեւէ զիջում քրիստոնեությանը եւ չի ընդունում որեւէ բարեփոխում նրանում: Նժդեհը քրիստոնեամերժ չէ եւ խնդիր է դնում Հայ եկեղեցու վերագնահատման: Նիցշեն նաեւ Աստվածամերժ է, իսկ Նժդեհն ընդունում է Աստծո գոյությունը:

- Հրի՛ր ընկնողին,- ասում է Նիցշեն:

- Չարժե եւ չի՛ կարելի օգնել ընկածին, եթե նրան պակասում է ինքնօգնությամբ ոտքի կանգնելու կամքը,- ասում է Նժդեհը (51):

Կարծում ենք, ասվածը բավական է՝ զերծ մնալու անհիմն եզրակացություններից:

ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՌՈՂՋ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ազգայնականության երկու ձեւերից՝ ազգայնական անհատապաշտություն եւ եսապաշտություն, ցեղակրոնը ողջունում է առաջինը, որն այլ բան չէ, եթե ոչ ազգ-անհատի արդար եւ արգասավոր ձգտումը՝ հավատարիմ մնալ իր ցեղի ոգուն, կատարելագործել իր պատմական տիպը եւ պաշտպանել իր հավաքական անձի ազատությունը: Ցեղակրոնի այդ ձգտումը լիուլի համապատասխանում է համամարդկային բարոյականի եւ առաջադիմության բարձր սկզբունքներին,- ասված է Ցեղակրոնության «Հավատամքում» (52):

Ցեղակրոնությունը յուրատեսակ զուգորդում, ներդաշնակում է ցեղայինի ու համամարդկայինի: Անկրկնելի ցեղայինը եւ օրինակելի մարդկայինը համադրաբար կազմում են Ցեղակրոնության հենքը:

Ցեղակրոնությունը չի՝ քարոզում թշնամանք դեպի մնացած ազգերը, բացառությամբ թուրքի, որին աներկբա հռչակում է Ցեղի թշնամի: Այն «բացառիկություն» ու «ընտրյալություն» շեփորող կույր ցեղամոլություն չէ՛, այլ՝ Ցեղի ինքնատիպությունը եւ անհատակա-նությունը հաստատող առողջ ազգայնականություն:

Նժդեհը «առողջ ցեղապաշտության քարոզիչն էր» (53):

ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐՈՆԸ

Ցեղակրոնությունը կրոն չէ: Այն գերազանցապես աշխարհիկ ուսմունք է, «իսկ եթե կրոն է դա, ապա դա կրոնն է ցեղային հպարտության, ուժի եւ արիության...» (54):

Նժդեհը հին հավատքին վերադառնալու կոչ չի անում (55), քանզի հասկանում է դրա միամտությունն ու հնարավոր վտանգավոր հետեւանքները: Այնուհանդերձ, նա չի՝ թաքցնում իր համակրանքը դեպի Չայոց հին կրոնը եւ մեր հեթանոս անցյալը: Լսենք իրեն. «Այս կամ այն ցեղը մոտավոր ճշտությամբ դիմագծելու համար, նրան պիտի դիտել իր հոգու հայելիի՝ իր կրոնի մեջ... Իր մտա-բարոյական զարգացման չափով, ցեղն իր կրոնի մեջ դնում է իր հոգեբանական գծերը, իր աշխարհզգացությունը, իր բնազանցական էությունը: Չայը լինելիական է,- հաստատում է հայոց հեթանոս կրոնը: Լինելիական է հայը - ահա՛, ակն ու աղբյուրը մեր մեծ Չույսի ու Ջորույթի» (56):

Նա հիացմունքով է խոսում «մախաբրիստոնեական հայու անգերազանցելի մարդկայնության եւ բարձրորեն ասպետական ոգու մասին»: «Վահագնա-Անահտական Չայաստանում ես տեսնում եմ այնպիսի հոգեգծեր, առաքիներություններ, որոնք պիտի բաղձալ մեր՝ որքան գոռոզ, այնքան հոգեպես աղքատ ու տմարդի դարա-շրջանին» (57):

Նա տեսնում է նաեւ հեթանոս հայի հոգեւոր կերպարի համա-մարդկային արժեքը եւ գտնում, որ նրա «մարդկայնացուցիչ

գաղափարներով պիտի թթխմորել Արեւելքի հոգեւոր հացը» (58):

Նժդեհը հակաքրիստոնյա չէ, բայց նաեւ Քրիստոսի ուսմունքի մոլեռանդ պաշտպանը չէ. մեզ նույնիսկ համարում է «զոհը քրիստոնեական բարոյախոսության, որ շարունակում է մնալ որպէս ներկ եւ շպար, որպէս քող եւ դիմակ ուժեղների հոգու համար» (59): Նա հարգում է Նազովրեցու անձը՝ իբրեւ գաղափարի հերոս, իբրեւ Աստվածամարդ, սակայն համարում է նրան ցնորապաշտ (*ուտոպիստ - Մ. Լ.*), իսկ նրա խոսքը՝ վսեմ, բայց թյուրըմբռնման, ավելի շուտ՝ տառացի ընկալման դեպքում՝ վտանգավոր:

Առհասարակ, հետաքրքիր են Քրիստոսի անձի՝ մժդեհյան արժեւորումները. «Քրիստոսը սիրում էր, որովհետեւ ուժեղ էր, նա սիրում էր, որովհետեւ սիրելու եւ ներելու չափ հզոր էր... Նա զոհաբերեց, որովհետեւ գաղափարի հերոս էր: Միայն արին, քաջը, միայն հերոսը կարող է զոհաբերել» (60): Կամ՝ «Վերացնելով մահվան ու կյանքի միջեւ գոյություն ունեցող անջրպետը, Նազովրեցին ժխտեց մահը, որով եւ հանդիսացավ հավիտենական սերմնացանը ոգու հսկաների՝ սրբերի, նահատակների, հերոսների» (61):

Ուշագրավ է նաեւ քրիստոնյայի՝ մժդեհյան ըմբռնումը. «Քրիստոնյան նա՛ չէ, ով քրիստոնեական վարդապետության տարերքը սխալ է հասկացել, ընկել նախապաշարումների ցանցի մեջ եւ տկարացել կորչելու աստիճան, այլ նա՛, ում մեջ մի քիչ *քրիստոսություն* կա - մի կայծ ամենահզոր Աստվածամարդու հոգուց» (62):

Նժդեհը ոչ թե հարց է դնում Յայ եկեղեցու վերացման, որը «սխալ է ըմբռնել քրիստոնեական սիրո խորհուրդը եւ դրա հետեւանքով՝ ամբողջ դարեր պատճառ դարձել մեր ժողովրդի անօրինակ ողբերգության», այլ՝ նրա ազգայնացման, գաղափարական վերագնահատման: Յայ եկեղեցին «վերագնահատումի պիտի ենթարկե քրիստոնեական սիրո իր սխալ ըմբռնումը», Քրիստոսի անձնական կյանքը դարձնի իրեն ուղեցույց, «սիրո եւ զոհաբերության ընդունակ արի ժողովրդի մասին պիտի խոսի, եթե ուզում է, որ քրիստոնեության հետքերը մնան Փոքր Ասիայում եւ Յայաստանում»: «*Ինքնապաշտպանությունը հայ ժողովրդի - ահա՛ Յայ եկեղեցու նոր հավատամքը*», - եզրակացնում է Նժդեհը (63):

Որպես ցեղապաշտ, Նժդեհը մեր հաղթանակի մեջ ապավեն է տեսնում նաեւ Ցեղի ուժակիր աստվածներին՝ Հայկին ու Վահագնին, որոնք «պիտի բարձրացնեն շանթընկեց մեր բազուկը եւ վարեն նրա հարվածները» (64):

Իբրեւ արիապաշտ եւ զորութենատենչ, Նժդեհը էական դեր է հատկացնում Վահագնապաշտությանը. «Վահագնի հետ պիտի խոսենք հիմա՝ Աստվածը հին արիական հայության: Մի նոր սուրբ գիրք պիտի դրվի մեր ժողովրդի ձեռքը՝ ավետարանը արիների», - գրում է Նժդեհը (65): «Հայ ժողովրդի հավաքական հոգու մեջ հրամայողաբար հարություն պիտի առնի պաշտամունքը մեր հին եւ հզոր Աստծու: Վահագնի համար տաճարներ պիտի բարձրանան... ամեն տեղ, ուր կապրի հայը՝ ամեն մի հոգու մեջ, քանզի արիությունն է եղել հավիտենական պարտականությունը այն ազգերի, որոնք չեն ուզում մեռնել: «Արիացիր, արիացրո՛ւ». սա՛ պիտի լինի մեր օրվա նշանաբանը: Վահագն՝ Աստված, արիապաշտությունը՝ նոր կրոն, հայ մարդն՝ արի՛, եթե չենք ուզում մեր տեղն արեւի տակ մի օր զիջել մեզնից արիներին» (66): Եվ հենց Վահագնի աջի վրա է ցեղակրոնը տալիս իր սրբազան երդումը, ուխտելով՝ «ապրել, գործել ու մեռնել որպես ցեղամարդ» (67):

Սակայն Նժդեհը չի հակադրում Վահագնին եւ Քրիստոսին, կամ՝ հայկականն ու քրիստոնեականը, այլ՝ դրանք խորքում տեսնում է համադրելի: «Սկզբից ի վեր հայությունն ու իր քրիստոնեությունը ծուլված են ի մի բնություն» (68): Եվ, միաժամանակ, նա հետաքրքիր բացահայտում է անում. «Աններելի սխալ է կրոնական կրթով բացատրել հայու հավատարմությունը քրիստոնեության հանդեպ: Հայ հոգուն անծանոթ է ֆանատիզմը... Տիրապետող գիտակցությունը հայու մեջ վաղուց է ինչ ազգայինն է... Նա շատ վաղ հայացրեց քրիստոնեությունը: Հայկականությունն է հայու ճշմարիտ կրոնը» (69):

Այսպիսով, Ցեղակրոնությունը դավանանքը ստորադասում է ազգությանը, նշանաբանելով՝ «Ցեղը ամեն բանն վեր»: Այն պայքար չէ՝ քրիստոնեության կամ Հայ եկեղեցու դեմ եւ պահանջ չի՝ դնում կրոնափոխության, այլ՝ հիշեցնում է միայն, որ հին աստվածները վկաներն են մեր ծնունդի եւ մարմնավորողը՝ մեր ցեղային որակների:

«Ցեղային ձգտումներու լավագույն մեկ արտահայտությունն է մեր հեթանոսական կրոնը, որ մեզի կներկայանա իբրև ցեղային արժեքներու խտացում մը». այսպես է մեկնաբանում հին հավատքի նկատմամբ Ցեղակրոնության մոտեցումը Արմենակ Բարսեղյանը՝ իր «Ցեղակրոն շարժումը» գրքույկում (70):

* * *

Ցեղակրոնությունը նախնադարին վերադառնալու կոչ չէ՛, ինչի համար, հաճախ, անհիմն կերպով քննադատվել է: Այն ո՛չ թե նախնական նահապետական կյանքը, այլ՝ մեր խաթարված ցեղային ինքնատիպությունը վերականգնելու ձգտում է: Դա ո՛չ թե Յայկի նետ ու աղեղով, այլ՝ Յայկյան ոգով կռվելու պատգամ է: Միաժամանակ, նա չի՛ քարոզում անցյալից հրաժարում կամ ապագայի անգործ սպասում: Ցեղակրոնությունը հետադարձ հայացք է դեպի մեր արմատները, եւ, այդ արմատների հզորությունից ներշնչված՝ վստահ ու հաստատուն կեցվածք ապագայի նկատմամբ: «Ցեղակրոնություն, դա անցյալապաշտություն չէ՛, ո՛չ էլ՝ հոգեւոր պորտաբուծություն, ինչպես եւ՝ ո՛չ ծուլ հուսադրություն, ո՛չ էլ՝ մեղկ ապագայապաշտություն: Անցյալի պաշտամունքի եւ ապագայի մեծ հույսի ստեղծագործ կենակցությունն է դա, որ ժողովրդի հոգուն ամենաշքեղ հղացումներ է տալիս» (71):

ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՐԱՇԽԻՔ

«Հաղթել՝ ասել է գերազանցել: Գերազանցելու ճիգ է Ցեղակրոնությունը» (72): Նա ուսուցանում է, թե Ցեղի արտաքին թշնամիներին գերազանցած լինելու համար, պետք է նախ գերազանցել իր նախորդ սերնդին:

«Իբրև օրենք՝ գերազանցի՛ր նախորդներիդ - խիզախությամբ, նվիրումով, հայրենահոգությամբ», քանզի «ո՛վ չի գերազանցում իր նախորդներին, նա անարգում է նրանց անունը՝ մեղանչելով ոգու զարգացման օրենքի դեմ», - պատգամում է Նժդեհը (73): Դա ասել է՝ որպես հավատամք ընդունել, որ քո սերունդը ավելի մեծ պարտա-

կանություն ունի, քան ուներ անցնող սերունդը, եւ որ պարտականության մեջ քո բաժինը՝ առյուծի բաժինն է, ամենամեծը:

Եվ Նժդեհը վստահ է, թե Ցեղի թշնամիների հանդեպ «հայը միայն ցեղակրոնությամբ կարող է գերազանց հանդիսանալ, որովհետեւ... հրաշունչ ցեղայնությունն է նրա էության հիմնական կշռույթը» (74): Ասել է թե՛ հայը միայն Ցեղակրոնությամբ կարող է հաղթել:

ՑԵՂԱԿՐՈՆԸ (ՑԵՂԱՄԱՐԴԸ)

Ցեղակրոնությունը ձգտում է ստեղծել հոգեբանական այն մթնոլորտը, որի պայմաններում հնարավոր լինի Ցեղի առաքինությունների ու կարողությունների դրսևորումը: Այն «ճգնում է աշխարհ բերել ցեղամարդը՝ ամբողջական հայ մարդը, որի մեջ եւ միջոցով պիտի արտահայտվեն ցեղի բովանդակ դրական ուժերն ու հատկությունները» (75):

Ցեղամարդ հայի գաղափարատիպն է ցեղակրոնը:

Ցեղակրոնը չի՛ սարսափում միջավայրի այլասերիչ ազդեցությունից, քանզի գիտե, որ այն անգոր կլինի ուժացնել, եթե մենք ապրում ենք ցեղորեն:

Նա ատում է վախկոտությունը: Պատահական չէ, որ Ցեղակրոն Ուխտերում խստիվ արգելված էր «մի՛ վախճար» խոսքը, քանզի ցեղակրոնի հասկացողությամբ «վախենալ մեկի համար՝ ասել է թշնամանել (անպատվել, անարգել- Մ. Լ.) նրան» (76):

Պարտվողականությանը նա հակադրում է հաղթական ոգին, կրավորական տառապանքին՝ ներգործուն պայքարը, սարսափի հոգեբանությանը՝ մեռնելու կամքը, լալկանությանը՝ արիադավանությունը, մտքի անիշխանականությանը՝ ցեղային մտածումը, կրոնական անդենականությանը՝ երկրավոր հայրենապաշտությունը, դասակարգային եւ հարանվանական եսականությանը՝ ներցեղային բարոյականը:

Ցեղակրոնը թշնամի է ճանաչում թուրքին, բոլշեւիկին ու սրանց հայադավ գործակալներին, որոնց վճռաբար հակադրում է իր զորութենական ցեղապաշտությունը: Նա խորշում է բոլոր այն

հոսանքներից, կրոններից ու վարդապետություններից, որոնք ժխտելով ազգերի անհրաժեշտությունը կամ եղծելով ցեղային անհատականությունը, վտանգում են նաեւ Հայ ցեղի գոյությունը:

Ցեղի եւ Հայրենիքի համար մեռնելու բացարձակ կամք ունի նա: Նրա համար սրբազան են Հայրենիքի անկախության գաղափարը եւ այն խորհրդանշող նվիրական եռագույնը, ու գիտե նաեւ, թե արյամբ եւ զոհաբերությամբ է նվաճվում Հայրենիքի իրական անկախությունը:

Իր փառահեղ նախնիների մեծությանը հետամուտ՝ նա պատկառում է իր Ցեղից եւ աշխատում ամենուրեք արժանավորապես ներկայացնել այն:

Ցեղակրոնը գիտակցում է, որ իր ձեռքին է գալիք սերունդների ճակատագիրը, այդ պատճառով ինքնավատնումի (ինքնամսխումի) մեջ նա ազատ չէ ու քաջառողջ լինելու իրավունք եւ պարտականություն ունի, առաջնորդվելով *«առողջ հոգին առողջ մարմնի մեջ»* սկզբունքով:

Իր ցեղակցի հետ ընտանիք կազմելու եւ սերունդ տալու պարտավորությունն ունի ցեղակրոնը, քանզի գիտե, որ սերնդատվությամբ է ապահովվում Ցեղի շարունակելիությունը:

Իր ցեղի հզորությանը եւ հաղթանակին նախանձախնդիր՝ «նա աշխատում է գիտության զինարանից առնել իր կռվի զենքերը», չնոռանալով հանդերձ, որ «մարդս ինքն է իր առաջին զենքը» (77): Նա գիտության, արվեստի կամ արհեստի ընդամենը մշակ չէ, այլ դրանք իր ցեղին ծառայեցնելու ձգտող անխոնջ մարտիկ:

«Քիչ է խոսում ցեղակրոնը, որովհետեւ գործնապաշտ է»... Դատարկախոս չէ՝ ու խոսում է միայն «ուսանելու եւ ուսուցանելու համար, իսկ ուսանում եւ ուսուցանում է՝ գործելու համար» (78): Նա լավատես է եւ խորապես հավատում է իր գործին:

Գիտակից այն ճշմարտությանը, թե ինքը մասնակի կրողն ու անձնավորումն է Հայ ոգու, հետեւապես՝ նաեւ իր կամքով է պայմանավորված Ցեղի ոգու կատարելագործումը, ցեղակրոնը ձգտում է անձնական կամքի մշակմամբ՝ սատարել Հայ ոգու հզորացմանը:

Ցեղակրոնը հնազանդ է Ցեղին, որին սիրում է իր կյանքից ավելի:

Ցեղի կանքը - ահա՛ նրա գերագույն հրամայողը: Դա Ցեղի հաղթանակելու ու հարատևելու կանքն է, եւ ցեղակրոնը ձգտում է աստվածացնել այն, ասել է՝ դրա կատարումն իր համար դարձնել օրենք, պարտավորություն: Ու այդ անմեռ կանքին նա ասում է վճռաբար՝ այր՛ եւ եղիցի՛:

Ցեղակրոնը՝ քարոզիչ

- Նոր ուխտակից գտնել,- սա՛ է ցեղակրոնի քարոզչության հիմնական նպատակը, «մի գործ, որի մեջ ցեղակրոնը հոգնել չգիտե» (79):

Նրա քարոզչությունը առավելապես անձնական օրինակի քարոզչություն է: Համոզված իր դավանանքի փրկարար ճշմարտության մեջ, նա իր ցեղաշունչ, հոգեփոխիչ խոսքով ստիպում է խորհել: Խոսում է այնպես, «որ իր ձայնի մեջ ունկնդիրները իր ցեղի ձայնը լսեն..., որ իր լսարանը զգա, թե կա գերագույն հեղինակությունը՝ Ցեղը, որ խոսում է ցեղակրոնի շուրթերով» (80):

Քարոզչության կերպը առանձնահատուկ է, ինքնատիպ. «Կարճ ու կտրուկ նախադասություններ, պատգամի ձգտող շեշտադրություն եւ՝ որ գլխավորն է, ի խորոց սրտի բխած խոսքի հաղորդականություն, որոնք կգրավեն ունկնդրին, կհուզեն անոր սիրտը եւ կխմորեն միտքը» (81):

ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ - ՑԵՂԸ, ՏԱԿԱՆՔԸ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Նժդեհը հայությունը բաժանում է զգայագիտակցական երեք շերտերի՝ ազգային-ցեղային (Ցեղը), տատանվող կամ չկողմնորոշված (ժողովուրդը), ամբոխացած, հակազգային (տականքը):

Արդի հայությունը գերազանցորեն հանդես է գալիս որպես հայ ժողովուրդ, այսինքն՝ հայկական որեւէ հատկանիշ ունեցող մարդկանց ժողովածու: Հայության շատ փոքր մասն է, որ իր զգայագիտակցական մակարդակով ու կենսաձեւով նկատվում է որպես Հայ ցեղ (ազգ): Հայության մի հատվածն էլ կազմում է տականքը:

Տականքը - Սա հայության ազգուրաց տարրն է, նրա աղբը, թեր-

մացքը: Սա Ցեղի ներքին թշնամին է՝ լծված արտաքին թշնամու ռազմականոքին. անդիմագիծ՝ որպես հայ եւ զգվելի՝ որպես մարդ. հայության հանդեպ ո՛չ մի պարտականություններ չճանաչող, բայց մշտապես իրավունքներից ճամարտակող:

Նա ազգային պատկանելություն չունի, եւ եթե խոսում էլ է հայերեն, ապա միայն այն պատճառով, որ հաղորդակցվելու այլ ձեւ դեռ չի գտել: Նյութակրոն՝ որի համար գերագույն արժեքը դրամն է: Հայրենիք չի՝ ճանաչում եւ առաջնորդվում է «որտեղ հաց, էնտեղ կա՛ց» սկզբունքով: Նրա համոզումով՝ Հայ ցեղը «ցեխ» է, մարդկային ստորադաս տեսակ: «Ցեղանենգ շեյթան», - այսպես խարանեց նրան Հայկ Ասատրյանը (82): Դա՛ հայության ազգորեն մեռած տարրն է, մեկընդմիջտ ամբոխացած:

Ցեղը - Սա հայության ընտրանին է, սերուցքը, որի գերնպատակն է՝ իր տեսակի հավիտենականացումը Հայրենիքում: Նա՛ է իր մեջ կրում Հայկականությունը եւ այն փոխանցում սերունդներին: Ցեղի համար՝ անփոխարինելի՛ է Հայրենիքը, նրա անկախությունը՝ թթվածնի պես անհրաժեշտ: Ցեղն է մարտնչում ու նահատակվում՝ հայության պատիվը փրկելիս:

Ժողովուրդը հայության չկողմնորոշված, տատանվող տարրն է: Այն ամբոխամետ է, եթե ավելի տականքի ծայրն է լսում, քան՝ Ցեղի:

Ժողովուրդն ապրում է առօրյայով, Ցեղը՝ հավիտենականով. նա՛ օրվա մտածումներով, սա՛ անցյալի հիշողությամբ, ապագայի հաստատուն հավատով եւ օրվա հարատեւ պայքարով, միաժամանակ:

Ժողովուրդն առաջնորդվում է հատվածական, Ցեղը՝ համահայկական շահերով: Ժողովուրդը դասակարգերի, դավանանքների ու կուսակցությունների խառնամբոխ է. Ցեղի մեջ չկան տիրող եւ հպատակ դասակարգեր, կրոնական հարանվանություններ, քաղաքական ուղղություններ - կան միայն Հայեր:

Ժողովուրդն արդարություն եւ ապրելու իրավունք աղերսող է, Ցեղը՝ դրանք նվաճող ու հաստատող:

Ժողովուրդը կարող է հարմարվել իր անփառունակ վիճակին, Ցեղը չի՛ հանդուրժում ստրուկի շղթաները. նրա համար սրբագրելի են աշխարհի հայավնաս վճիռները:

Վտանգի պահերին՝ ժողովուրդը մատնվում է խառնաշփոթի ու խուճապի, Ցեղը բնագոյորեն գտնում է ելքը: Նա ընդունակ չէ՝ կանխատեսելու վտանգը, սա՛նախազգում է այն:

Ժողովուրդը մեծարում է միջակություններին, Ցեղը՝ միայն իր հանճարներին: «Ժողովուրդը դպիրներ է ծնում, Ցեղը՝ մարգարեներ» (83):

Նա արժեքներ պահել ու հերոսներ գնահատել չգիտի. այսօր մեկին հերոս է դարձնում, վաղը՝ ոտնատակ անում. կամ, երեկվա սրբությունները, անբոխային կուրությամբ, այսօր ոչնչացնում: Ցեղն իր արժեքների հավիտենական կրողն է, իր սուրբ մեռելների պաշտամունքը հավերժացնողը:

Ժողովուրդը տառապում է անլիարժեքության բարդությով, Ցեղը համակ է հպարտանքի զգացումով եւ լի՝ վճռականությամբ:

«Ժողովուրդն ընդունում է օտար մշակույթն ասպազգայնամալով, Ցեղը՝ ազգայնացնում է իր ընդունածը» (84):

Եվ որքան հայության մեջ բարձր է Ցեղի տեսակարար կշիռը, այնքան նա ապրում է ցեղորեն, այնքանով հզոր ու կենսունակ է նա՝ որպես Ազգ: Իսկ Ցեղի տեսակարար կշիռը պիտի բարձրացվի ժողովրդի հաշվին՝ նրան Դարձի բերելով, դեպի Ցեղը կողմնորոշելով:

«Այս ժողովուրդը պետք է ցեղենք» (85). այս է Ցեղակրոնության գերխնդիրը:

Ծանոթագրություններ

1. «Խռովք», թիվ 1, էջ 32, 36-37:

2. Ա. Բարսեղյան, «Ցեղակրոն շարժումը», Բոստոն, 1935թ., էջ 31:

Արմենակ Բարսեղյանը ԱՄՆ-ում Ցեղակրոն շարժման գործիչներից էր եւ խմբագրում էր 1932-1936թթ. Ալիստոնում հրատարակվող «Արփի» պարբերականը: Հանդես գալով իբրեւ հայ ընտանիքի պարբերական, «Արփին» նպատակ ուներ՝ հայ նոր սերնդին սպառնացող օտարացման վտանգի դեմն առնելու համար, «պահպանել հայ ընտանիքի ազգային նկարագիրը», որով՝ «ընտանիքը դարձնել հայեցի դաստիարակության

կենտրոն»): Ուշագրավ է Ա. Բարսեղյանի «Ցեղին Ձայնը» հոդվածը («Արփի», թիվ 11, 1933թ.), որը գրվել է Ցեղակրոն շարժման օրերին:

1935թ.-ին, Բոստոնում, Դ.Յ.Դ. Ցեղակրոն Ուխտերի կենտրոնական վարչության հանձնարարությամբ, Ա. Բարսեղյանը գրել է «Ցեղակրոն շարժումը» գրքուկը, ուր փորձել է ներկայացնել Ցեղակրոն կազմակերպությունը, հիմնավորել շարժումը:

3. «Չայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1933թ., թիվ 6517, 6520, 6524, 6528, 6534, 6542, 6545, 6554, 6568, 6583:

4. Գ. Նժդեհ, «Ինչո՞ւ ստեղծվեց Ցեղակրոն շարժումը», «Հանրապետական» թերթ, Երևան, 1993թ., թիվ 21:

5. Գ. Նժդեհ, «Ինքնակենսագրություն», ՀՀ ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գ. 11278, հտ. 4:

6. «Չայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1963թ., 13 սեպտեմբերի, էջ 2:

7. Նույն տեղում:

8. Նույնը, էջ 1:

9. Ավո, «Նժդեհ», Բեյրութ, 1968թ., էջ ԺԲ:

10. Ավելի ուշ (1940-ականների սկզբին) գրվեցին նաև Ցեղակրոնի դավանանքը եւ Չայ ցեղային շարժման սկզբունքները /տե՛ս Հավելվածը/:

11. Կարո Գեւորգյանը գրում է, որ Ցեղակրոն Ուխտերը հիմնվել են 1933թ.-ի հունվարի 14-ին (Կ. Գեւորգյան, «Ամենուն տարեգիրքը», Բեյրութ, 1963թ., էջ 413-429):

Քանի որ այդ ժամանակ Նժդեհը դեռ չէր գտնվում Ամերիկայում, պետք է կարծել, թե այդ օրը առաջին ուխտերն են հիմնվել Բուլղարիայում, ուր շարժման համար հիմքեր կային դեռ 1932թ.-ից:

12. «Դաշնակցության օրը» իբրև տոն սահմանեց Դ.Յ.Դ. 10-րդ Ընդհանուր ժողովը 1925թ.-ից՝ ամեն տարի, հոկտեմբերի առաջին շաբաթ օրը (Արմեն, «Դաշնակցության օրը», Սոֆիա, 1929թ.):

13. «Չայրենիք» ամսագիր, Բոստոն, 1961թ., թիվ 11, էջ 34:

14. «Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 5-6, էջ 18:

15. Գ. Նժդեհ, «Ինքնակենսագրություն»:

16. «Ցեղ եւ Չայրենիք», թիվ 2, էջ 61-62:

17. Նույնը, էջ 60-61:

18. «Ռազմիկ», 1943թ., թիվ 101: Տե՛ս նաև՝ Ավո, «Նժդեհ», էջ 248:

19. «Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 2, էջ 38:

20. «Խռովք», թիվ 1, էջ 32:

21. «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1934թ., թիվ 6713:

22. «Խռովք», թիվ 1, էջ 33:

23. Տուրք տալով «ցեղ» հասկացության մարքսիստական բնորոշումներին, մեզանում, շատ հաճախ, դրա տակ հասկացվում է մի ինչ-որ նախնադարյան վիճակ, ինչ-որ միջանկյալ բան նախամարդու եւ ժամանակակից մարդու միջեւ:

Այդ մոլորանքը, մեր կարծիքով, արդյունք է հին գաղափարախոսության՝ դեռեւս գոյություն ունեցող ազդեցության, ինչպես նաեւ՝ ազգային անլիարժեքության: Օրինակ, երբ ասում են «ցեղասպանություն», բոլորը դրա տակ, բնականորեն, հասկանում են որոշ էթնոտեսակի ոչնչացում, իսկ երբ ասում են «ցեղակրոնություն», ազգայնորեն թերարժեք տարրերը վայնասուն են բարձրացնում «ցեղ» բառի շուրջ: Պատճառը հոգեբանորեն հասկանալի է. «ցեղասպանությունը» կրավորականություն է մեզ համար, իսկ «ցեղակրոնությունը»՝ ներգործականություն:

24. Գ. Նժդեհ, «Ամերիկահայությունը - Ցեղը եւ իր տականքը», Սոֆիա, 1935թ., էջ 78:

25. Խռովք», թիվ 1, էջ 36:

26. Գ. Նժդեհ, «Ամերիկահայությունը - Ցեղը եւ ...», էջ 92:

27. Նժդեհը կարեւորում է հայերեն բառերի «գաղափարային իմաստի, նրանց կուլտուրական տարողության» վերծանումը՝ դրա չգոյությունը համարելով հայ բանասիրության թերին (Գ. Նժդեհ, «Խորհրդածություններ - Բանտային գրառումներ», Երեւան, 1993թ., էջ 65):

28. Գ. Նժդեհ, «Ամերիկահայությունը - Ցեղը եւ ...», էջ 92:

29. Նույնը, էջ 84-85:

30. «Խռովք», թիվ 1, էջ 35:

31. Մեծարելով Մամիկոնյանների ռազմունակությունը, Նժդեհը շեշտում է նաեւ Հայ էության մյուս բեւեռը՝ Բագրատունյաց կուլտուրական ոգին, որոնք տեսնում է անհրաժեշտորեն համադրելի («Ցեղի ոգու շարժը», էջ 17):

32. Գ. Նժդեհ, «Ինչո՞ւ ստեղծվեց Ցեղակրոն շարժումը»:

33. Գ. Նժդեհ, «Ամերիկահայությունը - Ցեղը եւ ...», էջ 92:

34. Նույնը, էջ 81:

35. «Հայրենիք» օրաթերթ, 1963թ., 13 սեպտեմբերի, էջ 3:

36. Գ. Նժդեհ, «Ամերիկահայությունը - Ցեղը եւ ...», էջ 81:

37. Գ. Նժդեհ, «Ցեղի ոգու շարժը», Սոֆիա, 1932թ., էջ 33:

38. Նույնը, էջ 51:

39. Բառից կառչողներն աղմկում էին, թե «ցեղակրոն» եզրը գիտական չէ: Այնինչ, հայերենում երկու գոյականների միացումով նոր բառերի կազմումը չի հակասում Հայոց լեզվի բառակազմական կանոններին եւ նորություն չէ. օրինակ՝ մարգագետին, դաշտավայր, գյուղաքաղաք, լեռնադաշտ եւ այլն:

40. Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», հտ. 2, էջ 685:

41. «Խռովք», թիվ 1, էջ 37:

42. «Տարոնի Արժիվ», 1938թ., թիվ 2, էջ 40:

43. Գ. Նժդեհ, «Էջեր իմ օրագրեն», Կահիրե, 1924թ., էջ 34:

44. Գ. Նժդեհ, «Որդիների պայքարը հայրերի դեմ», Սալոնիկ, 1927թ.,

էջ 26:

45. «Խռովք», թիվ 1, էջ 38:

46. Նույնը, էջ 37:

47. Ավո, «Նժդեհ», էջ 511:

48. Գ. Նժդեհ, «Ամերիկահայությունը - Ցեղը եւ ...», էջ 85:

49. «Հայրենիք» օրաթերթ, 1963թ., 13 սեպտեմբերի, էջ 2:

50. Գ. Նժդեհ, «Ինչո՞ւ ստեղծվեց Ցեղակրոն շարժումը»:

51. Գ. Նժդեհ, «Բաց նամակներ հայ մտավորականությանը», Բեյրութ, 1929թ., էջ 29:

52. Գ. Նժդեհ, «Ամերիկահայությունը - Ցեղը եւ ...», էջ 93:

53. Ավո, «Նժդեհ», էջ 258:

54. Գ. Նժդեհ, «Ամերիկահայությունը - Ցեղը եւ ...», էջ 89:

55. Այն հանգամանքը, որ «հեթանոս» բառի հիմքում ընկած է հունարեն «էթնոսը» կամ ասորերեն «հեթնոսը», որ նույնպես նշանակում է «ցեղ» (Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», հտ. 3, էջ 74), ոմանց հիմք է տալիս ասելու, թե Ցեղակրոնությունը վերածնված հայ հեթանոսական (ցեղային) կրոնն է:

Նախաքրիստոնեական շրջանի հայոց կրոնի վերաբերյալ, հայտնի պատճառներով, մեզ են հասել աղքատիկ տվյալներ, եւ հաշվի առնելով, որ հեթանոսական կոչվող շրջանն ունեցել է կրոնական տարբեր շերտեր, դեռ պիտի կարողանալ դրանց մեջ տարանջատել բնիկ հայկականը եւ ներմուծված օտարը:

Իսկ ինչ մնում է Ցեղակրոնությանը, ապա այն իր մեջ կրոնին բնորոշ գրեթե ոչինչ չունի (ծիսակարգ, կրոնական դաս եւ այլն):

56. «Խռովք», թիվ 1, էջ 39:
57. Գ. Նժդեհ, «Խորհրդածություններ», էջ 63:
58. Նույնը, էջ 64:
59. «Հայաստան», Պլովդիվ, 1924թ, թիվ 29: Նույնը տե՛ս նաեւ՝ Ավր, «Նժդեհ», էջ 230:
60. Գ. Նժդեհ, «Բաց նամակներ...», էջ 21:
61. «Ազատ Հայաստան», Բեռլին, 1943թ., թիվ 2/3, «Հերոսը եւ հերոսականը»:
62. Գ. Նժդեհ, «Բաց նամակներ...», էջ 21-22:
63. Նույն տեղում:
64. «Խռովք», թիվ 1, էջ 40:
65. Գ. Նժդեհ, «Բաց նամակներ...», էջ 20:
66. «Արաքս», Սոֆիա, 1926թ., 11 փետրվարի, «Անարիությունը՝ մայր չարյաց»:
 67. Գ. Նժդեհ, «Ամերիկահայությունը - Ցեղը եւ ...», էջ 90:
 68. Նույնը, էջ 46:
 69. Գ. Նժդեհ, «Խորհրդածություններ», Երեւան, 1993թ., էջ 39:
 70. Ա. Բարսեղյան, «Ցեղակրոն շարժումը», էջ 26:
 71. «Խռովք», թիվ 1, էջ 37:
 72. Գ. Նժդեհ, «Ամերիկահայությունը - Ցեղը եւ ...», էջ 84:
 73. Գ. Նժդեհ, «Խորհրդածություններ», էջ 35:
 74. «Խռովք», թիվ 1, էջ 39:
 75. Գ. Նժդեհ, «Ամերիկահայությունը - Ցեղը եւ ...», էջ 83:
 76. Նույնը, էջ 82:
 77. Նույնը, էջ 84:
 78. Նույնը, էջ 80:
 79. Նույնը, էջ 84:
 80. Նույնը, էջ 80:
 81. Ա. Բարսեղյան, «Ցեղակրոն շարժումը», էջ 12:
 82. Հ. Ասատրյան, «Ցեղանենգ շեյթանը», Սոֆիա, 1933թ.:
 83. «Խռովք», թիվ 1, էջ 38:
 84. Նույնը, էջ 36:
 85. «Հայրենիք» օրաթերթ, 1963թ., 13 սեպտեմբերի, էջ 2:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺՂԵՂ

(կենսագրական ակնարկ)

«Ապագա պատմաբանը Դիոգենեսի պես լապտեր վերցրած պետք է քրքրե մեր ներկա դարի պատմությունը, որ գտնե այն գաղափարական գործիչներին, որոնց գործը նմանվում է հին հեքիաթների դարու հերոսների գործունեությանը: Հայ ներկա իրականության մեջ ապագա անաչառ պատմաբանը շատ քչերին կգտնի, որոնց անունը արժանի կլինի հավերժացնելու... Անշուշտ ու անկասկած, դրանց թվում կլինի եւ Գարեգին Նժդեհի անունը...»:

«Սյունիք», Գորիս, 1920թ., թիվ 7

Հայոց պատմության ալեծուփ օվկիանում, մեր նվիրական հերոսների շարքում, իբրեւ գաղափարական եւ կազմակերպական առաջնորդ, վեր է հառնում Գարեգին Նժդեհի կերպարը:

Նժդեհը մեր պատմության այն եզակի դեմքերից է, որի մեջ ներդաշնակորեն միաձուլվել են զինվորականն ու մտածողը, ազգային բարոյախոսն ու քաղաքական գործիչը եւ որն իր` հիրավի պատմաստեղծ կյանքով, հաստատաբար դասվում է հայոց առաջնագույն մեծերի շարքը:

Նժդեհը (Գարեգին Տեր-Հարությունյան) ծնվել է 1886թ. հունվարի 1-ին*, Նախիջեւանի գավառի Կզնութ գյուղում: Մանուկ հասակում կորցրել է հորը (հայրը` Եղիշեն, գյուղի քահանան էր) եւ մնացել մոր` Տիրուհու խնամքին: Ընտանիքում եղել են չորս երեխա, ինքը փոքրն էր:

Սկզբնական կրթությունը ստացել է Նախիջեւան քաղաքի ռուսական դպրոցում, ապա` Թիֆլիսի ռուսական գիմնազիայում, որտեղ սովորելու ընթացքում էլ, 17 տարեկան հասակից, միացել է հայ ազատագրական շարժմանը: Այնուհետեւ անցել է Պետերբուրգ եւ երկու տարի տեղի համալսարանի իրավաբանական բաժնում

սովորելով՝ լքել է համալսարանն ու ամբողջովին նվիրվել հայ հեղափոխության գործին՝ ցարիզմի ու սուլթանականության դեմ: 1906թ. անցնում է Բուլղարիա, ուր Ռոստոմի աջակցությամբ եւ նակեղոնական ազատագրական շարժման ղեկավարների միջնորդությամբ ընդունվում է Սոֆիայի սպայական դպրոցը եւ այն հաջողությամբ ավարտելով՝ 1907թ. վերադառնում է Կովկաս:

1907-1908թթ. մտնում է Յ.Յ.Դ. շարքերը եւ, իբրեւ կուսակցական նշանավոր գործիչ Սամսոն Թադեւոսյանի օգնական, մասնակցություն բերում պարսկական հեղափոխական շարժմանը: Ձեռք եւ ռազմամթերք տեղափոխելու համար Նժդեհը 1909թ. վերադառնում է Կովկաս եւ ձերբակալվում ցարական իշխանությունների կողմից: Բանտերում՝ Ջուլֆայից մինչեւ Պետերբուրգ, մնացել է ավելի քան երեք տարի, ապա՝ անցել Բուլղարիա:

Երբ 1912թ. սկսվեց Բալկանյան առաջին պատերազմը, հայերը Թուրքիայի դեմ կռվելու համար (հանուն Մակեդոնիայի եւ Թրակիայի ազատագրության), բուլղարական բանակի կողքին ստեղծեցին կամավորական վաշտ, որի ղեկավարները եղան Նժդեհն ու Անդրանիկը: Այդ պատերազմում Նժդեհը վիրավորվել է: Հայկական վաշտը աչքի ընկավ մի շարք հաղթական կռիվներով եւ 1913թ. զորացրվեց՝ հրաժարվելով մասնակցել բալկանյան ժողովուրդների ներքին կռիվներին (իմա՝ Բալկանյան 2-րդ՝ թուրքանպաստ պատերազմին):

Բալկանյան պատերազմի տարիներին, իրավասությունների հետ կապված, ցավալի վեճ տեղի ունեցավ հայկական վաշտի երկու ղեկավարների միջեւ, որի արդյունքում վաշտը բաժանվեց Նժդեհի ու Անդրանիկի կողմնակիցների: Բարեբախտաբար, վաշտի զորացրումից շատ չանցած, Գ. Նժդեհը, 1913թ. հոկտեմբերին, Յ.Յ.Դ. Բալկանյան Կենտրոնական կոմիտեին ուղղեց մի գրություն, որով փակված հայտարարեց իր ու Անդրանիկի միջեւ ամիսներ տեւած անախորժ վեճը (1):

Առաջին աշխարհամարտի նախօրյակին, «ներման» արժանանալով ցարական կառավարության կողմից, Նժդեհը վերադառնում է Կովկաս՝ Թուրքիայի դեմ մղվելիք պատերազմին մասնակցելու պայմանով: Կռիվների սկզբնական շրջանում եղել է հայկական

կամավորական երկրորդ գնդի փոխհրամանատարը, վերջին շրջանում՝ ղեկավարել հայ-եզդիական առանձին մի զորամաս:

1917թ. սակավաթիվ ուժերով օգնության է հասել Կողբին եւ փրկել տեղի հայությանը կոտորածից:

1918թ. գարնանը վարել է Ալաջայի (բնակավայր Անիի շրջակայքում) կռիվները, որոնցով կարելիություն է ընձեռվել նահանջող հայկական զորամասերին՝ անկորուստ անցնելու Ալեքսանդրապոլ միաժամանակ, իր մարդկանցով ապահովել է Նիկողայոս Մառի պեղումների արդյունքը հանդիսացող արժեքավոր հնությունների փոխադրումը Անիից:

Մոտենում էր 1918թ. մայիսը, վճռվում էր հայոց ճակատագիրը: Ալեքսանդրապոլում կռվի բռնվելով թուրքական զորքերի դեմ՝ Նժդեհն իր խմբով նահանջում է Ղարաքիլիսա: Այստեղ էին նահանջել խուճապի մատնված բազմահազար հայ փախստականներ. տեղի ժողովուրդը նույնպես տագնապի մեջ էր: Ահա՛ այս օրհասական պահին, երբ տիրում էր համատարած հուսալքում, լսվում է Նժդեհի ռազմաշունչ, ամենափրկիչ ձայնը. Դիլիջանի եկեղեցու բակում նրա արտասանած ճառը հոգեփոխեց հուսալքված, բայց ոգեշունչ խոսքի կարոտ հայերին եւ նրանց առաջնորդեց դեպի սրբազան ճակատամարտ: «*Դեպի՛ ճակատ, այնտե՛ղ է մեր փրկությունը*, - կհնչեր Նժդեհի հուժկու, վճռական եւ ինքնավստահ ձայնը» (2): Ղարաքիլիսայի եռօրյա հերոսականով հայությունը հաստատեց իր հարատևելու կամքը, եւ այդ հավաքական կամքի զորացման գործում, անշուշտ, անուրանալի է Նժդեհի դերը: Ղարաքիլիսայում վարած կռիվների համար (որոնց ընթացքում վիրավորվել է) Նժդեհն արժանացել է ամենաբարձր քաջության շքանշանի:

Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո, 1918թ. վերջին, Նժդեհը ՀՀ կառավարության կողմից նշանակվում է Նախիջևեանի գավառապետ, իսկ 1919թ. օգոստոսից՝ Կապանի, Արեւիքի եւ Գողթանի (Կապարգողթ) ընդհանուր հրամանատար:

Այստեղ հարկ ենք համարում, թեւ ընդհանուր գծերով, բայց մի փոքր հանգամանալից, անդրադառնալ այն հերոսականին, որ վարեց Նժդեհը 1919-1921թթ., Ջանգեզուրի լեռներում, որը նրա կյանքի եւ հայոց նորագույն պատմության ամենափառավոր էջերից է (3):

* * *

Առանց դրսի օժանդակության, ապավինած հայրենի լեռներին ու սեփական ոգու զորությանը՝ Սյունիքի հայությունը, Նժդեհի ղեկավարությամբ, վարեց իր հաղթական դյուցազնամարտը: Լեռնահայության դիմումներին՝ որեւէ կերպ օգնելու, ՀՀ կառավարությունը, բացի մեկումեջ արվող քաջալերանքի կամ համակրանքի խոսքերից, ո՛չ մի կերպ չարձագանքեց:

Իսկ Նժդեհը երբեմն ստիպված էր լինում չհնազանդվել վերին իշխանության հրամաններին: Մասնավորապես, երբ Խատիսյանի կառավարության կողմից նրան հրամայված էր գաղթեցնել պաշարված Գողթանի հայությունը, Նժդեհը մերժեց այն եւ, փոխարենը, սրբեց ու տեղահանեց գավառի թուրքական բնակավայրերը (4): Ավելին, 1920 թվականի օգոստոսին ՀՀ զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը, համաձայն բոլշևիկների հետ կնքված զինադադարի (իմա՝ 1920թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում Բորիս Լեզրանի ու Արշակ Ջամալյանի միջեւ կնքված համաձայնագիրը, որով ՀՀ-ն համաձայնություն էր տալիս Կարմիր բանակի մուտքին Ջանգեզուր, Ղարաբաղ եւ Նախիջեւան), Դրոյի միջոցով հեռագրում էր Նժդեհին՝ թողնել Կապանն ու Գեմվազը եւ անցնել Երեւան (5): Բայց Նժդեհը, չընդունելով ՀՀ զինվորական նախարարի՝ Ջանգեզուրը թողնելու հրամանը եւ մերժելով Դրոյի առաջարկը՝ անցնել Երեւան ապաքինվելու (Գորիսի ձորում վիրավորվել էր), նախընտրեց մնալ Սյունիքում եւ մենակ չթողնել լեռնահայությանը:

Այդ ծանր օրերին էր, որ Նժդեհը հղացավ եւ գործի դրեց Դավիթ-բեկյան Ուխտերը: 1920թ. օգոստոսի 25-ին, Կապանի Կավարտ գյուղի եկեղեցում, Նժդեհի զինվորներն ուխտեցին Դավիթ-Բեկի անունով՝ *«հավատարիմ մնալ հայրենի երկրի ազատության, իրենց հրամանատար Նժդեհին եւ կռվել մինչեւ վերջին շունչը»* (6): Այսպես ծնունդ առան Դավիթբեկյան Ուխտերը, որոնց նշանաբանն էր. *«Յանուն հայրենիքի՝ Դավիթ Բեկաբար»:*

Բացահայտած թուրք-բոլշևիկյան միացյալ դավադրությունն ու չընդունելով ՀՀ կառավարության կրավորական կեցվածքը, որը

Մոսկվայի ներկայացուցիչ Լեգրանի հետ կնքած վերոհիշյալ համաձայնագրով, փաստորեն, Ջանգեզուրը Ադրբեջանին հանձնելու նախաբայլ էր անում (7), Սյունիքը շարունակեց կռիվը եւ Հայաստանի խորհրդայնացումից հետո, 1920թ. դեկտեմբերին, իրեն հռչակեց ինքնավար:

1921թ. հունվարին Դրոն Բաքվից մի հեռագիր հղեց Նժդեհին, առաջարկելով նրան՝ թույլ տալ Ջանգեզուրի խորհրդայնացումը, հավատացնելով եւ վստահեցնելով, որ այդպիսով Մոսկվայի առաջիկա կոնֆերանսում, ուր լուծվելու էին նաեւ վիճելի հողային հարցեր, Խորհրդային Ռուսաստանը բարյացակամ կլինի դեպի Հայաստանը եւ կպաշտպանի հայ աշխատավորության շահերը (8): Այս անգամ եւս Նժդեհը, իբրեւ հեռատես քաղաքագետ, չհեռացավ Սյունիքից եւ շարունակեց մաքառել:

1921թ. Գորիսում լույս տեսավ Նժդեհի **«ՃՈՒՍՏՈՒԱՅԱՆ ԿԱՆՉԵՐ»** փոքրածավալ գրքույկը, որը պարունակում է կոչեր՝ լեռնահայությանը եւ պատվիրաններ՝ իր զինվորներին:

Իր զինվորական հմտությամբ, կազմակերպչական տաղանդով եւ ոգեշունչ խոսքով Նժդեհին հաջողվեց ստեղծել «ժողովրդական կուռ բանակ մը, որ պատրաստ էր իր հրամանատարի ձեռքի մեկ շարժումին անսալով՝ կրակի մեջն անգամ նետվելու» (9): Նժդեհն էր, որ պարտության դառնությունը ճաշակել տվեց Դենիկինի, Կոլչակի ու Վրանգելի բանակները ջարդած եւ «անպարտելի» հռչակված 11-րդ Կարմիր բանակի հեծելազորի պետ Կուրոչկինին:

Նույնիսկ Փետրվարյան ապստամբության պարտությունը եւ դրա հետեւանքով՝ 12 հազար գաղթականության (որից 4 հազարը՝ զորք) նահանջը,- որոնք զգալիորեն ազդեցին լեռնահայության բարոյա-հոգեբանական վիճակի վրա,- չընկճեցին Սյունիքը, եւ նա շարունակեց իր հաղթական կռիվները: 1921թ. ապրիլին հռչակվեց Լեռնահայաստանի Հանրապետություն՝ սպարապետ Նժդեհի վարչապետությամբ:

Հունիսի 1-ին, Ջանգեզուր անցած ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, Լեռնահայաստանը հայտարարվեց Հայաստան՝ Սիմոն Վրացյանին նշանակելով վարչապետ (Նժդեհը մնում էր իբրեւ

սպարապետ): Նոր կառավարությունը թույլ տվեց մի շարք կոպիտ սխալներ, որոնց մեջ ամենից ճակատագրականը եղավ երեք հազար թաթար-թուրքերի՝ իբրեւ քոչվոր, իսկ իրականում՝ որպես ծպտյալ դավադիրներ, Սիսիան ազատ մուտքի արտոնումը: Իսկ Երեւանից նահանջած զորքը կամավոր անձնատուր եղավ կարմիրներին:

Այս պայմաններում, մի կողմից՝ Վրաստանի ու Հայաստանի բոլշևիկացուները, Արարատյան գաղթականության՝ դեպի Սյունիք նահանջը (մասնավորապես, նահանջող մտավորականության եւ երիտասարդության վաղաժամ անցնելը Պարսկաստան), որոնք բարոյալքիչ ու հռոչի ազդեցություն ունեցան լեռնաշխարհի հայության վրա, մյուս կողմից՝ պարենի ու հացահատիկի չգոյությունը, վարչական եւ զինվորական մարմինների միջեւ առաջ եկած անհամաձայնությունները, միաժամանակ՝ խուսափելու համար ավելորդ հալածանքներից, որին կարող էր ենթարկվել Խորհրդային Հայաստանի հայությունը եւ հաշվի առնելով, որ Հայաստանի բոլշևիկյան ղեկավարությունն իր 1921թ. հունիսի հռչակագրով Սյունիքը հայտարարում էր կցված Մայր երկրին, Լեռնահայաստանը հուլիսին տեղի տվեց խորհրդայնացման առաջ:

Թողնելով Ձանգեզուրը՝ Նժդեհը հրաժեշտից առաջ հավաստեց լեռնահայությանը, որ ինքն ընդմիջտ չի՝ հեռանում եւ պիտի վերադառնա, եթե Երեւանի փոխարեն Բաքուն լինի Սյունիքի տերը: Իսկ Խորհրդ. Հայաստանի Հեղկոմին ուղղած իր դիմումը հաղթական սպարապետն ավարտում էր սաստող տողերով. «*Դուք գիտեք, որ ցանկության դեպքում ես միշտ էլ հնարավորություն կունենամ մի քանի տասնյակ զինվորներով վերագրավել Լեռնահայաստանը: Որպեսզի այս երկրի աշխատավոր գյուղացիությունը ստիպված չլինի մեկ էլ ինձ օգնության կանչելու, աշխատեք բավարարել հայ գյուղացիության եւ նրա մտավորականության արդար պահանջը*» (10):

Երկու տարվա կռիվների ընթացքում, թշնամու 15 հազար սպանվածի դիմաց Սյունիքը տվեց ընդամենը մի քանի տասնյակ զոհ, իսկ մոտ 200 գյուղեր նաքրագործվեցին թուրքերից ու վերադարձվեցին հայերին:

Շնորհիվ Լեռնահայաստանի հերոսամարտի՝ հնարավոր եղավ.

ա) փրկել Լեռնահայությանը կոտորածից,

բ) Սյունիքը կցել Մայր հայրենիքին՝ մահացու անդամահատումից զերծ պահելով Հայաստանը (11),

գ) հոգեբանորեն ու ռազմագիտորեն հնարավոր դարձնել Փետրվարյան ապստամբությունը (12),

դ) ապահովել հայ մտավորականության եւ մարտական ուժերի նահանջն ու անցումը Պարսկաստան:

Եվ այս ամենը, հիմնականում, շնորհիվ Նժդեհի անհատականության:

* * *

Այսպիսով, 1921թ. հուլիսին Նժդեհը թողնում է Ջանգեզուրը եւ անցնում Թավրիզ: Այստեղ լրջորեն սրվում են հարաբերությունները նրա եւ Հ.Յ.Դ. Բյուրոյի միջեւ, ինչը սկիզբ էր առել դեռեւս Սյունիքի կռիվների շրջանում: Արաքսի պարսկական ափին գտնվելու ժամանակ Հ.Յ.Դ. որոշ ղեկավար անդամներ (այդ թվում՝ պարենավորման նախարար Հակոբ Տեր-Հակոբյանը) Նժդեհի ներկայությամբ ծեծի ենթարկվեցին, զնդակահարվեց Ասլանյան ազգամունով դաշնակցական մի սպա: Այս կապակցությամբ (ու մի շարք այլ պատճառներով, որոնց թվում, ով զարմանք, Նժդեհին մեղադրում էին նաեւ Լեռնահայաստանի անկումը արագացնելու մեջ), Թավրիզում, Նժդեհը Հ.Յ.Դ. Բյուրոյի կողմից կուսակցության Գերագույն Դատական Ատյանի մոտ պատասխանատվության կանչվեց (13): Թեեւ Նժդեհը դատարանին (նաեւ՝ ՀՀ Նախարարական խորհրդին ու Հ.Յ.Դ. Ատրպատականի ԿԿ-ին) մանրամասն բացատրագիր ներկայացրեց Լեռնահայաստանի անկման պատճառների մասին (14), սակայն, 1921թ. սեպտեմբերին կուսակցական դատարանը, Սիմոն Վրացյանի առաջարկով, վճռեց «հեռացնել Գ. Նժդեհին Դաշնակցության շարքերից եւ ներկայացնել նրա գործը կուսակցության ապագա 10-րդ Ընդհանուր ժողովին» (15):

1925թ., Հ.Յ.Դ. 10-րդ Ընդհանուր ժողովի կողմից Նժդեհը վերականգնվում է կուսակցության շարքերում (16):

Թավրիզում եղած ժամանակ անգլիացիները Նժդեհին առաջարկում են վերադառնալ Հայաստան եւ այնտեղ ապստամբություն բարձրացնել (այդ ժամանակ Լենքորանում տեղի բնակչությունն ապստամբել էր խորհրդային իշխանության դեմ), որը Նժդեհի կողմից մերժվում է:

Թավրիզում մոտ չորս ամիս գաղտնի ապրելուց հետո Նժդեհը մեկնում է Բուլղարիա եւ հաստատվում Սոֆիայում: Այստեղ, հավանաբար 1922թ., նա ամուսնանում է Էփիմե անունով հայուհու հետ (17):

1922թ. լինելով Բուխարեստում՝ այնտեղ գտնվող Վարդան Գեւորգյանին առաջարկում է իր (ինա՛ Նժդեհի) տրամադրության տակ գտնվող նյութերի հիման վրա գրել «Լեռնահայաստանի հերոսամարտը», որը գրքույկով լույս տեսավ 1923թ. (18):

1923թ. կրկին լինելով Բուխարեստում (19)՝ Նժդեհը տեղի «Նոր Արշալույս» թերթում հանդես է գալիս «Իմ խոսքը - Թե ինչո՞ւ զենք բարձրացրի խորհրդային զորքերի դեմ» հոդվածաշարով (20):

Այդ տարիներին Նժդեհը հանգամանակից անդրադառնում է Սյունիքի կռիվների պատմությանը՝ 1923-1925թթ. ընդարձակ հոդվածաշարով հանդես գալով Բոստոնի «Հայրենիք» ամսագրում: 1924-1925թթ. նա հրապարակումներ է ունենում Պլովդիվում լույս տեսնող «Հայաստան» դաշնակցական թերթում: Մասնավորապես, 1924թ. այստեղ տպագրվում են գլուխներ նրա **«Ճշեր իմ օրագրեն»**ից, որը նույն տարի լույս է տեսնում առանձին գրքույկով, Կահիրեում:

1926թ. Նժդեհը սկսում է հանդես գալ Սոֆիայում լույս տեսնող «Արաքս» դաշնակցական թերթում, ուր տպագրվում է նրա **«Քաջ Գամակներ հայ մտավորականությանը»** շարքը (այն 1929թ. Բեյրութում լույս է տեսնում առանձին գրքույկով):

1926 թվականից Բուլղարիայի կուսակցական կազմակերպությունը (Նժդեհը տեղի Զ.Յ.Դ. ԿԿ անդամ էր) բաժանվում է Նժդեհի եւ Բյուրոյի կողմնակիցների: Կուսակցության բյուրոն գտնում էր, որ կարելի է ցանկալի է ընդհանուր լեզու գտնել Թուրքիայի հետ. այդ մտայնության հաստատմանը նպաստող մի շարք հրապարակումներ եղան, որոնց թվում՝ Բյուրոյի քարտուղար Ռուբենի «Հայ-թուրքական

կնճիռը» (1924թ.): Նժդեհը, որպես պատասխան այդ գրքի, 1927թ. Սալոնիկում լույս ընծայեց **«Որդիների պայքարը հայրերի դեմ»** գրքույկը: Միաժամանակ, որոշ հրապարակումներ ունեցավ Շահան Նաթալիի կողմից Փարիզում 1928-1929թթ. խմբագրվող, ընդգծված հակաթուրքական ուղղվածությամբ «Ազատամարտ» շաբաթաթերթում, ինչպես նաև Բուլղարիայի դաշնակցական «Նոր Արաքս» եւ «Ազատ խոսք» թերթերում (21):

1932թ. Սոֆիայում լույս տեսավ նրա հերթական գրքույկը՝ **«Ցեղի ոգու շարժը»** վերնագրով, որում (ինչպես նաև «Խռովք» ամսագրում նույն թվին լույս տեսած «Ցեղակրոնությունն իբրև հաղթանակի զորույթ» հոդվածում) նախանշվեց հայկական ցեղային շարժումը:

1933թ. Փարիզում կայացավ Յ.Յ.Դ. 12-րդ Ընդհանուր ժողովը, որին Նժդեհը մասնակցում էր իբրև պատգամավոր Բուլղարիայից: Վերջինս ժողովի առջև բարձրացրեց եւ անցկացնել տվեց երեք հիմնական հարցեր.

ա) ձգտել, որ գաղթահայությունը դառնա զինական գործոն Դայաստանի ինքնապաշտպանության գործում,

բ) կազմակերպել հայ երիտասարդ սերունդը ապակուսակցական հողի վրա,

գ) բոլոր ուժերը կենտրոնացնել հակաթուրքական ճակատում (22):

Բ կետի հիման վրա, 1933թ. ամռանը Նժդեհը մեկնեց ԱՄՆ: Նժդեհի հետ, Ընդհանուր ժողովի որոշումով, ԱՄՆ անցավ կուսակցական հայտնի գործիչ Կոպեռնիկ Թանդրճյանը, որին հանձնարարված էր կազմակերպել ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Մուխտար-բեյի սպանությունը (վերջինս մասնակից էր արեւմտահայերի ջարդերին եւ արտասահմանում հակահայկական քարոզչության ղեկավարներից էր): Նժդեհը պիտի աջակցեր Թանդրճյանին այդ գործում (23):

ԱՄՆ-ում Նժդեհը ձեռնամուխ է լինում Ցեղակրոն շարժման ծավալմանը՝ երկրի հայաշատ վայրերում Ցեղակրոն Ուխտեր հիմնելով:

1934թ. սկզբին, Նյու Յորքի Սբ Խաչ եկեղեցում, դաշնակցական խմբապետի ձեռքով դաշունահարվեց ամերիկահայոց հոգեւոր առաջնորդ Ղեւոնդ արքեպս. Դուրյանը: Դուրյանի սպանության

կազմակերպման պատասխանատվությունը տարբեր ուժեր փորձեցին վերագրել Նժդեհին՝ Ցեղակրոն շարժումը չեզոքացնելու դավադիր մտայնությամբ (24):

«Իմ այդ ազգահոգ քարոզչության համար հայության հատվածակնացած, ապահայրենացած ու պարտվողական տարրերը դավադրեցին ինձ», - գրում է Նժդեհին իր «Ինքնակենսագրություն»-ում:

Ամեն դեպքում, Ցեղակրոն շարժումը զգալի հաջողություններ ունեցավ ԱՄՆ-ում, իսկ Նժդեհը 1934թ. աշնանը վերադարձավ Սոֆիա: Այստեղ, 1935թ. նա լույս ընծայեց **«Վճերիկահայությունը - Ցեղը եւ իր տականքը»** աշխատությունը՝ միաժամանակ նպատակ ունենալով ընդլայնել Ցեղակրոն շարժումը եւ այն դարձնել համազաղութային: Սակայն նրա հարաբերությունները Յ.Յ.Դ. ղեկավարության (հատկապես՝ կուսակցության փաստացի բյուրոյապետ Ռուբենի) հետ խիստ լարվեցին: Այդ հողի վրա, 1936թ., Բուլղարիայի կուսակցական կազմակերպությունը պառակտվեց: Հակասությունները Նժդեհի ու կուսբյուրոյի միջեւ այնքան էին սրվել, որ Բուլղարիայում Մայիսի 28-ը Ցեղակրոն Ուխտերն ու տեղի Դաշնակցության ԿԿ-ն նշում էին առանձին. ցեղակրոնները՝ Պլովդիվում, Վառնայում, ԿԿ-ն՝ Սոֆիայում ու Բուրգասում (25):

Այդ տարիներին ռուսների վտարանդիական, հակաբոլշևիկյան «ՌՕՎՍ» (Ռուսաստանյան համագորային միություն) կազմակերպությունը Բուլղարիայում դիմում է Նժդեհին՝ տալ 2-3 ահաբեկիչներ՝ Ստալինին մահապատժելու համար: Առաջարկը մերժվում է:

1937թ. Նժդեհը կանչվում է Կահիրե՝ կուսակցության բյուրո, որտեղ նրան փորձում են հաշտեցնել Ռուբենի հետ: Սակայն, Բյուրոյի հետ հանդիպումը ոչինչ չի տալիս, եւ Նժդեհը վերադառնալով Սոֆիա՝ նույն թվին հայտարարություն է անում Յ.Յ.Դ.-ից իր հեռանալու մասին: Բյուրոն եւս, առանց դանդաղելու, «պառակտողական զործունեության» որակումով՝ Նժդեհին կուսակցությունից հեռացնելու որոշում ընդունեց: Իսկ 1938թ. Կահիրեում գումարված Յ.Յ.Դ. 13-րդ Ընդհ. ժողովը Նժդեհին կուսակցության շարքերից՝ այս անգամ արդեն արտաքսելու վճիռ տվեց (26):

Կուսակցությունից հեռանալուց հետո Նժդեհը շարունակում է Ցեղակրոն կազմակերպությունների ընդլայնումը, եւ արդեն նախկին դաշնակցական Հայկ Ասատրյանի հետ 1937թ.-ից Պլովդիվում (1938-ից՝ Սոֆիայում) սկսում են հրատարակել «Ռազմիկ» ազգայնական թերթը: «Ռազմիկ»-ում Նժդեհին ունի բազմաթիվ հրապարակումներ, որոնց շարքում հատուկ պետք է առանձնացնել «Խոսակցություն մը զորավար Գ. Նժդեհի հետ» ծրագրային հարցազրույցը («Ռազմիկ», 1943թ., թիվ 169-174):

1937թ. Սոֆիայում լույս է տեսնում Նժդեհի **«Ճմ պատասխանը»** ուսումնասիրությունը՝ նվիրված Սյունիքի հերոսականին (27): Հիշատակելի է նաեւ «Հերկ» ամսագրում (որը խմբագրում էր Կարապետ Պալճյանը՝ ապագա Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը) Նժդեհի մեկ գրությունը ժամանակի հայ երիտասարդության ու նրա անելիքների վերաբերյալ՝ իբրեւ պատասխան «Հերկ»-ի խմբագրության հարցումներին (28):

Այդ տարիներին Նժդեհի համար վերստին կարեւորվում եւ հրատապ է դառնում հայությանը մոտեցող պատերազմին հոգեբանորեն նախապատրաստելու եւ նոր բարոյականով սպառազինելու խնդիրը: Այդ նպատակով, 1937-1938թթ., Հ. Ասատրյանի, Ն. Աստվածատուրյանի եւ այլոց հետ նախաձեռնում է Տարոնական շարժումը (1938-1939թթ. հանդես է գալիս շարժման պաշտոնական օրգան «Տարոնի Արծիվ»-ում):

1938թ., Հ.Յ.Դ. 13-րդ Ընդհանուր ժողովից հետո, կուսբյուրոյի լիազորությամբ, Սոֆիա է ժամանում դաշնակցական գործիչ Կարո Սասունին, որը հայտնում է Նժդեհին, թե Բյուրոն պատրաստ է ընդառաջել իր պահանջներին, միայն թե ինքը չստեղծի նոր կազմակերպություն: Նժդեհը, փաստարկելով, որ թուրքական թերթերն անընդհատ հարձակումներ են գործում ի՛ր վրա, բայց ո՛չ Հ.Յ.Դ.-ի, որ կուսբյուրոյի ամեն անդամ կարող է բնակվել Թուրքիային դաշնակից որեւէ երկրում, իսկ իրեն նույնիսկ արգելվում է տարանցիկ ճանապարհ այդ երկրներով, որ Հ.Յ.Դ. ղեկավարությունը թշնամանք է տածում Ցեղակրոնության եւ Տարոնականության նկատմամբ...

ինքը հիմք չունի հավատալու, թե Յ.Յ.Դ. նոր բյուրոն քաղաքականապես ավելի իմաստուն կգտնվի, քան նախորդը (29): Նմանօրինակ առաքելությամբ, 1939թ. Նժդեհի հետ տեսակցություն է ունենում Դրոն, հորդորելով նրան՝ խզել կապերը Բուլղարիայի ցեղակրոն կազմակերպության իր ընկերների հետ: Սակայն Նժդեհը մնում է անդրդվելի (30):

Եվ Նժդեհը սկսում է գործնական աշխատանքներ տանել՝ հրավիրելու Յ.Յ.Դ.-ից հեռացածների եւ Ցեղակրոն շարժմանը հարողների համագումար: Սակայն պայթեց Երկրորդ աշխարհամարտը, եւ ստեղծված իրադրությունը թելադրեց այլ պայմաններ:

* * *

Պատերազմի հենց սկզբից Գերմանիայում հակահայկական ալիք բարձրացավ. գերմանական շատ թերթեր արդարացնում էին հայերի 1915թ. ցեղասպանությունը, նացիստական մարդաբանական գիտությունը հայերին դասում էր «առաջավորասիական» (ոչ արիական) ժողովուրդների շարքում եւ ուներ խիստ բացասական կարծիք հայերի մասին (31), Բեռլինում պաշտոնապես հայտարարում էին, որ հայերն անցել են Գերմանիայի թշնամիների կողմը եւ այլն: Արձագանքելով դրան՝ Երկրորդ աշխարհամարտի առաջին օրերին Բուլղարիայում, Ռումինիայում ու Եվրոպական այլ երկրներում բարձրացան հակահայկական տրամադրություններ: Բուլղարիայում կային թերթեր եւ կազմակերպություններ, որոնք կոչ էին անում՝ հայերին արտաքսել երկրից, նրանց հետ վարվել հրեաների նման: Ռումինիայի վարչապետ Անտոնեսկուն հանձնարարել էր՝ հայերին տեղահանել հայաշատ քաղաքներից...

Այս իրավիճակում, Նժդեհը, «Մշակութային մերձեցման բուլղարահայկական կոմիտեի» (որի փոխնախագահն էր ինքը եւ, միաժամանակ, թղթակցում էր Սոֆիայում լույս տեսնող «Սվետոզլաս» բուլղարական գրական թերթին) միջոցով կապվում է Սոֆիայի գերմանական դեսպանության հետ, իսկ 1942թ. անցնում Բեռլին՝ հարցերը տեղում լուծելու համար: Բեռլին մեկնելու նյութական հնարավորություն ունենալու համար նա վաճառում է պատվո թրի

վրայի ոսկին, որը 1936թ. նրան էր նվիրել հայ մայրերի 12 հազարանոց կազմակերպությունը՝ ի նշան երախտագիտության իր հակաթուրքական-հայրենասիրական բազմամյա գործունեության:

Բեռլինում նա հանդիպում է նացիստական կուսակցության ներկայացուցչի հետ ու իր անհանգստությունը հայտնում գերմանացիների կողմից տարվող հակահայկական քարոզչության համար: Առաջնորդվելով «գերմանական գայլին կուշտ պահելու եւ հայ գառնուկին փրկելու» քաղաքական սկզբունքով՝ Նժդեհը վերջինիս հետ պայմանավորվում է Բուլղարիայում հավաքագրել հայերի մի խումբ՝ Բեռլինում վարժվելու եւ Գերմանիայի՝ Թուրքիայի դեմ հնարավոր պատերազմում օգտագործելու համար: Նա կապվում է Զ. Ասատրյանի հետ, որի միջոցով Բուլղարիայում հավաքագրվում եւ Գերմանիա են մեկնում 30 արեւմտահայ երիտասարդ ցեղակրոններ: Այնտեղ որոշ ժամանակ վարժվելուց հետո, հակառակ Նժդեհի հետ պայմանավորվածության, 1943թ. աշնանը խումբը ուղարկվում է Ղրիմ՝ Կարմիր բանակի թիկունքում օգտագործելու համար: Սակայն, գերմանական հրամանատարության հետ խոսելուց հետո, Նժդեհը կարողանում է հիմնավորել իր մարտիկների՝ ո՛չ թե Ղրիմում, այլ՝ Թրակիայում գտնվելու անհրաժեշտությունը (այդ ժամանակ խիստ սրվել էին գերմանա-թուրքական հարաբերությունները) եւ անձամբ ժամանում է Ղրիմ, ու խումբը վերադարձվում է Բուլղարիա:

Այսպիսով, Նժդեհի համագործակցությունը նացիստների հետ եղել է գաղթաշխարհի հայությանը գերմանական սպառնալիքից փրկելու մտահոգությամբ եւ հակաթուրքական հողի վրա:

Նժդեհն իր մասնակցությունն է բերել 1942թ. դեկտեմբերին Բեռլինում ստեղծված ու մինչեւ 1943թ. վերջը գործած Զայ Ազգային խորհրդի աշխատանքներին (խորհրդի նախագահն էր Արտաշես Աբեղյանը), որի օրգան «Ազատ Զայաստան»-ի փոխխմբագիրն էր (խմբագիր՝ Աբրահամ Գյուլխանդանյան):

Բեռլինում եղած ժամանակ, գերմանացիների միջնորդությամբ, հանդիպել է Դրոյի հետ՝ նացիստների հետ համագործակցության ձեւի ու համատեղ գործելու խնդիրների շուրջ առաջ եկած հակասությունները հարթելու համար: Սակայն Նժդեհի եւ Դրոյի միջեւ

հաշտեցում չկայացավ (32):

1944թ. սեպտեմբերին խորհրդային զորքերը մտան Բուլղարիա: «Գիտեմ, թե ինչ է սպասվում ինձ, բայց եւ այնպես որոշել եմ մնալ, հակառակ որ կարելիություն ունեն օդանավով ինձ նետելու Վիեննա: Չեմ հեռանում, որ հալածանքի չենթարկվեն մեր կազմակերպությունները (իմա՝ Բուլղարիայի Ցեղակրոն Ուխտերը - Մ. Լ.): Մնալու ավելի լուրջ պատճառներ ունեմ... Այսօր կյանքին ես կապված եմ այն չափով միայն, ինչ չափով որ ինձ դեռ պարտական եմ զգում ծառայելու Չայաստանին», - գրում էր Նժդեհը 1944թ. սեպտեմբերին, ձերբակալությունից քիչ առաջ (33):

1944թ. հոկտեմբերի վերջերին, խորհրդային «Սմերչ» (ռուսերեն *смерть шпионам* - «մահ լրտեսներին») բառակապակցության հապավումն է) բանակային հակահետախուզության գլխավոր վարչության աշխատակիցների կողմից Նժդեհը ձերբակալվում է: Նրան տեղափոխում են Բուխարեստ, այնտեղից՝ ինքնաթիռով Մոսկվա եւ բանտարկում Լյուբյանկայում:

Որո՞նք էին Նժդեհի՝ Բուլղարիայում մնալու լուրջ պատճառները:

Հանձնվելով կարմիրներին՝ Նժդեհը հույս ուներ, թե խորհրդային իշխանությունները իրեն, որպես հայ ազգայնականի, կօգտագործեն Թուրքիայի դեմ: Դրա համար, անշուշտ, իրական հիմքեր կային: Նա ենթադրում էր, որ Թուրքիան թիրախ կդառնա խորհրդային Միության համար (1945թ. խորհրդային բանակը, իրոք, պատրաստվում էր մտնել Թուրքիա), եւ Կարմիր բանակի՝ Թուրքիային հարվածի դեպքում, հնարավոր կլիներ ազատագրել Արեւմտյան Չայաստանն ու այն կցել Խորհ. Չայաստանին: Գիշտ է եզրակացնում պատմաբան Ռուբեն Խուրշուդյանը. «Նժդեհը համոզված էր, որ սվինների վրա կանգնած խորհրդային կայսրությունը վաղ թե ուշ անպայման կփլվի: Նա ուզում էր, որ կայսրության բեկորների վրա վերածնվեր ո՛չ թե փոքր հայկական պետություն, այլ՝ մեծ, միացյալ Չայաստանը, որի իրականացման գաղափարին էր նվիրել նա իր ողջ կյանքը» (34):

Փաստորեն, Արեւմտահայաստանի ազատագրման համար Նժդեհին իր քառասնամյա հակաթուրքական պայքարի փորձն էր առաջարկում խորհրդային իշխանություններին (այս խնդրի հետ

կապված՝ Մոսկվայում նա հատուկ խոսակցություն է ունենում գեներալ Աբակունովի հետ): Սակայն, միջազգային քաղաքական կյանքում իրադարձությունների հետագա փոփոխությունները ի նպաստ թուրքիայի, չարդարացրին Նժդեհի հույսերը. խորհրդային բանակը չչարժվեց թուրքիայի վրա:

1946թ. նոյեմբերին Նժդեհին Մոսկվայից ուղարկում են Երեւան, ուր դատաքննությունն ավարտվում է 1948թ.: Նժդեհը դատապարտվում է 25 տարվա բանտարկության՝ ժամկետը հաշվելով 1944 թվականից (ի դեպ, դատավճիռը կայացվել է ապրիլի 24-ին):

Նժդեհի ձերբակալությունից հետո ընտանիքը (կինը եւ զավակը) Սոֆիայից արքորվում է Բուլղարիայի Պավլիկենի քաղաքը (35):

1947թ. Նժդեհը խորհրդային կառավարությանն առաջարկում է հանդուգն մի ծրագիր. սփյուռքում ստեղծել համագաղութային ռազմաքաղաքական կազմակերպություն՝ «Հայկական իռեդենտա», որի նպատակը պետք է լիներ Արեւմտյան Հայաստանի ազատագրումը եւ նրա վերամիավորումը Խորհ. Հայաստանին: Առաջարկության մեջ Նժդեհը հանգամանակից անդրադառնում էր այդ կազմակերպության ստեղծման՝ պատմականորեն թելադրված անհրաժեշտությանը, նրա ապագա գործունեության ձեւերին, կառուցվածքին եւ այլն: Թեեւ Նժդեհի առաջարկությունը լրջորեն հետաքրքրեց խորհրդային ղեկավարներին եւ մի քանի տարի շարունակ ուսումնասիրվում էր ամենատարբեր ատյաններում, սակայն, ի վերջո, այն մերժվեց:

1948-1952թթ. Նժդեհը գտնվել է Վլադիմիրի բանտում, այնուհետեւ, մինչեւ 1953թ. ամառը՝ Երեւանի բանտում: Նժդեհի երկրորդ անգամ Երեւան բերվելը, ինչպես վկայում է նրա բանտակից Հովհաննես Դեւեջյանը (36), պայմանավորված էր նրանով, որ Նժդեհը դիմում էր գրել խորհրդային ղեկավարությանը՝ «առաջարկելով իր միջնորդությունը Դաշնակցության եւ խորհրդային իշխանության միջեւ հասկացողություն մը եւ գործակցություն մը ստեղծելու համար» (37): Այս խնդրի շուրջ երկար խոսակցություններ են տեղի ունենում Հայաստանի անվտանգության նախարարի հետ, որոնց արդյունքում, 1953թ., Նժդեհն ու Դեւեջյանը Երեւանի բանտից, համատեղ,

նամակ են գրում Ս. Վրացյանին (որն այդ ժամանակ Դաշնակցության հետախուզական դպրոցի տնօրենն էր), հորդորելով նրան մերձենալ ռուսներին՝ հակաթուրքական հողի վրա: Սակայն Մոսկվայում նպատակահարմար չգտան նամակն ուղարկել, և այն մնաց որպես միայն փաստաթուղթ (38):

Այնուհետև, Նժդեհին նորից տեղափոխում են Վլադիմիր, ուր են մահանում է 1955թ. դեկտեմբերի 21-ին (Դեկտյանը նշում է նոյեմբերի 21-ը, որը ճիշտ չէ):

Խորհրդային ղեկավարությունը Նժդեհին զրկեց ընդհանուր ներումից օգտվելու իրավունքից. դա այն դեպքում, երբ դրան արժանացան զգալի թվով հակախորհրդային գործիչներ և գերմանական բանակի զորավարներ:

Ստանալով բանտային վարչության հեռագիրը Նժդեհի մահվան մասին, եղբայրը՝ Լեւոն Տեր-Չարությունյանը, Երևանից շտապ մեկնում է Վլադիմիր: Նրան համձնվում են եղբոր զգեստն ու ժամացույցը, իսկ ձեռագրերը՝ ոչ: Թույլ չի տրվում նաև մարմինը տեղափոխել Հայաստան: Լեւոնը կատարում է եղբոր թաղումը, գերեզմանը ցանկապատել տալիս ու տախտակի վրա, ռուսերեն, պատվիրում գրել՝ «Տեր-Չարությունյան Գարեգին Եղիշի (1886-1955)» (39):

* * *

Սակայն, ինչպես ամեն մի իրական հերոս, Նժդեհը չմոռացվեց: 1963թ. սեպտեմբերին Բոստոնի «Հայրենիք» ակումբում բացվեց Նժդեհի կիսանդրին, որը պատրաստվել էր Բեյրութում, արձանագործ Ջավեն Խտշյանի ձեռքով (40): Այս առթիվ տեղի ունեցավ մեծ հանդիսություն, «Հայրենիք» օրաթերթը բացառիկ համար լույս ընծայեց՝ գրեթե ամբողջովին նվիրված Նժդեհին (1963թ., 13 սեպտեմբերի), բացառիկ թիվ հրատարակեց նաև Հայ երիտասարդաց դաշնակցության պաշտոնաթերթ «Հայրենիք» անգլերեն շաբաթաթերթը: Իսկ 1968թ., Բեյրութում, «Համազգային»-ը հրատարակեց Նժդեհին նվիրված ծավալուն և շքեղ մի գիրք՝ կազմված Ավոյի (Ավետիս Թումոյան) կողմից (1989թ. այն վերատպվեց Լոս Անջելոսում՝ Յ.Յ.Դ. «Ռոստոմ» կոմիտեի հրատարակությամբ): Այս ամենը վկայում է, որ

անկուսակցական դարձած Նժդեհը Դաշնակցության կողմից վերաբ-
ժեքավորվում էր:

1993թ., Երեւանում, Յ.Յ.Դ. «Դեպի Երկիր» մատենաշարով լույս
տեսավ Նժդեհի **«Ճորհրդածությունները»**, որում ներկայացված են
նրա սովետական բանտախցերում գրած մտածումներն ու խոհերը,
ինչի գոյության մասին (իբրեւ ձեռագիր) դեռեւս վկայել է Նժդեհի
բանտակից Դեւեջյանը:

1983թ. Նժդեհի աճյունը, գերեզմանի լուսանկարի օգնությամբ եւ
Նժդեհի հարազատներից մեկի միջոցով, Վլադիմիր քաղաքի գերեզ-
մանատնից գաղտնի տեղափոխվում է Երեւան: Նույն տարի, աճյունից
մի նշխար անփոփվում է Խուստուփ լեռան լանջին՝ Կոզնի կոչված
աղբյուրի մոտ, իսկ հիմնական աճյունը, ցինկե արկղի մեջ մի քանի
տարի պահելուց հետո, 1987թ. հանգրվանում է Գլաձորի Սպիտակա-
վոր վանքի բակում (41):

Իր մահից տասնամյակներ անց միայն՝ 1992թ. մարտի 30-ին,
Նժդեհը ՀՀ դատախազության կողմից արդարացվեց, ինչի կարիքը
երբեւէ չուներ:

Ծանոթագրություններ

* Գ. Նժդեհի ծննդյան տարեթվի եւ ամսաթվի հարցում հետեւել ենք
նրա կենսագիրներ Ավոյին եւ Օ. Ջարմունուն, որոնք նշում են 1886թ.
հունվար 1-ը: Տե՛ս Ավո, «Նժդեհ», էջ 19: Արտավազդ (Օ. Ջարմունի),
«Ջոր. Գ. Նժդեհ - Մարդը եւ Մարտիկը». Ազգային գիտակցություն,
Երեւան, 2008թ., էջ 224:

1. Կ. Գեւորգյան, «Ամենուն տարեգիրքը», Բեյրութ, 1962թ., էջ 158,
162-163:

2. Ավո, «Նժդեհ», էջ 67:

3. Մենք չենք անդրադառնա Սյունիքի կռիվների մանրամասներին.
դրանք հանգամանակից շարադրված են Վարդան Գեւորգյանի
«Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921)», Գ. Նժդեհի «Իմ պա-
տասխանը» գրքերում եւ վերջինիս՝ Բոստոնի «Հայրենիք» ամսագրում

1923-1925թթ. լույս տեսած հոդվածաշարում: Կարծում եմք, որ ճշմարիտ չափանիշներով առաջնորդվող պատմագիտությունը դեռ կվերարժեքավորի Սյունիքի հերոսամարտը՝ տալով նրա արժանի գնահատականն ու տեղը ո՛չ միայն 20-րդ դարի, այլև ողջ Հայոց պատմության մեջ:

4. Գ. Նժդեհ, «Իմ պատասխանը», Սոֆիա, 1937թ., էջ 31:

5. Վ. Գեւորգյան, «Լեռնահայաստանի հերոսամարտը», Բուխարեստ, 1923թ., էջ 51:

6. «Արնոտ գիրք», Գորիս, 1921թ., էջ 33-34:

Դավիթբեկյան Ուխտերի օրինակով էր, որ Նժդեհը հետագայում հիմնադրեց Ցեղակրոն Ուխտերը:

7. Գ. Նժդեհ, «Ինքնակենսագրություն»:

8. Վ. Գեւորգյան, նշվ. աշխ., էջ 114-115:

9. Ավո, «Նժդեհ», էջ 210:

10. Վ. Գեւորգյան, նշվ. աշխ., էջ 160:

11. Երբեմն կարճամտորեն պնդվում է, թե առանց Նժդեհի վարած կռիվների էլ խորհ. Ռուսաստանը Ջանգեզուրը կթողներ Հայաստանին, քանզի, հակառակ դեպքում, Նժդեհի հեռանալուց հետո, այն կարող էր կցել Ադրբեջանին: Ըստ մեզ, եթե 1921թ. մարտի ռուս-թուրքական պայմանագրի նախօրյակին Ջանգեզուրում լինեին ո՛չ թե Նժդեհի մի խումբ ուխտյալները, այլ՝ Կարաբեքիրի զորքը (եւ այդ դեպքում ո՛չ միայն շատ գյուղեր թուրքաբնակ կլինեին, այլ՝ մնացածներն էլ՝ հայաթափ), միանշանակ կարելի է պնդել, որ Ռուսաստանը Սյունիքը կարժանացներ Նախիջևանի ու Ղարաբաղի ճակատագրին: Ավելին, Սյունիքը Ադրբեջանին թողնելուց հետո, արդյոք խորհրդային Ռուսաստանը հետագայում կհանդուրժե՞ր Հայաստանի՝ իբրեւ առանձին խորհրդային հանրապետության գոյությունը, թե՞ այն կտարրալուծեր Վրաստանի եւ Ադրբեջանի մեջ:

12. Ի դեպ, Նժդեհը եղել է Փետրվարյան ապստամբության նախածեռնողներից եւ ինքն է տվել «Հայրենիքի փրկության կոմիտե» անվանումը (տե՛ս Խմբապետ Մարտիրոս Աբրահամյան, «Իմ հիշելի հուշերը», Թեհրան, 1978թ., էջ 28-30):

13. Դատը հարուցվել է ՀՀ կառավարության վարչապետ Սիմոն Վրացյանի եւ մի շարք հասարակական գործիչների կողմից: Դատը

սկսվել է 1921թ. հուլիսի 24-ին, իսկ դատավճիռն արձակվել է նույն թվականի սեպտեմբերի 29-ին: Սույն դատական գործը կազմում է 487 էջ եւ պահվում է Յ.Յ.Ռ. Բոստոնի կենտրոնական արխիվում (թիվ 1611-28):

Դատի մասին հպանցիկորեն հիշում է նաեւ հայտնի դաշնակցական գործիչ Անդրե Անուրյանը (Ավո, «Նժդեհ», էջ 444-445):

14. Յ.Յ.Ռ. Կենտրոնական արխիվ, գործ 1611-28, էջ 108-162, 213-230: Տե՛ս նաեւ՝ «Նորք» հանդես, Երեւան, 1923թ., թիվ 3, էջ 328-363:

15. Յ.Յ.Ռ. Կենտրոնական արխիվ, գործ 1611-28, էջ 375-378: Տե՛ս նաեւ՝ «Նոր Աշխարհ» ամսագիր, Թիֆլիս, 1922թ., թիվ 3, էջ 138-141:

16. ՀՀ ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գործ 11278, հտ. 3:

17. 1919թ. դեկտեմբերին, Երեւանում, Նժդեհին աղջիկ է ծնվել՝ Գոհար Մելիք-Ռադայանից: Երեխայի ծննդի մասին Նժդեհն իմացել է Ջանգեզուրում եղած ժամանակ եւ, հավանաբար, նրան չի տեսել: Այդ են վկայում նաեւ երեխայի ոչ հայկական անունը եւ մոր ազգանունով գրվելը՝ Լիլիա Մելիք-Ռադայան:

18. Նժդեհը կարդացել է ձեռագիրը եւ հավանություն տվել (Ավո, «Նժդեհ», էջ 452):

19. Բուխարեստում, Հովհաննես Քաջազնունու հետ, կարճ ժամանակ բնակվել են Սարգիս Արարատյանի (ՀՀ օրոք՝ ֆինանսների նախարար, հետագայում հեռացավ Յ.Յ.Ռ.-ից) բնակարանում եւ երեքով բազմիցս քննարկել Քաջազնունու «Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլեւս» հայտնի աշխատությունը՝ մինչեւ հրատարակվելը:

Մասնավորապես Նժդեհը, ամենից առաջ, ճիշտ էր համարում դնել Յ.Յ.Ռ. պատասխանատվության հարցը, այլ ո՛չ ինքնալուծարման, ինչպես գտնում էր Քաջազնունին (ՀՀ ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գործ 11278, հտ. 2):

20. «Նոր Արշալույս», Բուխարեստ, 1923թ., թիվ 10-11:

21. Ուշագրավ է «Նոր Արաքս» թերթում Նժդեհի «Բաց նամակ Մայքլ Առլենին» հոդվածաշարը («Նոր Արաքս», Սոֆիա, 1930թ., թիվ 11, 12, 15-18):

22. ՀՀ ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գործ 11278, հտ. 2:

23. Նույնը, հտ. 3:

24. Նժդեհը թեւ խիստ բացասաբար էր վերաբերվում Ղեւոնդ

արքեպս. Դուրյանի անձին, սակայն գտնում էր նաև, որ այդ սպանությունը հնարավորություն տվեց ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Սուխտար-բեյին՝ թաքնվելու եւ փրկվելու իրեն սպասվող հարվածից: Ըստ Նժդեհի, Դուրյանի սպանությունը կազմակերպված է եղել անմիջականորեն Ռուբեն Տեր-Մինասյանի կողմից: Տեր-Մինասյանն ու մի խումբ Դաշնակցական ղեկավարներ փորձում էին մտերիմ հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ, եւ որպեսզի կանխվեր Սուխտար-բեյի սպանությունը (ինչը կարեր հարաբերությունները թուրքերի հետ), Ռուբենի անմիջական հրահանգով իրականացվեց *(միզուցե արագացվե՞ց- Մ. Լ.)* Դուրյանի սպանությունը: Սպանության շուրջ մեծ աղմուկ բարձրացավ: Դա ազդանշան հանդիսացավ Սուխտար-բեյին՝ աներիկյան կառավարության մոտ բարձրացնելու իր անվտանգության ապահովման հարցը եւ խույս տալու հայ վրիժառու բազկի հարվածից (ԱՄՆ արխիվ, գործ 11278, հտ. 3):

25. Ռ. Սարտիրոսյան, «Դաշնակցության հակաժողովրդական գործունեությունը 2-րդ համաշխարհային պատերազմի տարիներին», էջ 48-49:

26. Պիտի ասել, որ Նժդեհի պես անհատականությունները կուսակցական կյանքի մարդիկ չեն: Նրա նման հեղինակությունը կարող էր լինել միայն համազգային առաջնորդ: Սա Նժդեհի եւ Յ.Յ.Դ. ղեկավարության հակադրության հոգեբանական պատճառներից է:

Տարածում է գտել այն կարծիքը, թե Նժդեհի հեռացումը Յ.Յ.Դ.-ից կապված է Ցեղակրոնության հետ, ինչը, մեր կարծիքով, մասամբ է ճիշտ:

Հայաստանի խորհրդայնացումից հետո, տարագրության մեջ եղած ժամանակ, Նժդեհը, մինչեւ 1932թ., իր հրապարակումներում, ելույթներում երբեւէ հանդես չի եկել որպես Դաշնակցության շեփոհար, այլ՝ արժարժեւ է համահայկական, համազգային խնդիրներ: Ցեղակրոն շարժման ծավալման նախաշեմին նա սկսում է իր գործերում պանծացնել Դաշնակցության՝ փառաբանության արժանի էջերը եւ խոսել *դաշնակցականության* (իմա՝ ճշմարիտ Դաշնակցականի գաղափարախոսության, բարոյականի) մասին: Նժդեհը հասկանում էր, որ Ցեղակրոն շարժումը կարող է հաջողություն ունենալ միայն ամուր եւ համահայկական կառույցի միջոցով, իսկ Յ.Յ.Դ.-ն՝ իբրեւ այն ժամանակվա սփյուռ-

քահայ ամենաազդեցիկ կազմակերպությունը, կարող էր լինել այդպիսին: Եվ Նժդեհը փորձեց գործը գլուխ բերել կուսակցության միջոցով, որի համար նախ անհրաժեշտ էր այն վերակառուցել՝ տալ նրան նոր գաղափարախոսություն եւ ունենալ դրան համապատասխան ղեկավարություն:

Իր կողմից, Յ.Յ.Դ. գործող բյուրոն հանդուրժեց Նժդեհին քարոզել Ցեղակրոնությունը ԱՄՆ-ում՝ այնտեղի կուսակցական կառույցները վերակենդանացնելու համար: Սակայն, Նժդեհի անձնական հեղինակության բարձրացմանը զուգահեռ, խորացավ ներկուսակցական հակամարտությունը Նժդեհի եւ բյուրոյապետ Ռուբենի միջեւ, որի արդյունքը եղավ Նժդեհի հեռացումը կուսակցությունից: Պատահական չէ, որ իր վերջին դատական քննության ժամանակ նա հայտարարել է, թե կուսակցությունից հեռացել է Ռուբենի հետ անձնական թշնամության հանգամանքի բերումով (*այս մասին տես նաեւ Նժդեհի «Մատնություն, թե՞ պրովոկացիա» գրությունը. «Ռազմիկ», Սոֆիա, 1938թ., թիվ 59*): Փաստորեն, այդ հեռացումը պայմանավորված է Նժդեհ-Ռուբեն պայքարով, պայքար կուսակցության լինելիք քաղաքական գծի, գաղափարախոսության, որով եւ՝ ղեկավարության համար: Իսկ դա Ցեղակրոնության հետ կապված է այնքանով, որքանով այդ ուսմունքի հեղինակը Նժդեհն էր:

Ի դեպ, 1935թ. Ռ. Դարբինյանին գրած նամակում Ռուբենը, առանց շատ թե քիչ լուրջ հիմնավորումների, Ցեղակրոնությունը համարում էր վտանգավոր, իսկ նրա գաղափարը՝ անհեթեթ (տես «Չայրենիք» ամսագիր, Բոստոն, 1963թ., թիվ 11, էջ 24):

27. Նժդեհը հեղինակ է նաեւ **«Ռազնակցության պանթեոնը»** վերնագրով փոքրիկ գրքույկի, որը տպագրվել է 1917թ., Ալեքսանդրապոլում, ինչպես նաեւ՝ Շերամի հետ, իբրեւ նվեր հայ զինվորներին, պատրաստել է *«Ձինվորական մարզանք եւ կանոնադրություն»*, որը տպագրվել է 1918թ., Երեւանում:

28. «Չերկ», Բուխարեստ, 1938թ., թիվ 9, էջ 5-6:

29. ԳՅ ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գործ 11278, հտ. 2:

30. Տես Դրոյի նամակը Ս. Վրացյանին (15 օգոստոս 1939թ., Բուխարեստ), որի բնօրինակը պահվում է Յ.Յ.Դ. Բոստոնի կենտրոնական

արխիվում («Բանբեր Հայաստանի արխիվների», Եր. 2006թ., թիվ 1):

31. Նման մտայնության դեմն առնելու համար, դեռ 1934թ., Բեռլինի գերմանա-հայկական ընկերությունը (նախագահ՝ Պաուլ Ռոհրբախ, փոխնախագահ՝ Արտաշես Աբեղյան) Պոտսդամում գերմաներենով հրատարակեց «Հայկականություն - Արիականություն» ուսումնասիրությունը: Այն, իտալերեն թարգմանությամբ, 1939թ. լույս տեսավ Հռոմում:

Ուսումնասիրությունը, որում մի շարք հեղինակավոր (հիմնականում՝ գերմանացի) գիտնականներ ու հանրային գործիչներ հիմնավորում էին հայերի արիական ծագումը, ինչպես երևում է, առանձնակի ազդեցություն չի ունեցել նացիստ տեսաբանների կարծիքի վրա, այլպես, Երկրորդ աշխարհամարտի սկզբին այդ խնդիրը վերստին չէր արժարժվի:

Գրքի հայերեն թարգմանությունը լույս է տեսել 2001 թվականին, Երևանում:

32. Պետք է ասել, որ Նժդեհի ու Դրոյի միջև տարածայնություններ եղել են նաեւ մինչ այդ: Դեռ 1920թ., Գորիսի պատմական ժողովում, ուր վճռվում էր Կարմիր բանակի ներխուժման դեմն առնելու հարցը, եւ ժողովականները, հակառակ Նժդեհի կռվելու կոչերին, որոշեցին դիմադրություն ցույց չտալ, Դրոն խիստ քննադատվեց Նժդեհի կողմից՝ բռնած կրավորական դիրքի համար (Ավո, «Նժդեհ», էջ 490-491): Նրանց միջև տարածայնություններ կային նաեւ 1920թ. հունվարի Շուռնուխի արշավանքի նպատակահարմարության շուրջ (հետագան ցույց տվեց, որ տեղին էին Նժդեհի նախազգուշացումները): Դրոն գործուն մասնակցություն ունեցավ Բուլղարիայի կուսակցական կառույցում Նժդեհի դիրքերի թուլացման (մասնավորապես, Յ.Յ.Դ.-ից Հայկ Ասատրյանի հեռացման) գործում՝ այդ ժամանակ լինելով Բյուրոյի ներկայացուցիչը Բալկաններում: Նրանց միջև եղել են նաեւ անձնական բնույթի ընդհարումներ (օրինակ՝ տես Եղիշե Իշխանյան, «Լեռնային Ղարաբաղ. 1917-1920», Երևան, 1999թ., էջ 681):

33. Գ. Նժդեհ, «Ինքնակենսագրություն»:

34. Գ. Նժդեհ, «Խորհրդածություններ», Երևան, 1993թ., էջ 14-15:

35. Կարո Գեւորգյանը գրում է, որ Բուլղարիայի նրա զավակը եղել է որդեգիր (Կ. Գեւորգյան, «Ամենուն տարեգիրքը», Բեյրութ, 1958թ., էջ

160): Նույնն է հաղորդում Օնիկ Ջարմունին (Օնիկ Փանիկյան, «Լուսաբանություն», Երեւան, 2006թ., էջ 112):

Իր հուշերում Յովհ. Դեւեջյանը բերում է Նժդեհի զավակի անունը՝ Սուքիաս Վրեժ (տե՛ս Արմեն Սեւան, «Բանտարկյալի մը հուշերը», Բուենոս Այրես, 1970թ., էջ 72): Հավանաբար, ծնունդի անունը Սուքիաս է, Նժդեհը կնքել է նաեւ Վրեժ: Նույն Դեւեջյանը հիշում է, որ Նժդեհի՝ բանտում գրված ձեռագրերից մեկը, մի քանի տասնյակ էջ, նվիրված էր իր զավակին եւ կրում էր «Իմ ողբերգությունս՝ զավակս» վերնագիրը (նույնը, էջ 101):

Կինը (ծնվ. 1902թ.) տառապեց սրտի հիվանդությամբ եւ 1958թ. մեռավ հիվանդանոցում, անտեր: Իսկ զավակը (ծնվ. 1936թ.), որ նույնպես ծանր կյանք է ունեցել, մահացել է Բուլղարիայում, 1997թ.:

36. Նժդեհի եւ Դեւեջյանի հարաբերությունները, մինչեւ բանտում հանդիպելը, կազմակերպական ներքին տարակարծությունների հետեւանքով, խիստ անբաղձալի վիճակի մեջ էին: 1948թ., Վլադիմիրի բանտում հանդիպելով (թեւեւ մինչ այդ Երեւանի բանտում եղել են հարեւան խցիկներում, բայց առիթ չեն ունեցել տեսնվելու), ընդհանուր տառապանքի թելադրումով, հաշտվել են: Մինչեւ 1954թ. հոկտեմբերը եղել են միասին ու այլեւս չեն տեսնվել: 1955թ., ընդհանուր ներման շնորհիվ, Դեւեջյանը բանտից ազատվել է եւ 15 տարի հետո, Արմեն Սեւան գրական ծածկանունով, գրել իր հայտնի հուշերը Նժդեհի բանտային կյանքի մասին:

37. Արմեն Սեւան, «Բանտարկյալի մը հուշերը», Բուենոս Այրես, 1970թ., էջ 107:

38. «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, Երեւան, 1993թ., թիվ 34: «Երկիր» օրաթերթ, Երեւան, 1992թ., 31 դեկտեմբերի:

39. Արմեն Սեւան, «Բանտարկյալի մը հուշերը», էջ 133: Էջ 134-ում զետեղված է Վլադիմիրում Նժդեհի գերեզմանի լուսանկարը:

40. Կ. Գեւորգյան, «Ամենուն տարեգիրքը», 1964թ., էջ 577:

41. Վ. Առաքելյան, «Նժդեհ», Երեւան, 1989թ., էջ 72: Ա. Բունիաթյան, «Նժդեհի վերադարձը», Երեւան, 1999թ.:

▪ **ՏԱՐՈՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ**

▪ **ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ**

«Մեռնել, բայց չտեսնել Հայրենիքը պարտված: Հաղթանակից կյանքի բարոյական կանոն հորինել, պարտությունը ստեղծագործաբար ողբերգել եւ դրանից մեծագործունի նոր ուժ եւ խանդ երկնել:

Այդպես չէ՞ր երբեմն հայը:

Ասում ենք՝ այդպես էր, ուզում ենք էլի՛ այդպես լինի եւ քարոզում ենք ՏԱՐՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»:

Հ. ԱՍԱՏՐՅԱՆ

Ա) ՏԱՐՈՆԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Յ.Յ.Դ-ից Նժդեհի եւ Յայկ Ասատրյանի հեռացումով՝ Ցեղակրոն շարժումը սկսեց տեղատվություն ապրել: Ամերիկայի Յ.Յ.Դ. Ցեղակրոն Ուխտերը, որոնք արդեն կուսակցականացվել էին, այլեւս չէին կարող հանդես գալ որպէս համահայկական կառույցի հիմք: Ուստի, անհրաժեշտություն կար համագաղութային մի նոր շարժումի:

Միաժամանակ, Ցեղակրոն ուսմունքը չէր պատասխանում ոգու եւ արարչագործության հետ կապված մի շարք հարցերի, եւ կարիք կար տալու դրանց հիմնավորումները: Ցեղակրոնության նկատմամբ անտարբեր կամ անբարյացակամ վերաբերմունք ուներ Յայ եկեղեցին, որն ազդեցիկ ուժ էր գաղութահայ կյանքում. թելադրող այս իրականությունը պետք էր հաշվի առնել: Հետեւաբար, անհրաժեշտ էր ամբողջացնել Ցեղային աշխարհայեցողությունը, այն միավորիչ դարձնել հայության բոլոր հատվածների, այդ թվում՝ եւ Յայ եկեղեցու համար (1):

Նոր շարժման նախաձեռնող կորիզը հիմնականում եղավ Բուլղարիայի Ցեղակրոն կազմակերպությունը՝ ի դեմս Գ.Նժդեհի, Յ. Ասատրյանի, Ն. Աստվածատուրյանի, որոնք 1937թ.-ից Պլովդիվում հրատարակում էին «**Ռազմիկ**» թերթը (2), որի էջերում էլ այդ թվականից սկսեցին լույս տեսնել առանձին հրապարակումներ Տարոնականության վերաբերյալ:

Շարժման հենարանը հանդիսացավ Տարոն-Տուրուբերանի հայրենակցական միությունը (հիմնվել է 1917թ.-ին, ԱՄՆ-ում), որը լինելով առավել հզորը համանման միությունների մեջ, գաղութներում հանդիսանում էր Ցեղակրոն շարժման ամուր հենարաններից մեկը: Միությունը որդեգրել էր որպէս հավատո հանգանակ, իր զինանշանի վրա արձանագրել էր դարերի խորքից քաղված Մամիկոնեից Ուխտը՝ «**ՔԱԶՈՒԹԵԱՄԲ ՄԵՈՑՈՒՔ Ի ՎԵՐԱՅ ԱՇԽԱՐՀԻՍ ՄԵՐ ԵՒ Ի ՎԵՐԱՅ ԱԶԳԻՍ ՄԵՐ, ԵՒ ՄԻ ՏԵՍՅԵՆ ԱԶՔ ՄԵՐ ԿՈՒՍԱՆ ՈՏԻՑ ՊՂԾԱԼԻՑ ԼԵԱԼ ԶՍՐԲԱՐԱՆՍ ՄԵՐ**» (3), որով արդեն հաստատել, որ ինքը սովորական հայրենակցական միություն չէ, այլ ավելի «քաղաքական բնույթ կրող

հայրենասիրական կազմակերպություն մը, հին ասպետական ուխտերու տիպարով» (4):

Եվ ահա՛, 1938թ. ապրիլին, Սոֆիայում, Տարոն-Տուրուբերանի հայրենակցական միությունը (Տ. Տ. Յ. Ս.) սկսեց լույս ընծայել **«Տարոնի Արծիվ»** ամսաթերթը՝ Հայկ Ասատրյանի խմբագրությամբ (պատասխանատու տնօրեն՝ Ներսես Աստվածատուրյան), որով ավետվեց տարոնական ոգու վերածնունդը եւ սկիզբը դրվեց Տարոնական շարժման:

Որո՞նք էին շարժման նախադրյալները եւ ի՞նչ նպատակներ ունեին այն նախաձեռնողները:

Դրանք հիմնականում նույնն էին, ինչ Ցեղակրոն շարժման դեպքում:

Հայ ճակատագրի տագնապն էր ծնունդ տալիս Տարոնական հոգեվերանորոգչական շարժմանը, որի ղեկավարները ելնում էին այն ճշմարտությունից, թե փոփոխելի է ամեն ճակատագիր, եթե կա բարոյական վերանորոգում:

Դա մի ժամանակ էր, երբ ներքին պառակտիչ պայքարները, փոխադարձ անհանդուրժողականությունն ու ատելությունը գաղթահայությանը կանգնեցրել էին դժոխքի շեմին: Եվ ժամանակի հրամայականն էր՝ բնականորեն վերջ տալ հայության քաղաքական հոսանքների, կրոնական հարանվանությունների, անձնանպատակ խմբերի միջեւ մղվող ներքին հայակործան պայքարներին:

Դա մի ժամանակ էր, երբ աշխարհում ազգերը վերաքննում էին սեփական արժեքները, որոնում իրենց պարտությունների եւ դժբախտությունների պատճառները, սպառազինվում հին, բայց մշտապես նոր ու պատմականորեն արդարացված հավիտենական արժեքներով:

Այդ նույն ժամանակի պահանջն էր եւ Տարոնական շարժումը, որը եկավ վերածնելու ու վերակոչելու Ցեղի հավիտենական առաքինությունները, հոգեբարոյական հեղաշրջում անելու օրվա ճահճացած, դատապարտվածության զգացումով ապրող եւ այլասերումի ենթակա հայության մեջ:

«Դա բարոյական հեղաշրջում է, որով կրնա իր ոգին ուժաստանի վերածել հայ ռազմիկը, իր երեւակայությանը ստեղծագործ թափ ու

թել տալ հայ մտավորականը, իր քաղաքական գործի մեջ նպատակ, հանձնար եւ սրբություն դնել հայրենապաշտ հայ կուսակցականը» գրում էր «Տարոնի Արծիվը» (5):

Հայության վերածննդի ճանապարհը տեսնելով նրա ցեղայնացման՝ սեփական ցեղային արժեքների վերականգնման, դրանց վերարծարծման ու վերապրումի մեջ՝ Տարոնական շարժման առաջնորդները հայտարարում էին. «Ցեղ էինք եւ կցեղայնանանք: Ցեղ էինք եւ հզոր էինք. կցեղայնանանք, որպեսզի կրկին հզորանանք» (6):

Հանդգնված, որ առանց Հայրենիքի տարագիր հայությունը, ի վերջո, դատապարտված է կորստյան, Տ. Տ. Հ. Մ.-ն իր կողմնորոշումը հռչակեց Տարոնականությունը՝ այն հաստատուն հավատով, որ «Տարոնականության ոգին փրկարար դեր պիտի կատարե հայությունը իր ներկա անկերպարան վիճակեն դուրս բերելու եւ իր պատմական Հայրենիքին տեր դարձնելու համար» (7):

Քաջ հասկանալով պատմության տրամաբանությունը եւ կանխագգալով պատերազմը՝ Տարոնական շարժման առաջնորդները նպատակ ունեցան հայությանը գալիք արհավիրքին հոգեբանորեն նախապատրաստելը, նոր բարոյականով սպառնազինելը (8):

Քաղաքական շարժում կամ նոր կուսակցություն ստեղծելու փորձ չէր, որ ձեռնարկում էին Տարոնական շարժման հիմնադիրներն ու Տ. Տ. Հ. Մ.-ը: Նրանց նպատակն էր՝ պատրաստել Ազգի եւ Հայրենիքի համար անշահախնդիր պայքարողներ ու նրանցով մատակարարել, ոգեպես սնել եղած կուսակցությունները:

Հիմնելով Տարոնականությունը՝ շարժման գաղափարախոսները, միաժամանակ, նպատակ ունեին կառուցելու հայկականորեն հիմնավորված աշխարհայեցողություն, ազգային ընդհանուր տեսություն (Եկեղեցու աստվածաբանական աշխարհայեցողությունը, նախ, ուներ տարանուն շերտավորումներ եւ այդպիսով միացուցիչ ուժ չէր. հետո, նա ընդունակ չէր քայլելու կյանքի պատմական զարգացման հետ ու իրականացնելու հայության բարոյական վերազինումը):

Հենց սկզբից էլ փշոտ եղավ Տարոնականության ճամփան: Հայության՝ հոգով տկար, անցավոր ներկայով բավարարվող, Ցեղի

էութեանն անժանոթ տարրերը պայքար ծավալեցին Տարոնական շարժման դեմ՝ մեկ ամբաստանելով նրան որպէս քաղաքական նոր կուսակցություն ստեղծելու փորձ, որն իբր պիտի հակադրվեր մնացած հայկական կուսակցություններին, մեկ՝ որպէս տարոնցի հայերի հատվածական շարժում (9) եւ այլն: Մասնավորապէս, Սիմոն Վրացյանն իր կողմից խմբագրվող «Վեմ» հանդեսում խիստ բացասական արտահայտվեց Տարոնականության հասցեին, միաժամանակ՝ շարժմանը վերագրելով անհիմն մեղադրանքներ (10): Դրանց հերքումով՝ Հայկ Ասատրյանը «Տարոնի Արծիվում» հանդես եկավ «Հարկադրական մի պատասխանով» (11):

Ինչեւէ, պայթեց երկրորդ աշխարհամարտը, եւ գաղթահայությունը մնաց առանց հոգեբանական նախապատրաստման: 1939թ.-ին Դիտրոյտում գումարված Տ. Տ. Հ. Մ.-ի պատգամավորական ժողովն իր օրակարգում քննեց Տարոնականությունը: Ժողովը, որ ընդամենը մեկ տարի առաջ, էքրըն Օհայոյի մեջ հայտարարում էր, թէ «կշնորհավորե եւ քաջալերական խոսք կուղղէ «Տարոնի Արծիվ»-ին՝ իր ուղղության համար» (12), արեց տրամագծորեն հակառակ հայտարարություն. «Տարոնի Արծիվ»-ի մեջ պետք է լույս տեսնեն այնպիսի գրություններ, որոնք կվերաբերին Տարոնի աշխարհին... Տեսական բնույթ ունեցող այն գրությունները, որոնք կծգտին նոր վարդապետություն մը հաստատել, ինչ անունի ներքեւ ալ ըլլան, պետք չէ որ մուտք գործեն մեր պատմության մեջ» (13):

Այդպիսով, Տարոնական համահայկական ուսմունքը պիտի փոխարինվեր տարոնցիական մանրապատումներով եւ, որ ամենացավալին է, չէր հանդուրժվում ո՛չ մի ազգային ուսմունք, որի կարիքը այնքան ուներ (եւ ունի) հայությունը: Հասկանալի է նաեւ, որ Տ. Տ. Հ. Մ.-ն այդ հայտարարությունն անում էր ոչ այնքան սեփական ցանկութեամբ, որքան այլոց պարտադրանքով կամ հրահրմամբ:

Միաժամանակ, «Տարոնի Արծիվ»-ի հրատարակությունը Սոֆիայից փոխադրվեց Նյու Յորք. այստեղ նա վերածվեց ընդամենը տարոնցի հայերի պարբերաթերթի:

Այսպիսով, Տարոնական շարժումը ձախողվեց՝ ապրելով ժամանակավոր ողբերգանքի տաժանքը: Սակայն, շարժման առաջնորդներ-

որ համոզված էին, որ առանց ողբերգականության՝ չկա՝ հաղթանակ: Նրանք վստահ էին, որ իրենց դավանած ուսմունքի տապալումը ողբերգություն է՝ հաղթանակից առաջ, որ Տարոնականության Գողգոթան ժամանակավոր է, քանզի ճշմարտությունները հաղթանակում են թաղվելուց հետո հարություն առնելով:

Եվ իրավամբ, Տարոնականության տված ճշմարտությունները, 30-ական թվականների վերջին թաղվելուց հետո, այսօր հարություն են առնում:

Բ) ՏԱՐՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

***«Մենք տեսանք գաղութի բարոյական
գարհուրանքը, հայրենագուրկ մարդու
հոգու չարչարանքով դիմեցինք
մեր հայրերու աստվածների խորհուրդին
եւ գտանք տարոնականությունը»***

ՑԵՂԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔԸ՝ ՏԱՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

Տարոնական աշխարհայեցողության էաբանական խորքը Ցեղն է՝ տեսակը, որը կենսաբանական (բնական) ըմբռնում է եւ ո՛չ պատմական՝ ինչպես ազգությունը, կամ ընկերային՝ ինչպես ժողովուրդը: Ցեղի (տեսակի) հավերժացումը Տարոնականության սահմանած ընդհանուր գերնպատակն է, իսկ Ցեղի կենսաբանական որակները՝ Արյունը եւ Ոգին, որոնք ժառանգականության օրենքով շարունակելի են, կազմում են Տարոնական կենսահայեցողության շաղախը: Ցեղը արյան (նյութի) եւ ոգու՝ մարմնականի ու հոգեկանի բնական ներդաշնակությունն է, եւ Տարոնականությունը ցեղի մարմնական ու հոգեկան հատկանիշների (արյան եւ ոգու) փոխադարձ ազդեցութեամբ:

յունն ընդունում է որպես բնածին ճշմարտություն: «Որոշ որակի արյունը կարող է միայն ծնունդ տալ որոշ որակի ոգու: Ոգու եւ ոգու միջեւ այնքան տարբերություն կա, որքան՝ արյունի եւ արյունի: Տարբեր են ո՛չ միայն սպիտակների եւ դեղինների մարմնական հատկանիշները, այլեւ՝ նրանց հոգեգծությունը», - պարզաբանում է Հայկ Ասատրյանը (14): Այսպիսով, Տարոնականությունը հաստատում է ցեղի ոգու (որով պայմանավորված են նրա հոգեկան հատկանիշները) եւ արյան (որը պայմանավորում է ցեղի մարմնական գծերը) փոխադարձ կապը, դրանց անկրկնելիությունը, ինքնատիպությունը:

Որպես «Աստծո կամքի արտահայտություն», ցեղն է, որ ապահովում է բնական կապը մարդու եւ աստվածայինի՝ անցավորի եւ հավիտենականության միջեւ: Այլ խոսքով, անհատն անցավոր է, իսկ տեսակը՝ ենթակա մշտնջենացման, եւ մարդը հաղորդակցվում է հավիտենականի հետ՝ Աստծո (15) կամոք արարված իր տեսակը (ցեղը) հավերժացնելու ճանապարհով:

Ըստ Տարոնականության, տեսակը ո՛չ թե Աստծուց կանխորոշված է հավերժելու, այլ՝ ենթակա է ինչպես հավիտենացման, այնպես էլ վերացման՝ կախված գոյության կռվում նրա կենսունակությունից եւ Աստծո հետ կենդանի կապից: Այստեղ տեղին է բերել Նժդեհի արտահայտած անհանգստությունը ճակատագրապաշտական ծուլության վերաբերյալ, որով համակվածները կարծում են, թե Հայ տեսակը երբեւէ վերանալ չի կարող. «Ես հարցնում եմ այնպես, ինչպես ո՛չ ոք դեռ չի հարցրել. ո՞ւր ենք զնուն: Մեզ համար տեղ կա՞ պատմության մեջ... Գիտե՞ մեկը, որ եթե դադարենք գոյություն ունենալե՞ տիեզերաշենքի մեջ մի հատիկ հյուլե իսկ պիտի չչարժվի» (16):

Այսպիսով, Տարոնականության մեջ առկա է Աստվածահաղորդության խորհուրդը: Աստվածահաղորդություն - դա զգացումն է մեր մեջ գործող բացարձակ Ուժի՝ պատմակերտ Ոգու, առանց որի ճանաչման կարելի չէ հասկանալ պատմությունը, քանզի պատմությունը սոսկ դեպքերի արձանագրությունն է, այլ՝ Ոգու հայտնություն:

«Ազգային ոգի - ահա՛ գերագույն հերոսը, միակը, մեր պատմության անհիվը դարձնող, մեր հավաքական ճակատագիրը վարող հերոսը:

Էապես միայն դա՛ է գործում պատմության մեջ եւ պատմության համար: Անհատ հերոսները ո՛չ այլ ինչ են, եթե ոչ միայն անձնավորողներն այդ ոգու: Մեռնում են հերոսները - Մանվելները, Մուշեղները, Վարդանները՝ մնում է, սակայն, նրանց ոգին, որն իր մարմնավորումը գտնելով այլ հայերի մեջ՝ շարունակում է ապրել ու ներգործել» (17):

Իսկ Ոգին հնարավոր չէ հասկանալ առանց բնագանցության եւ էաբանության: Նա, ընդհանրապես, զգայարաններով ընկալելի չէ. այնտեղ գործում է տիեզերաստեղծ Ուժի (իմա՛ Աստծո) կամքը, ու շատ բան պատմության մեջ լինում է հենց այդ կամքով: Եվ պատմության մեջ հաղթում է նա՛, ով հաղորդակից է այդ Բացարձակին, Աստվածայինին՝ պատմաստեղծ Ոգուն: Վկա՛ եւ Հայոց պատմությունը. «Մեր ժողովրդի ամենագորավոր զենքը միշտ էլ եղել է ոգին» (18):

Տարոնականությունը այդ Ոգու տարերքի, ասել է՝ մեր պատմության անգիտակցականի (իռացիոնալի) իմացության փորձ է, առանց որի անհնար է խոսել ճակատագրի հետ: Այն պատմական ոգու ուսմունք է: «*Դարձ դեպի ոգին*». ահա՛ Տարոնականության առաջադրած նախապայմանը:

Ցեղի դրսեւորման բնական միջավայրը Հայրենիքն է, երկրագնդի վրա այն հողակտորը, «որին միայն հարազատ ու բնիկ են մեր մարմինն ու ոգին...» (19): Նա Ցեղի համար ո՛չ թե շահագործելի հող է, այլ՝ էության պահանջ, որ «*մի բան է ոգուց եւ ոգու համար*». ահա՛ թե ինչո՛ւ Ցեղի առաջին հրամայականն է - հայրենատիրություն:

Տարոնականության մեջ առկա է հստակ ըմբռնումը ամբողջական Հայրենիքի, ինչպես նաեւ տարբերակումը՝ պատմական եւ բնական Հայաստանի: Հ. Ասատրյանի բնորոշումներով, առաջինը պատմա-ազգագրական հասկացություն է, որով՝ հարափոփոխ, ենթակա սեղմումի կամ ընդլայնումի՝ կախված պատմական ժամանակաշրջանից: Պատմական Հայաստանի սահմանները մերթ հասել են Հրեաստան (Տիգրան Մեծի օրոք), մերթ դուրս եկել Կիլիկիա, մերթ ամփոփվել Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արեւելքում (Զաքարյանների ժամանակ) եւ այլն... Կա, սակայն, բնական Հայաստանը՝ որպես բնաշխարհագրական ըմբռնում, խիստ որոշակի բնական

սահմաններով, որով եւ անփոփոխ: Դա Հայկական Բարձրավանդակ կոչվող, բնորեն ամբողջական աշխարհագրական տարածքն է՝ Հայ ցեղի արարման կամ կազմավորման բնական միջավայրը: Հայոց հավիտենական հայրենիքն է այդ՝ անկախ ազգագրական պայմաններից եւ ժամանակների քաղաքական սահմանագծումներից: Հայկական Բարձրավանդակից դուրս հայրենիք չկա՛, եւ նրա ամբողջական սահմաններում (իմա՛, ողջ բարձրավանդակին տիրելով) միայն հայերս կարող ենք իբրեւ ազգություն եւ պետություն օրգանապես զարգանալ ու հարատեւել:

* * *

Տարոնականությունը հայապահպանումի՝ օտարության մեջ հային հայ պահելու ինքնանպատակ ճիգ չէր, այլ՝ կորսված Հայրենիքը վերատիրելու եւ Հայաստանում ապրելու անդրդվելի կամք: «Հայը «միջազգային» ասպարեզի էակ չէ... Նա իր Արշակ թագավորի նման հզոր եւ ազատահոգի է միայն ի՛ր հողի վրա: Հայրենիքն է նրա ինքնապաշտպանության միակ զենքը», - ասում է Հայկ Ասատրյանը (20): Այլ խոսքով, գաղթահայության ինքնապահպանման, նրա հավիտենորեն հայ մնալու երաշխիքը, ըստ Տարոնականության, ո՛չ թե պայքարն է այլասերման դեմ, այլ՝ պայքարը Հայրենիքի՛ համար:

Եվ, այս առումով, Տարոնականությունն ունի դարձի ուխտ՝ դեպի հայոց հավիտենական Հայրենիքը:

ՏԱՐՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՍՔ

Փաստելով, որ օրվա հայությունը զերծ է ազգային ամբողջականության զգացումից, որով եւ՝ ազգային միության գիտակցումից, նաեւ, լինելով հատվածապաշտ եւ եսակենտրոն՝ առաջնորդվում է նախանձի, հաշվի վրա հենված ներկուսակցական բարոյականով, Տարոնականությունը իբրեւ սկզբունք որդեգրելով *ներցեղային բարոյականը*՝ ձգտում է արմատախիլ անել ներքին պայքարի ախտը, բովանդակ հայության ուժերը ներքին ճակատից տեղափոխել եւ

կենտրոնացնել արտաքին վտանգի դեմ: «Կա՛ր արտաքին ճակատը, որի վրա միայն կարելի է արժանապես հերոսանալ», - նշանաբանում է Տարոնականությունը (21):

Միաժամանակ, մատնանշելով այն վտանգավոր հանդուրժողականությունը եւ համակերպվելու տրամադրությունը, որ առկա են մեր մեջ ներքին թշնամիների՝ ստոր, նյութապաշտ, թուլամորթ, հաշվեցկատ «հայրենասիրությամբ» հայ կոչվողների ներկայության նկատմամբ, որոնք, ցավոք, հաճախ առաջավոր դիրքեր են գրավում մեր ազգային կյանքում, Տարոնականության գաղափարախոսները գտնում էին, որ անհրաժեշտ է ամենից առաջ ներքին այս արգելքները վերացնել, որպեսզի կարողանանք հաջողությամբ դիմագրավել արտաքին անխուսափելի արգելքները:

Որպես ցեղային միություն դավանող ուսմունք՝ Տարոնականությունը դեմ է «դասակարգային» մտածումին, որ կոչված է մասնատելու ազգային մարմինը: Նա ապադասակարգային ուսմունք է:

- Մի՛ ըսեր «հայ աշխատավորություն», «հայ քաղքենիություն» (*թուրժուազիա- Մ. Լ.*), «հայ ավատատեր», «հայ կղեր», ազգը մի՛ պատկերեր ներքուստ պառակտված, այլ ըսե՛ «հավիտենական հայկականություն», «հայություն», - ուսուցանում է Տարոնականությունը (22):

Այն ընդամենը ազգային միության քարոզ չէ. վստահ, որ «միությունը կստեղծվի ո՛չ թե կողմերի, հատվածների սակարկություններով, այլ՝ ընդհանուր նպատակի մը, արժեքի մը ենթարկվելու բացարձակ կամքով» (23), Տարոնականությունը սահմանում է այդ ընդհանուր նպատակը (իմա՛ Ցեղի հավերժացումը) եւ ցույց տալիս ընդհանրական հավիտենական արժեքները (իմա՛ Ցեղը եւ Հայրենիքը): Միայն այս գերնպատակի ու ընդհանրական այս արժեքների շուրջ եւ դրանց ծառայելու կամքով է հնարավոր մեր ազգային միությունը:

* * *

Երկու կարեւոր, փոխկապակցված հասկացությունների՝ ազգային զգացումի եւ ազգային գիտակցության վերաբերյալ Տարոնականությունն ունի հետեւյալ բացատրումները:

Ազգային զգացումը արդյունք է ազգային հավաքական էության, եւ առանձին անհատի մեջ հանդես է գալիս իբրեւ այդ հավաքական էությունից փոխանցված մասնիկ: Այս դեպքում, անհատը բնազդաբար զգում է, որ ինքը կապված է մի հավաքականության եւ զգացումի (բնազդի) թելադրանքով ապրում է այդ հավաքականության կյանքով (կենցաղով, բարոյականով եւ այլն):

Ազգի հավաքական գիտակցությունը ձեւավորվում է նրա առանձին անհատների անջատ-անջատ գիտակցությունների միավորումով եւ ամբողջացումով: Անհատի ազգային գիտակցությունը հենվում է նրա ազգային զգացումի վրա. դա է ամենասերտ կապը ազգի առանձին անհատների գիտակցությունների միջեւ: Այս դեպքում, անհատը սկզբում գիտակցում է այն կապերը, որ կապում են իրեն ազգային հավաքականությանը, այն առանձնահատկությունները, որոնցով ինքը տարբերվում է մյուս ազգերից, գիտակցում է սեփական արժեքը ազգերի համալիրում, ապա, գիտակցաբար կամենում է պահպանել ու զարգացնել դրանք՝ այդպիսով հավերժացնելով իր ազգային անկրկնելիությունը, ամրապնդելով ազգի հավաքական միությունը:

ՏԱՐՈՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵԼԱԿԵՏԸ

Երկու ոգիների պայքար՝ պայքար հավիտենարժեքի եւ անցավորի, համահայկականության եւ հատվածականության, հայկական կողմնորոշման եւ օտարահակության միջեւ. այս պայքարում առաջինի ընկրկումն է, ըստ Տարոնականության տեսաբանների, հայության անկման ներքին հոգեբանական պատճառը: Այդ ոգիներից առաջինը նրանք անվանեցին «տարոնական» - *«տարոնական ո՛չ թե «տարոնցու» տեղական հասկացությամբ, այլ՝ կապակցությամբ «հավիտենական հայի», որի ոգին հայտնություն ստացավ Տարոնեն»* (24):

Որո՞նք են, ըստ Տարոնականության գաղափարախոսների, Տարոնի՝ պատմականորեն առանձնահատուկ գծերը:

- Տարոնն է եղել հեթանոսական Հայաստանի գլխավոր հոգևոր կենտրոնը, որ մնաց այդպիսին Հայաստանի քրիստոնեացումից հետո նաև:

- Տարոնում է ստեղծվել «Սասնա ծռեր» դյուցազնավեպը (25):

- Տարոնի ծնունդ են հայ հոգևոր արժեքների երկու հսկաները՝ Մաշտոցն ու Խորենացին:

- Տարոնում հաստատվեցին հայոց ռազմուժի ասպետները՝ Մամիկոնյանները:

- Տարոնն է արեւմտահայ նորագույն ազատամարտի խռովարանը, ուր հիմնականում «թրծվեցան կամ դիմազծվեցան» ամենախնճատիպ մարտիկները այդ պայքարի:

Պատմական այս ճշմարտությունները, ըստ Տարոնականության առաջնորդների, սուկ պատահական զուգահիշություններ չեն, այլ՝ տարոնական ոգու խռովքի արտահայտություններ, այդ ոգու հայտնության դրվագներ, եւ տարոնական այդ ոգին է մեր ցեղի հավիտենական զենքը, նրա նկարագրի այն գիծը, «որ հաղթական հանդիսացավ անցյալ դարերի փոթորիկների դեմ ու պարբերաբար կարելի դարձրեց մեր ազգային վերածնունդներն ու հեղափոխությունները» (26): Եվ պատահական չէր համարվում նաև այն, որ դժնդակ այդ տարիներին, սփյուռքի հայրենակցական բազմաթիվ միությունների մեջ,- որոնք հիմնականում որդեգրել էին բարեգործական, բարեսիրական սահմանափակ նպատակներ,- հենց Տարոն-Տուրուբերանի Հայրենակցական միությունը պարզեց հայրենատիրության դրոշը եւ որդեգրեց Մամիկոնեից ուխտը:

Իսկ որո՞նք են, ըստ շարժման գաղափարախոսների, տարոնական ոգու հայտնության գլխավոր գծերը կամ տարոնական հայի՝ պատմականորեն բախտորոշ գործերը (27):

ա) *Հայրենաստեղծում* - Քաղաքական Հայաստանի (պետության-Մ. Լ.) առաջին կորիզը ձևավորվել է Տարոնում եւ տարածվել նախ՝ Այրարատի, ապա՝ ողջ Հայկական Բարձրավանդակի վրա, այդպիսով քաղաքականապես ամբողջացնելով Հայոց հայրենիքը (*ինձ միավորյալ պետության ստեղծում- Մ. Լ.*):

բ) *Ազգակերտում* - Հայկական Բարձրավանդակում հայ տարրի ազգագրորեն ամբողջացումը, կազմակերպված ազգության ստեղծումը իրականացրին տարոնական հայերը:

գ) *Հայկական կողմնորոշում* - Տարոնական հայն է հայկական կողմնորոշման դրոշակակիրը, որն, իբրեւ ազգայնական, նշանաբանեց. «Ո՛չ Հռոմ, ո՛չ Պարսկաստան, այլ՝ անկախ Հայաստան»:

դ) *Հայկական բարոյական «ես»-ի արձանացում* - արեւելյան եւ արեւմտյան ոգիների միջեւ հայոց բարոյական ու հոգեւոր ինքնատիպ նկարագրի կերտիչը տարոնական հայն է, որ եղավ քրիստոնեության միջոցով հայկական կողմնորոշման կրոնականացնողը (ազատության իդեալը կրոնական զգացումին կապողը):

ե) *Հայոց մշակութաստեղծ «ես»-ի արձանացում* - Մաշտոցի պարգեւած տարոնական-համահայկական լույսն էր, որ մեր ազգի ամբողջականության պահպանման մտահոգությամբ ամրապնդեց Հայոց մշակութային անհատականությունը:

զ) *Հայոց հերոսական ոգու եւ ռազմական կորովի կերտում* - Տարոնն է Հայոց ռազմական կորովի խռովարանը եւ տարոնական հայը՝ հայոց հերոսական ոգու մարմնավորողը: «Առանց Վահագնապաշտության չէր կրնար ապրիլ հեթանոս Հայաստանը, առանց Մամիկոնյան Վարդանի պաշտամունքի՝ քրիստոնյա Հայաստանը պիտի չունենար գոյությունը իմաստավորող երկունք՝ ապագայի գծի վրա: Ո՛չ մեկ պատահականություն, որ թե՛ Վահագնը, թե՛ Վարդանը տարոնային ոգիներ էին...» (28):

Տարոնականությունը, որ փորձում է համադրել հայոց մշակութաստեղծ ոգին եւ ռազմական կորովը, քարոզում է արիադավան մտավորականի ու բարոյաշունչ ռազմիկի զինակցություն՝ հանուն Ցեղի եւ Հայրենիքի - «ռազմախանդ մշակույթ եւ կուլտուրաստեղծ հերոսականություն, հոգեւոր Մեսրոպականություն եւ սրտավոր Վարդանականություն՝ միաժամանակ» (29):

- **Տարոնակնիք հայկականություն**, - բառացի այսպես է բնորոշում Տարոնականությունը շարժման գաղափարախոսներից Արիս Տեր-Իսրայելյանը (30) եւ պարզաբանում.

ա) Հայկականությունը (նկատի է առնվում վերը թվարկած առանձնահատկությունների հանրագումարը- Մ. Լ.) սկիզբ է առել եւ կազմակերպվել Տարոնի մեջ եւ այնտեղից տարածվել ողջ Հայկական Բարձրավանդակի վրա,

բ) Համահայկական նշանակություն ունեցող հոգեւոր ամենա արժեքները առավելապես Տարոնի ծնունդ են,

գ) Համահայաստանյան հայրենասիրությունը եւ համահայկական ազգասիրությունը միշտ էլ եղել են Տարոնի հայության ցեղային նկարագրի ամենաբնորոշ գծերը (31):

- Հայոց աշխարհի ո՞ր անկյունում հայն այնպե՛ս պաշտեց իր հողը, այնպե՛ս առյուծացավ ճակատամարտերում, իր երկրի համար այնպե՛ս մեռնել գիտցավ, ինչպես Տարոն աշխարհում,- ասում է Նժդեհը՝ այսպես կարելորելով Տարոնի անչափելի նշանակությունը. «Ծի՛շտ է, սուրբ է հայրենի երկրի ամեն մի բուռ հողը, սակայն, ճիշտ է եւ այն, որ հայրենիքներն ունեն իրենց պատմա-ռազմագիտական տեսակետից ամենանվիրական ու ամենակարեւոր երկրամասը - այն երկրամասը, ուր ցեղը ամենեն շատ է արյուն թափել, կուլտուրական զանձեր դիզել, հերոսական ու պատմություն ստեղծել, այն երկրամասը, առանց որի՝ հայրենիքը ո՛չ թե զորավոր ու անկախ լինել, այլեւ՝ իր գոյությունը պահել, ինքնապաշտպանվել չի կարող:

Ճակատագրորեն մեծ է Տարոնի նշանակությունը մեր Ցեղի եւ Հայրենիքի պաշտպանության համար: Քանի դեռ մեր երկրի աշխարհագրական մարմնից կտրված կմնա Տարոնը՝ վտանգված կմնա մեր հայրենիքի ապագան» (32):

* * *

Թեեւ Տարոնական շարժումը խորքով համահայկական էր, այդուհանդերձ, շարժումն ամբաստանողները չարախոսում էին, թե նա հատվածականություն է սերմանում հայության մեջ, թե նա ընդամենը տարոնցի հայերի շարժում է՝ տարոնցիություն, որը Հայաստանի ոգին ուզում է փոխարինել նրա մեկ գավառի անունով:

Վճռապես մերժելով նման մեկնաբանությունը՝ Ա. Տեր-Իսրայել-

յանը հաստատում է. «Տարոնականությունը պետք չէ միանտորեն, տզիտորեն կամ չարամտորեն շփոթել տարոնցիության հետ: Տարոն ծնած ամեն հայ տարոնական չէ եւ ո՛չ ալ Տարոնի սահմաններեն դուրս ծնած ամեն հայ՝ հակա- կամ ոչ-տարոնական... Տարոնական է ամեն հայ, որ Հայաստանի համար ապրելու, ստեղծագործելու եւ մանավանդ մեռնելու կամք ունի...» (33):

Տարոնականության էությունը չհասկացողները հաճախ ուսմունքի հատվածականությունը «հիմնավորում» էին՝ կառչելով բառին:

Ծիշտ է, նոր է բառը, բայց հին են ոգին եւ գաղափարը: Որպես Ցեղի հավիտենականի եւ Հայրենիքի սեփականության զգացում, դրանց համար քաջաբար կռվելու ու մեռնելու ուխտ, Տարոնականությունը նույնքան է հին, որքան Տարոնն ու հայությունը: Այս առումով, բավական դիպուկ է Նժդեհի հետեւյալ համեմատությունը. «Սիոնը կար, «սիոնականություն» բառը չկար: Նա հազարամյակների պատմություն ունի, սա՛ տասնամյակների: Կարո՞ղ եք պնդել, որ անհայրենիք հրեության դարավոր կյանքը վարողը սիոնականությունը չէ եղել: Արդյոք քաղաքական սիոնիզմը հրեության դարերի հոգեւոր սիոնականության արդյունքը չէ՞: Ինչո՞ւ հրեան իր պաշտամունքը Սիոնի հանդեպ անվանեց սիոնիզմ, իսկ իրեն՝ սիոնիստ: Եվ, կարծո՞ւմ եք, որ այդ «բառը» զգալապես (զգալիորեն- Մ. Լ.) չակտիվացրեց օրվա հրեան: Սիոնականությունից առաջ կարելի՞ էր երեւակայել, որ մեր օրերում Պաղեստինը պաշտպանելու համար աշխարհ կգա հին հերոսական Մակաբեյներին հիշեցնող մի նոր սերունդ: *Չխաղանք բառերի հետ... Ով խուսափում է ոգուց եւ կառչում բառերին, ցույց է տալիս, որ թշնամի է խորքին, իմաստին, բովանդակության»* (34):

Տարոնականության մեջ էականը անունը չէ, կարելու չէ նույնիսկ ա՛յն, թե արդյո՞ք Տարոնում է ձեւավորվել Հայոց պետության առաջին կորիզը կամ Տարոնի՞ հայերն էին արդյոք Հայկ. Բարձրավանդակում հայ տարրի համախմբողն ու ազգորեն ամբողջացնողը. ապագա հայագիտությունը կհաստատի կամ կժխտի դրանք: Տարոնականության մեջ էականը նրա քարոզած բարոյականն է, հավիտենարժեք հասկացությունների վերաբերյալ նրա տված ճշմարտությունները,

Աստված-Ցեղ-անհատ կապի մեկնումները, ներցեղային բարոյականի՝ նրա սահմանած ընդհանրական արժեքները...

Տարոնականության խնդիրը ո՛չ թե Տարոնի գերակայության հիմնավորումն է Հայոց այլ «աշխարհների» նկատմամբ, այլ՝ պատմականորեն Տարոնում ստեղծված հավիտենական արժեքների համահայկականացումը:

ԴԱՍԱԿԱՆ ՀԱՅԻ ԽՆԴԻՐԸ

Արդեն ասվեց, որ Տարոնականության մեջ առկա է Աստվածահաղորդության խորհուրդը, որն, առաջին հերթին, նշանակում է՝ հաղորդակցում Աստծո կամքով մեր մեջ գործող Ցեղի ոգուն, որով պայմանավորված են մեր հոգեգծերը: Եվ որքան մենք հավատարիմ ենք Աստծուց մեզ տրված այդ հոգեգծերին, առաքիություններին, այնքանով հաղորդակից ենք իրեն:

Սակայն, պատմության բերումով, հայությունն, իր ընդհանրության մեջ, մոռացության է տվել այն հոգեգծերը, որ տրված են եղել իրեն սկզբնական (դասական) վիճակում: Ահա՛ թե ինչու, մեր դժբախտությունների հոգեբանական պատճառները փնտրելով այն տարբերության մեջ, որ ունի նոր ժամանակների հայը դասական, ամբողջական հայից, տարոնական ոգու առաջնորդները խնդիր էին դնում *«գտնել դասական հայի հոգեգծերը եւ դաստիարակչորեն զանոնք հարազատել տալ ապրող հայ սերնդին»* (35): Եվ հենց դա էր համարվում Հայոց ճակատագիրը փոխելու հիմնական միջոցը, ցեղային խառնվածքով օժտված նոր հայի կերտման առաջին քայլը:

Դասական հային անվանեցին «տարոնական կամ տարոնատիպ», որպես պատճառաբանում բերելով Տարոնին եւ տարոնածին հայերին վերագրվող, վերը արդեն թվարկած համահայկական արժեքներն ու համահայաստանյան գործերը: Որպես տարոնական հայի տիպար ներկայացվեց Մամիկոնյան հայը, որի մեջ անբաժան են ուժն ու բարոյականը՝ հզորության եւ սրբության զգացումները, եւ որի հմայիչ գաղափարատիպն էր նկատվում Վարդան սպարապետը (36):

Ձինվորագրվել Մամիկոնեից Ուխտին, քայլել Մամիկոնյանների ճամփով, Ցեղի եւ Հայրենիքի համար նրանց պես մեռնել ուզել ու մեռնել գիտենալ - ահա՛ թե ինչ է պահանջում Տարոնականությունը, որի խնդիրը *«հայ մարդու կաղապարումն է՝ ըստ Մամիկոնյան հայու պատկերի»* (37):

- Նմանվիր Մամիկոնյան հային, որ զորավոր էր դեպի հայրենի երկիրն ու ցեղը տածած սրբազնության զգացումով եւ նրանց համար մեռնելու իր աննահանջ կամքով,- պատգամում է Նժդեհը (38):

Տարոնականության առաջնորդները ակնկալում էին տկարությունն իր մեջ հաղթահարած մի նոր սերունդ՝ վտանգի՝ սերունդ (վտանգը զգացող, կռահող եւ այն կանխող սերունդ), որը Մամիկոնյան հրաշունչ ռազմիկներից կսովորեր՝ *«ԱՊՐԵԼ ՈՒ ԳՈՐԾԵԼ ՄԻԱՅՆ ԱՅՆ ԲԱՆԻ ՀԱՄԱՐ, ՈՐԻ ՀԱՄԱՐ ԱՐԺԵ ՄԵՌՆԵԼ, ԵՎ ՄԵՌՆԵԼ ԱՅՆ ԲԱՆԻ ՀԱՄԱՐ, ՈՐԻ ՀԱՄԱՐ ԱՐԺԵՐ ԱՊՐԵԼ»* (39):

Վտանգված Հայրենիքի եւ Ցեղի համար մեռնելու վճռական կամք - սա՛ է տարոնական հայի գերագույն բարոյականը:

Մեռնել, բայց չպարտվել, չտեսնել հայրենիքը պարտված, չտանել պարտության անոթանքը - այսպիսին է Տարոնականության ռազմական բարոյականի օրենքը:

Մեռնելու կամք - դա աննպատակ մահվան կամ սոսկ նահատակության ձգտում չէ, այլ՝ Ցեղի ու Հայրենիքի համար հոժարական եւ արիաբար մեռնելու ներքին մղում, պատրաստակամություն: Այն մահվան սարսափն իր մեջ սպանած, ասել է՝ մահը հոգեբանորեն հաղթահարած մարդու վճիռն է՝ զոհաբերվելու Ցեղի բազմին, առանց որի հնարավոր չէ ո՛չ մի հերոսացում, ո՛չ մի հաղթանակ: *«Գոյության իմաստը հասկանում են նրանք, ովքեր մեռնելու կամք ունեն»* (40):

Եվ այս առումով, Տարոնականությունը, Հայկ Ասատրյանի բնորոշմամբ, *«ուսմունք չէ՝ բոլորի եւ ոչ ոքի համար», այլ միայն ընտրյալների: Դա կանչ է՝ ուղղված միայն նրանց, որոնք ընդունակ են բարոյական նորոգումի»:* Դա ուսմունք է այն նախատեսված ընտրանու համար, որ *«սրտի կսկիծով ապրում է տխուր ներկան եւ հոգու աչքով տեսնում երջանիկ ապագան»* (41):

* * *

Միաժամանակ, Տարոնական ոգու առաջնորդները սահմանում են այն հատկանիշները, որոնք պարտադիր են Ցեղի անունից հանդես եկող հայ անհատների ու կազմակերպությունների համար.

ա) Ցեղի եւ Հայրենիքի համար մեռնելու բացարձակ կամք,

բ) Ցեղային հավիտենականի խոր զգացում,

գ) Ներցեղային բարոյական,

դ) Հաղթողական ոգի,

ե) Պատմական ճակատագրի խոր ճանաչողություն,

զ) Հայրերի գործի եւ նպատակի հաղորդություն,

է) Հայրենազգացություն,

ը) Օտարությունը որպես գերազույն դժբախտություն ապրելու առաքինություն,

թ) Մեծագործության կամք ու բարոյական:

«Ասոնք բարոյագիտական-դաստիարակչական որակներ են եւ ո՛չ թե քաղաքական նշանախոսքեր, ապրումի խնդիրներ եւ ո՛չ թե կանոնագրական կետեր, բարոյական ընդհանուր պահանջներ եւ ո՛չ թե կուսակցական մասնավոր պարտականություններ, սիրտը մշակող բովանդակություններ եւ ո՛չ թե կարգապահական ձեւեր: Բայց առանց ասոնց՝ ո՛չ քաղաքական ճշմարիտ գործն ու նպատակն են հնարավոր, ո՛չ ժողովուրդի ցեղային տարերքին համապատասխանող կանոնագրություն, ո՛չ նվիրումի պարտականության զգացում, ո՛չ կարգապահական բարոյականություն» (42):

Այս որակները կրողներին է տրված միայն բարոյական իրավունք՝ խոսելու եւ հրամայելու Ցեղի անունից:

* * *

Տարոնականությունը մեր պատմության հեթանոսական եւ քրիստոնեական ժամանակաշրջաններն արժեւորում է ցեղայինի առաջնայնության սկզբունքով՝ գնահատելով եւ օրինակելի համարելով այն ամեն ցեղային-հայկականը, որ առկա է մեր պատմության եւ հեթանոսական, եւ քրիստոնեական դարերում.

«Մենք շարունակ պիտի քարոզենք մեր հեթանոսական Աստծո՝ Վահագնի ոգին մեր ընթերցողներուն, որպեսզի անոնք առողջարար եւ կենսատու օդ շնչեն եւ դառնան օգտակար զինվորներ արդարության բանակին:

Մենք պիտի հետեւինք այն ճամփուն, ուրկէ քալեր են ու կքալեն բոլոր հայրենասերները, եւ պիտի կատարենք այն աշխատանքները, ինչ աշխատանք որ մեզ կթելադրեն Սուրբ Սահակներն ու Մեսրոպները եւ Մամիկոնյան Վարդանները» (43):

Մի հանգամանք եւս:

«Ոգին մահ չունի». «մեր էության մեջ մենք հող չենք, որ հող դառնանք, այլ՝ ոգի, որ ոգի մնանք»: Բարոյական այս մեծ իմացությունների վրա են հենվել Տարոնականության գաղափարախոսները:

- Երբ «Տարոն» են ասում, ինձ թվում է, թե լեռներում ապրող գերբնական ոգիներն են գծում հանճարի եւ հերոսության հորիզոնները,- ասում է Յ. Ասատրյանը (44) եւ պատգամում. *«Ոգին չի պահվում. ոգին աճում է գործելով: Գործի՛ր այնպես, որպես թե գերբնական ուժերից զորություն ես ստանում եւ ո՛չ թե դատարկվում նրանց առաջ: Այդպիսով՝ դու կգործես քո Աստծո հետ: Կգործես կարելիությունների մի աշխարհում, որի բոլոր իրացումների աղբյուրը քո կամքն է»* (45):

Այս ամենը մեզ խորհել են տալիս ոգու բացարձակության, կամքի ամենակարողության, բնության թաքնված ուժերի շուրջ, ու, միաժամանակ, խանդավառության եւ ուսումնասիրության ասպարեզ բացում թաքնագիտությամբ, ոգեգիտությամբ հետաքրքրվող այն հայրորդիների համար, որոնք առայժմ ճգնում են միայն այդ բնագավառի օտար հեղինակներին եւ ուսմունքներին ծանոթանալու:

* * *

«Տարոնի Արծիվի» 12 համարներով (Տարոնականությունը որպես գաղափարախոսություն առկա է «Տարոնի Արծիվի» միայն 1938-1939թթ. 12 համարներում, այսինքն, մինչեւ ամսաթերթի՝ Սոֆիայից Նյու Յորք տեղափոխումը) Տարոնականության տեսաբանները,

իրենց իսկ խոստովանությամբ, չհասցրին տալ ամբողջությամբ ուսմունքը, այլ միայն Տարոնականության նախապատրաստությունը, նրա ներածությունը, եւ դեռ «ցեղահաղորդ հայ մտավորականությանը կմնա հիմնավորել եւ խորացնել համահայկական ոգիի, փառքի, հերոսականի, մեր ցեղի անցյալ եւ ապագա հավիտենականի այդ կենարար ուսմունքը, դավանանքը» (46):

- Դեռ չկան, գրված չեն «Չայոց ցեղային բարոյագիտությունը» եւ «Չայոց պատմության փիլիսոփայությունը». այսպիսի պատգամ են թողնում մեզ տարոնական ոգու առաջնորդները (47) եւ Տարոնականությամբ համակվելու ընդունակ ամեն ցեղազգաց Չայի, իբրեւ ժառանգություն, փոխանցում հավիտենական նշանախոսք. **«Տեղն է իմ գոյության իմաստը եւ Չայաստանը՝ իմ ճակատագիրը»** (48):

Ծանոթագրություններ

1. Չույս կար, թե Եկեղեցին կխանդավառվի Տարոնականության հոգեւոր ուսմունքով: Չակառակ դեպքում, Նժդեհի բառերով ասած, «մեռյալ ծիսակատարություններով ու մեռելաթաղով զբաղվող Եկեղեցին, վերջ ի վերջո, իր ժողովուրդն ու Աստվածը պիտի թաղի» («Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 2, էջ 39):

2. **«Ռազմիկ»** հասարակական-քաղաքական թերթը լույս է տեսել 1937թ.-ի փետր. 7-ից մինչեւ 1943թ.-ի դեկտ. 15-ը (որոշ տվյալներով՝ մինչեւ 1944թ.-ի մարտի 4-ը), սկզբում Պլովդիվում, ապա (1938թ.-ի մարտի 4-ից)՝ Սոֆիայում:

Թերթի անդրանիկ համարի առաջնորդողում ասվում է, որ այն լինելու է դարասկզբին Ռուբեն Ջարդարյանի խմբագրությամբ Պլովդիվում լույս տեսած նույնանուն պարբերականի ավանդույթների շարունակողը, հիմնական նպատակ ունենալով՝ *«դաստիարակիչ խոսքի տքնությամբ ոգիները բոցավառել այն օրվան կարոտով, երբ մեր կյանքին մեջ հոռետեսությունը, նվաստությունը եւ մանրուքի հոգեւոր խեղճությունը տեղի կուտան Չայաստանի համար աշխատելու եւ մեռնելու կամքին, երբ մեր ցեղի աչքերում մեջ կրկին կփայլատակեն*

հերոսական երկունքի եւ մեծագործության հին ոգին եւ կրակը» («Ռազմիկ», Պլովդիվ, 1937թ., թիվ 1):

«Ռազմիկ» թերթի՝ մեզ հայտնի առավել ամբողջական հավաքածուն պահվում է Պլովդիվի Իվան Վազովի անվան քաղաքային գրադարանում (թիվ 1-187):

3. Ղեւոնդ պատմիչի վկայությամբ, 775թ.-ին, Բագրեւանդ գավառի Արծնի գյուղի մոտ արաբների հետ տեղի ունեցած ճակատամարտում, որը ղեկավարում էին Մամիկոնյան տոհմի իշխանները, դժվարին կացության մեջ ընկած հայ ռազմիկները իրար քաջալերում էին հետեւյալ խոսքերով. «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի եւ մեր ազգի համար, եւ թող մեր աչքերը չտեսնեն մեր սրբարանների... ոտից կոխան լինելն ու պղծվելը...» (Ղեւոնդ, «Պատմություն», Երեւան, 1982թ., էջ 119):

4. «Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 1, էջ 2:

5. Նույնը, 1938թ., թիվ 2, էջ 34:

6. Նույնը, էջ 33:

7. «Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 1, էջ 2:

8. Մոտեցող պատերազմին հոգեբանորեն նախապատրաստվելու եւ կորսված Չայրենիքին վերատիրելու քարոզչությունը հետապնդում էր գործնական նպատակներ: Նժդեհը նախատեսում էր սպասվող պատերազմի դեպքում Բուլղարիայում կազմակերպել կամավորական ջոկատներ, որոնք բուլղարական բանակի կողքին պիտի կռվեին Թուրքիայի դեմ: Թերեւս, դա չէր սահմանափակվելու միայն Բուլղարիայով եւ տեղի հայությամբ. նպատակ կար ողջ գաղթահայությանն օգտագործել հակաթուրքական ճակատում:

9. Զոր. Սմբատի շուրջ համախմբված՝ հիմնականում մշեցի, նախկին հայ կամավորների միության պաշտոնաթերթ «Չայ Մարտիկը», որ հրատարակվում էր Մարսելում, մեկ-երկու գրություններ լույս ընծայեց Տարոնականության վերաբերյալ («Չայ Մարտիկ», թիվ 19, 1937թ.: թիվ 21, 1938թ.), ուր, թյուրիմացաբար, այն ընկալվում էր իբրեւ տարոնցիություն: Տարոն-Տուրուբերանի Չայրենակցական Միությունը պաշտոնական ազդարարությամբ դատապարտեց «Չայ Մարտիկի» այդ դիրքորոշումը («Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 3-4):

10. «Վեմ», Փարիզ, 1938թ., թիվ 22, էջ 102-103:

11. «Տարոնի Արծիվ», թիվ 5-6, 1938թ. եւ թիվ 7, 1939թ.:

12. «Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 5-6, էջ 2:

13. «Պատմություն Տարոնի աշխարհի», Բեյրութ, 1957թ., էջ 1104:

14. «Տարոնի Արծիվ», 1939թ., թիվ 8, էջ 15:

15. Աստծո գաղափարի տակ հասկացվում է՝ տիեզերաստեղծ, հավիտենական մի Ուժ, բացարձակ ու բարձրագույն մի արարիչ էութուն: Տարոնականության մեջ էական չէ՝ Աստծո կա՞մքն է ստեղծել տիեզերքը, թե՞ տիեզերքի կամքն է ստեղծել Աստծուն. երկու դեպքում էլ մենք ծնունդ ենք արարչական կամքի, մի մասնիկը՝ արարչագործության:

16. «Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 1, էջ 4:

17. Գ. Նժդեհ, «Խորհրդածություններ», էջ 52:

18. «Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 2, էջ 35:

19. Նույնը, 1939թ., թիվ 7, էջ 6:

20. Նույնը, 1938թ., թիվ 5-6, էջ 56:

21. Նույնը, էջ 6:

22. Նույնը, 1939թ., թիվ 11, էջ 3-4:

23. Նույնը, էջ 4:

24. Նույնը, 1938թ., թիվ 3-4, էջ 1-2:

25. Թեև Շիրակացու «Աշխարհացույցում» Սասուն գավառը չի ընդգրկված Տարոն աշխարհի մեջ (Շիրակացի, «Մատենագրություն», Երևան, 1979թ., էջ 293), սակայն, պետք է հաշվի առնել, որ «Աշխարհացույցը» ներկայացնում է ընդամենը պատմական մի որոշ՝ Արշակունիների ժամանակաշրջանի Մեծ Հայքի վարչական-տարածքային բաժանումը եւ ոչ բոլոր դեպքերում է հաշվի առնում տարածքի բնաաշխարհագրական ամբողջականությունը: Օրինակ՝ Խութ գավառն ընդգրկված է Տարոն աշխարհում, իսկ նրա կողքին գտնվող, նույն բնական պայմաններով, ազգագրական գրեթե նույն առանձնահատկություններով Սասունը մտցված է Աղձնիք աշխարհի մեջ:

Տարոնի աշխարհը (Տուրուբերան նահանգ) բնաաշխարհագրական ամբողջություն է, մի լեռնաշխարհ՝ չորս կողմից շրջապատված լեռնային հաստ գոտիներով (այդ թվում եւ Սասունի լեռներով), որի կենտրոնում ընկած է Մշո դաշտը:

26. «Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 2, էջ 42:

27. Տարոնականության պատմական ելակետը հիմնավորող դրույթները հենվում էին այն ժամանակվա գիտական մտքի վրա: Այսօր, հայագիտության մի շարք նվաճումներ կարող են փոխել որոշ գնահատականներ՝ բնավ չազդելով ուսմունքի էության վրա:

Ի դեպ, Տարոնի առանձնահատկության մասին արտահայտվել են այլ հեղինակներ եւս: Մասնավորապես, Լեոն իր «Հայոց պատմության» մեջ նկատում է. «...Տարոնը հայկական պետության մի շատ կարելուր մասն էր կազմում, այնքան կարելուր, որ նրան անվանում էին Հայոց Տուն, պետք է ենթադրել այն պատճառով, որ հայության ամենամվիրական ավանդությունների երկիրն էր այդ» (Լեո, Երկերի ժողովածու, Եր., 1967թ., հտ. 2, էջ 520): Իսկ Գարեգին Սրվանձտյանցը, Մամիկոնյաններին արժեւորելիս, այն միտքն է հայտնում, թե վերջիններս Տարոնում հաստատվելով է, որ քաջության շնորհն ու անունը վաստակեցին. «Ես կըսեմ՝ Մամիկոնյանք եկան այս [Մշո] աշխարհին մեջ եւ աշխարհի բնակիչներով քաջության անունը միշտ ժառանգեցին, քան թե զայն իրենց հետ բերին ու ատնց տվին» (Գ. Սրվանձտյանց, Երկեր, Երեւան, 1978թ., հտ. 1, էջ 31):

28. «Տարոնի Արծիվ», թիվ 3-4, էջ 3-4:

29. Նույնը, թիվ 2, էջ 34:

30. **Արիս (Արիստակես) Տեր-Իսրայելյանը** ծնվել է Բուլանըխում: Մանկությունից ծնողների հետ փոխադրվել է Կովկաս, ուր սովորել է Էջմիածնի Գեորգյան ճեմարանում: 1912թ.-ին անցել է ԱՄՆ եւ 1917թ.-ին այնտեղ հիմնված Տարոն-Տուրուբերանի Հայրենակցական Միության հիմնադիրներից է:

Ա. Տեր-Իսրայելյանը Տարոնականության գաղափարախոսներից է. Տարոնական ուսմունքի վերաբերյալ ունի հողվածաշար «Տարոնի Արծիվում»:

Մինչեւ կյանքի վերջը ապրել է նյութական ծանր պայմաններում: Մահացել է 1942թ.-ի դեկտեմբերի 18-ին, ԱՄՆ-ի Էքրըն Օհայո քաղաքում: Մահվան առթիվ, «Տարոնի Արծիվը», խմբագրականով հարգել է նրա հիշատակը («Տարոնի Արծիվ», Նյու Յորք, 1943թ., թիվ 22):

31. «Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 3-4, էջ 6:

32. Նույնը, թիվ 1, էջ 4-5:

33. Նույնը, թիվ 3-4, էջ 6:

34. Նույնը, թիվ 5-6, էջ 16: Նժդեհի այս համեմատությունը ոմանց բերել է այն անլուրջ եւ անհեթեթ հետեւության, թե իբր Տարոնականությունը Սիոնականության ընդօրինակումն է:

35. «Տարոնի Արծիվ», 1939թ., թիվ 7, էջ 2:

36. Մենք չենք անդրադառնա պատմական այն կարելուր հարցին, թե

որքանով են Վարդանի ու Ավարայրի դերերը չափազանցված (ինչպես եւ որքանով արդար՝ Սյունյաց Վասակին տրված դավաճանի խարանը), այլ կուզենք հիշեցնել, որ Վարդանի պաշտամունքը ժողովրդի մոտ դարերով նույնացվել է Ազգի ու Չայրենիքի պաշտամունքի հետ, եւ Տարոնականության գաղափարախոսները, որ նպատակ չունեին կյանքից կտրված ուսմունք տալու, այս իրողության հետ հաշվի են նստել: Կարծում ենք, որ նույնաման մոտեցման արդյունք է նաեւ նրանց կողմից Լուսավորչի տան մեծարումը իր՝ իբր «հայաշունչ» հայրապետներով: Այստեղ կարելու է հիշատակել նաեւ, որ Տարոնականության հիմնադիրները Լուսավորչին ու Մամիկոնյաններին չէին համարում այլազգիներ, ինչպես սովորաբար ընդունված է համարել:

37. «Տարոնի Արծիվ», 1939թ., թիվ 11, էջ 9:

38. Նույն տեղում: Մամիկոնյաններին նմանվելու Տարոնականության պատգամն ու պահանջը բացատրվում էր նրանով, որ Մամիկոնյան հայերի մոտ Ցեղի եւ Չայրենիքի համար կռվելու ու մեռնելու բարոյական ունեւ ժառանգական բնույթ՝ փոխանցվելով սերնդեսերունդ (հիշենք Մամիկոնյան ասպետների շքեղ փաղանգը՝ Վաչե, Վասակ, Ձիրավի Մուշեղ, Մանվել, Ավարայրի Վարդան, Վահան, Կարմիր Վարդան, Գայլ Վահան, 8-րդ դարի Մուշեղ...): Միաժամանակ, հաշվի էր առնվում եւ այն, որ մեր պատմիչների ու եկեղեցու՝ երբեմն նաեւ ենթակայական մոտեցման շնորհիվ, Չայրց պատմության ու ժողովրդի մեջ առավել փառաբանված էին Մամիկոնյանները:

39. «Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 2, էջ 43:

40. Նույնը, 1939թ., թիվ 9, էջ 29:

41. Նույնը, 1938թ., թիվ 5-6, էջ 59:

42. Նույնը, 1939թ., թիվ 12, էջ 5-6:

43. «Տարոնի Արծիվ», Նյու Յորք, 1942թ., թիվ 18, էջ 3:

44. Գ. Ասատրյան, «Չայաստան - Արիական նախադիրք Առաջավոր Ասիայում», Սոֆիա, 1942թ., էջ 285:

45. «Տարոնի Արծիվ», 1939թ., թիվ 9, էջ 32:

46. Նույնը, թիվ 2, 1938թ., էջ 34:

47. Նույնը, թիվ 12, 1939թ., էջ 7:

48. Նույնը, թիվ 1, 1938թ., էջ 17:

ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ⁽¹⁾

(Կենսագրական ակնարկ)

«Իբրեւ գիտության եւ տեսական խղճմտանքի մարդ՝ [դրկտ. Հայկ Ասատրյանը] իր խոսքը ծառայեցրել է ճշմարտության, իսկ փրկարար ճշմարտությունը՝ իր անհրավժած ժողովրդին»:

Գ. Նժդեհ

Մեր դարի 30-ական թվականների Հայկական ցեղային շարժման զաղափարական գործիչների մեջ, իր հզոր իմացականությամբ եւ վառ արտահայտված անհատականությամբ առանձնանում է Հայկ Ասատրյանը, «Նժդեհի գլխավոր՝ գուցե եւ միակ խորհրդատուն» (2), որին Կարո Գեւորգյանը բնորոշում է՝ «գիտական մտապաշարով հարուստ եւ իր փիլիսոփայատիպ խառնվածքով հանրածանոթ...» (3):

Հայկ Ասատրյանը ծնվել է 1900թ. փետրվարի 5-ին, Ալաշկերտի զավառի Երից գյուղում (4): Արմատները Տարոնից են: 8 տարեկանում կորցնում է հորը (հայրը՝ Կիրակոսը, գյուղապետն էր) եւ քրոջ ու եղբոր հետ մնում է մոր խնամքին:

Նախնական կրթությունը ստացել է տեղի վարժարանում, որն ավարտելուց հետո մտնում է Հ.Յ.Դ. Աշակերտական միության շարքերը: Այնուհետեւ, ուսումը շարունակում է Երեւանի թեմական դպրոցում: Հայաստանի Հանրապետության օրերին, Հայկ Ասատրյանը՝ որպես պատգամավոր Աշակերտական կազմակերպությունից, մասնակցում է Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհանուր ժողովին: 1918-1919 թվականներին, նրա խմբագրությամբ, Երեւանում լույս է տեսնում Հ.Յ.Դ. Աշակերտական միության օրգան «Շանթ» թերթը (5):

Իր մասնակցությունն է բերում 1921թ. փետրվարյան ապստամբությանը, որի ճնշումից հետո, ձերբակալությունից խուսափելու

համար, ստիպված, հրաժեշտ տալով հարազատներին, անցնում է Թավրիզ (այստեղ ստանում է պարսկահպատակի անձնագիր): Շատ չանցած, Թավրիզ է գալիս նաեւ Գ. Նժդեհը եւ միասին անցնում են Եվրոպա:

Եվրոպայում նա ուսանում է նախ Բեռլինի բարձրագույն քաղաքական դպրոցում, ապա՝ Պրագայի համալսարանի փիլիսոփայության բաժնում, որն ավարտում է 1930թ.-ին՝ ստանալով դոկտորի աստիճան: Իր հետ ուսանած Անդրե Ամուրյանը հետագայում հիշում էր. «Չայկ մեծ եռանդով նվիրվեցավ փիլիսոփայության ճյուղին: Կարդալու եւ պարապելու հետաքրքրական եւ ինքնօրինակ կերպ մը ունէր: Նախ՝ վերարկուն երբեք չէր հագներ, այլ՝ կնէտեր ուսերուն: Չաճախ կնստեր հատակին ու Նիցշեի եւ կամ Կանտի գիրքը առջեւ դրած՝ կկարդար եղանակով, ճիշտ դերվիշի տպավորություն ձգելով: Արդեն կենցաղով ալ Չայկը դերվիշ էր, աննյութասեր, կյանքի հաճույքներուն վրա քամահրանքով նայող. կատեր սուտն ու կեղծիքը, շողոքորթությունն ու քծնանքը, մարդոց թերությունները կըսեր իրենց ճակտին» (6):

Ուշագրավ են Ասատրյանին նվիրված հիշողություններուն Բուլղարիայի նրա կուսակիցներից Կարո Մեհյանի (որ հանդես է գալիս «Սօսեաց տղան» ծածկանունով)՝ իր իմացականությունը բնորոշող վկայությունները: «Մղված իր սերեն, ինչպես եւ նպաստավորված իր արտակարգ հիշողութենէն, ան (իմա՝ Չ. Ասատրյանը-Ս. Լ.) ուսումնասիրած էր Չայաստանի աշխարհագրությունը մանրամասնորեն: Չայերեն թե օտար լեզուներով գրված բոլոր գործերը, որոնք կխոսին մեր երկրի մասին, ծանոթ էին անոր: Նաեւ մեր մատենագրության մեջ չկար տող մը, որուն վրա ան տքնած չըլլար: Նարեկացիեն երկար հատվածներ կարտասաներ գոց: Իսկ առհասարակ հայերեն լեզուն ան իրեն համար վերածած էր տեսակ մը մասնագիտության: Տեւապես «կխուզարկեր» բառերը, կբաղդատեր օտար բառերու հետ ու չէր հանդարտեր, մինչեւ որ չլուծեր անոնց ծագման կամ արմատի հանգույցը: Սեղմ՝ իր մտածումներուն մեջ եւ ատկե՛քիչ մը «թանձր» արտահայտվելու իր ձեւով, Չ. Ասատրյան հարկադրված կըլլար, թե՞ կնախասիրեր նոր բառեր կերտել: Իր փոքրաթիվ

գրքերուն եւ բազմաթիւ հողվածներուն մեջ ունի մեծ թիվով բառեր, որոնք «իրն» են, եւ զորս կարծես «լույսին բերել», տրված ըլլալով որ անոնցմէ շատերը արտահայտիչ են, հեշտալուր եւ մեր լեզվին օրենքներուն համապատասխան: Որովհետեւ այս «դերվիչը» ոչ միայն հասկացողություն եւ հմտություն, այլեւ ճաշակ ուներ: Ծաշակ՝ ամեն բանի մեջ ու գեղեցկագիտական ըմբռնումով» (7):

Այնուհետեւ, Զ. Ասատրյանը անցնում է Բուլղարիա, ուր մնում է Գ. Նժդեհի մոտ եւ զործում նրա հետ: Բուլղարիայի հետ է կապված նրա ազգային-քաղաքական գործունեության ամենաբեղուն եւ եռանդուն շրջանը: Զ. Ասատրյանը ուսուցչություն էր անում Սոֆիայի Գեւորգ Մեսրոպ ճեմարանում եւ, միաժամանակ, Զ.Յ.Դ. տեղի ԿԿ-ի քարտուղարն էր:

Զ. Ասատրյանը եղավ Նժդեհի ամենամոտ գործակիցը՝ 30-ական թվականների Հայկական ցեղային շարժումը ծավալելու եւ հիմնավորելու գործում: «...Հայկը աջ բազուկն էր Նժդեհին, երբ «Ցեղակրոնություն» գաղափարաբանությունը կխմբագրեր» (8): Զ. Ասատրյանը խորապես ընկալեց Նժդեհի ուսմունքը եւ, մի տեսակ, մեկնիչ (թերեւս չգերազանցված) հանդիսացավ նրա գաղափարների: Վերջինիս երկու մենագրությունների՝ «Ցեղի ոգու շարժը», «Ամերիկահայությունը - Ցեղը եւ իր տականքը», վերաբերյալ Զ. Ասատրյանի մեկնաբանություններն ու խորհրդածությունները լավագույնս այդ են վկայում:

1932թ.-ին, Սոֆիայում, Զ. Ասատրյանի նախածեռնությամբ եւ խմբագրությամբ լույս է տեսնում «Խռովք» իմաստասիրական-գիտական ամսագիրը, որը, սակայն, կուսակցության կողմից աջակցություն չի ստանում եւ փակվում է: 1935թ.-ից, Բուլղարիայի Զ.Յ.Դ. ԿԿ-ի ներսում ունեցած տարածայնությունների պատճառով, կուսակցության հետ իր կապերը փաստացիորեն խզում է: Դրանից հետո, 1936թ.-ին, կրկին Սոֆիայում, Ներսես Աստվածատուրյանի (9) հետ լույս են ընծայում «Ցեղ եւ Հայրենիք» կիսամսյան, որը նույնպես երկար կյանք չի ունենում:

1937թ.-ին, Զ. Ասատրյանը պաշտոնապես, Զ.Յ.Դ. Բյուրոյի կողմից հեռացվել է կուսակցությունից (10): Ի դեպ, Ասատրյանը Զ.Յ.Դ.-ից հեռացվել է մի փոքր շուտ, քան Նժդեհը, եւ այս կապակցությամբ՝

«Ամրոցը», իր 1937թ.-ի թիվ 20-ի խմբագրականում, ոչ առանց հիմքի, Հայկին համարում էր քավության նոխազ Նժդեհի «մեղքերին»:

Մեզ հայտնի են 1933թ.-ին Սոֆիայում հրատարակված նրա երկու գրքույկները՝ **«Ցեղանեղ շեթանը»** եւ **«Մտածումներ հայկական ճգնաժամի, Հայ հեղափոխության եւ Մայիս 28-ի մասին»**:

1937թ.-ին Նժդեհի հետ հիմնում եւ մինչեւ 1944թ.-ը հրատարակում են «Ռազմիկ» հասարակական-քաղաքական թերթը, որը, փաստորեն, Բուլղարիայի Ցեղակրոն կազմակերպության պաշտոնաթերթն էր: Խմբագիրը, որոշ ընդմիջումներով, Հ. Ասատրյանն էր:

Եղել է Տարոնական շարժման հիմնադիրներից ու գաղափարախոսներից մեկը եւ 1938-1939թթ.-ին, Ն. Աստվածատուրյանի հետ խմբագրել է Սոֆիայում հրատարակվող «Տարոնի Արծիվ»-ը, որը Տարոն-Տուրուբերանի Հայրենակցական Միության պաշտոնաթերթն էր:

1942թ.-ին Հ. Ասատրյանն ավարտում է Հայկական հարցին եւ արժեքներին նվիրված իր **«Հայաստան - Արիական նախադիրք Առաջավոր Ասիայում»** գրքի Ա մասը (գրքի առաջաբանը գրել է Գ. Նժդեհը) եւ շտապ մեկնում Բեռլին՝ դա գերմաներեն թարգմանել տալու եւ անմիջապես հրատարակելու համար: Այդ գործի կարելու-րությունը պայմանավորված էր նրանով, որ մի շարք եվրոպացի գիտնականներ սխալ տեղեկություններ էին տվել Հայ ցեղի ծագման մասին (կասկածի տակ էր դրվում հայերի արիական ծագումը), եւ այս ապատեղեկատվության հիման վրա նացիստական կուսակցության մեջ ձեւավորվել էր մի թեւ՝ Ռոզենբերգի ղեկավարությամբ, որը հայերին վերագրում էր սեմական ծագում: Վտանգի տակ էր գերմանական տիրապետության տարածքում բնակվող շուրջ 400 հազար հայերի զոյությունը: Հետեւաբար, անհրաժեշտ էր գործնական ու գիտական-քարոզչական միջոցներով վերացնել այդ վտանգը:

Կապված Հ. Ասատրյանի Բեռլին մեկնելու հետ՝ 1943թ.-ի սկզբին Գ. Նժդեհի կողմից Բուլղարիա է հրավիրվում Կարո Գեւորգյանը (որը Սալոնիկում 1928-1937թթ.-ին խմբագրում էր «Հորիզոն» թերթն ու եղել է տեղի Ցեղակրոն Ուխտերի ղեկավարը), որն առժամանակ խմբագրում է «Ռազմիկը»:

1943թ. վերջին Հ. Ասատրյանը վերադառնում է Բուլղարիա եւ

կրկին անցնում «Ռազմիկ» թերթի խմբագրության գործին, ինչպես նաև ավարտում իր գրքի Բ մասը, որը սակայն լույս չի տեսնում:

Երբ 1944թ.-ին համայնավարները գրավեցին Բուլղարիան, իրար ետևից ձերբակալվեցին Գ. Նժդեհը, Յ. Ասատրյանը (ձերբակալվել է 1945թ. հունվարի 27-ին) եւ Ն. Աստվածատուրյանը: Յ. Ասատրյանը, դատապարտվելով 10 տարվա ազատազրկման, նախ ուղարկվում է Քիշնեւի, այնուհետեւ՝ Ուրալի բանտը, ուր գտնվում էր նաև Ն. Աստվածատուրյանը: Վերջինս կարճ ժամանակ անց մահանում է: Իր սիրելի ընկերոջ մահվան լուրը Ասատրյանն առնում է անկողնում ծանր հիվանդ պառկած եւ հազիվ կարողանում է տեսնել միայն նրա դիակը՝ բանտից դուրս հանելիս:

1952թ. Ասատրյանին Ուրալից փորձում են տեղափոխել Երեւան (Նժդեհի մոտ)՝ Դաշնակցության եւ Թուրքիայի հետ կապված խնդիրներում օգտագործելու համար: Սակայն, իր առողջական ծանր վիճակի պատճառով, դա տեղի չի ունենում:

Յ. Ասատրյանի ձերբակալումից հետո հալածվում են նաև նրա ընտանիքի անդամները. կնոջն ու երկու աղջիկներին (Յեղիներ եւ Արածանի) աքսորում են Պավլիկենի քաղաքը, ուր աքսորվել էր նաև Նժդեհի ընտանիքը: Նրանց ստիպում են ամեն առավոտ ու երեկո ստորագրություններ տալ՝ ներկայության համար, իսկ տիկնոջը նույնիսկ արգելում են աշխատել: 1947թ.-ին, Ասատրյանի կինը (Սիրանուշ Խանջիկյան) Չեկայի կողմից ստանում է կեղծ երկտող՝ իր ամուսնու մահվան մասին, որից հետո նրան խրատում են ամուսնանալ, քանզի հակառակ դեպքում, աշխատանքի իրավունք չի ունենա եւ կդիտվի որպես հակակառավարական անձ: 1951թ.-ին տիկին Ասատրյանը ամուսնանում է մի բուլղարացու հետ՝ այդպես փորձելով պահել իր երկու աղջիկներին:

1955թ.-ին, ընդհանուր ներման շնորհիվ ազատվելով բանտից, Յ. Ասատրյանը, ծանր հիվանդ վիճակում վերադառնում է Սոֆիա եւ ցավով իմանում իր ընտանիքի ու հատկապես կնոջ նկատմամբ՝ Չեկայի խարդավանքների մասին: Սակայն, ստիպված է լինում հաշտվել իրականության հետ եւ մնում է իր մեծ աղջկա՝ Յեղիների մոտ (ի դեպ, Յեղիների կնքահայրը Նժդեհն էր):

Սարգիս Սարունու վկայությամբ, բանտարկության տարիներին «թերթի լուսանցքներուն վրա, Հայկ գրած էր ընդարձակ դյուցազներգություն մը, որով կուտար հայ ժողովուրդին ամբողջ պատմությունը, սկիզբեն մինչեւ մեր օրերը» (11), որը, ցավոք, կորել է: Ասատրյանի՝ աքսորի վերջին տարիներին գրած անավարտ, «հանգավոր մեկ վեպի» մասին է վկայում նաեւ նրա բանտակից Կարո Մեհյանը (12):

1956թ. հունվարի 13-ին, Հայկ Ասատրյանը վախճանվում է սրտի կաթվածից: Մահվան պահին, երկինք նայելով, երեք անգամ բացականչում է. «Ա՛խ, Հայաստա՛ն...»:

Այսպես է ընդհատվում ցեղադրոշմ կյանքը հայաշունչ մտավորականի, որի դեռեւս քիչ հայտնի տեսական ժառանգությունը կգա անշուշտ լրացնելու հայ, թերեւս ոչ այնքան հարուստ, ազգային-ինաստասիրական միտքը:

Ծանոթագրություններ

1. Տեղեկությունների մի մասը քաղել ենք Ավոյի «Տոթթ. Հայկ Ասատրեան» հոդվածից, զետեղված «Հեղափոխական Ալբոմ»-ի (Բեյրութ) 1971թ.-ի թիվ 11-ում:

2. Ավո, «Նժդեհ», էջ 457:

3. «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1957թ., 11 օգոստոսի, էջ 3:

4. Ասատրյանի հարցաքննության արձանագրությունից արված քաղվածքում իբրեւ ծննդավայր նշված է Թավրիզը (ՀՀ ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գործ թիվ 11278, հտ. 3): Սակայն իր քննչական գործի հիման վրա գրված տեղեկանքում որպես ծննդավայր բերված է Ալաշկերտի շրջանի Երից գյուղը («Гарегин Нжде и КГБ», Ер. 2007, ст. 106): Կարծում ենք, իբրեւ ծննդավայր Թավրիզի նշումը շփոթմունք է՝ կապված իր պարսկահպատակ լինելու հետ: Հ. Ասատրյանի պարսկահպատակ լինելու մասին է վկայում նաեւ Կարո Մեհյանը (տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1958թ., թիվ 5, էջ 83):

5. Գ. Լեւոնյան, «Հայոց պարբերական մամուլը», Երեւան, 1934թ.,

էջ 94: Մեզ հայտնի են «Շանթ»-ի 1919թ.-ի (Բ. տարվա) թիվ 1, 2, 4-7, 9 համարները:

6. «Չեղափոխական ալբոմ», թիվ 11, 1971թ., էջ 286:

7. «Հայրենիք» ամսագիր, 1958 թ., թիվ 5, էջ 81:

8. «Չեղափոխական ալբոմ», թիվ 11, 1971թ., էջ 291:

9. **Ներսես Աստվածատուրյանը 30-ական թվականների հայկական ցեղային-վերանորոգչական շարժման գործուն մասնակիցներից է, Ցեղակրոն եւ Տարոնական շարժումների սյուներից:**

Ծնվել է 1897թ., Սկյուտարում (Կ.Պոլիս), ծագումով տարոնցի է: Եղել է Դ.Յ.Դ. անդամ, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության Բուլղարիայի շրջանի պատասխանատու գործիչներից: Վարել է առեւտրական լայն գործունեություն՝ նյութական զգալի օժանդակություն բերելով ազգային-հասարակական կյանքին: Նրա մասին Կ. Գեւորգյանը գրում է. «Բուլղարահայ բոլոր խավերեն սիրված, ազնվական խառնվածքի մարմնացում, անձնվեր ու հայրենապաշտ..., որի համար իր առեւտրական փայլուն գործեն շատ ավելի կենսական էին մեր ազգային-քաղաքական շահերը եւ որի մոտ այնքան նրբորեն բյուրեղացած էին հայրենասիրական զգացումներն ու ըմբռնումները» («Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1957թ., 11 օգոստոսի, էջ 3):

Հ. Ասատրյանի հետ, Սոֆիայում խմբագրել ու հրատարակել են «Ցեղ եւ Հայրենիքն» ու «Տարոնի Արծիվը»:

1945թ.-ի հունվարին ծերբակալվել է համայնավարների կողմից եւ դատապարտվել 10 տարվա ազատազրկման: Մահացել է 1953թ.-ի օգոստոսի 28-ին, Իրկուտսկի մարզի կալանավայրերում: 1963-ին արդարացվել է:

Իր մասին մեզ հայտնի շատ թե քիչ խոսում գրությունը տես «Հայրենիք» ամսագիր, 1958թ., թիվ 7, էջ 107-109:

10. ՀՀ ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գործ թիվ 11278, հտ. 3: Կարո Գեւորգյանը, Հայկ Ասատրյանի մահագրության մեջ եւս, նրան հիշատակում է՝ իբրեւ նախկին դաշնակցականի (Կ. Գեւորգյան, «Ամենուն տարեգիրքը», Բեյրութ, 1957թ., էջ 642):

11. «Չեղափոխական ալբոմ», թիվ 11, 1971թ., էջ 291:

12. «Հայրենիք» ամսագիր, 1958թ., թիվ 5, էջ 83:

ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐՈՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԱԴՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Խորքի ու էության մեջ Տարոնականությունն ու Ցեղակրոնությունը նույնանուն են, տարբեր են միայն հարցադրումները: Նույն ցեղային գիծն է - Ցեղի հավիտենականը՝ որպես նպատակ, նրա բարոյականը՝ իբրև հոգեւոր զենք, Ցեղը եւ Հայրենիքը՝ իբրև գերագույն արժեքներ, նրանց համար կռվելն ու մեռնելը՝ որպես կամքի բարձրագույն արտահայտություն: Լսենք Նժդեհին. *«Էաբանորեն առնված՝ դաշնակցականությունն (իմա՛ իր հասկացած դաշնակցական կենսաձեւը, բարոյականը- Մ. Լ.) ու տարոնականությունը, ինչպես եւ տարոնականությունն ու ցեղակրոնությունը տարբեր բաներ չեն ու չեն կարող լինել հայ ցեղի ճակատագիրը խորքով ու իմաստասիրորեն ապրող ամեն հայու համար»* (1): Սակայն, Տարոնականությունը, որպես պատմական զգացում, ավելի փորձում է պատասխանել «ո՞վ ենք մենք», «որտեղի՞ց ենք գալիս», «ո՞րն է մեր պատմության խորհուրդը» հարցերին, իսկ Ցեղակրոնությունը, իբրև հարատեւման կամք, ապագայի տենչ, ցույց է տալիս, թե «ո՞ր ենք զնուն» եւ «ո՞րն է մեր անելիքը»:

* * *

Դեռ 1938 թվականին, Բուլղարիայում լույս տեսնող «Ռազմիկն» իր խմբագրականում գրում էր. *«Մենք կուզենք իրար շղթայել, իրարմով լրացնել քաղաքական կորովի երեք անհրաժեշտ տարրերը՝ պատմական զգացումը, կազմակերպված ուժը եւ ապագայատենչ խռովքը: Առաջինի աղբյուրը տարոնականությունն է՝ հայոց պատմությունը վարող հավիտենական ուժը: Երկրորդը՝ Դաշնակցությունն է, ժամանակի համահայկական միակ կազմակերպված ուժը: Երրորդը՝ ցեղակրոնությունը, որ ապագայի տենչ է, ուղին նոր սերունդի... Սպառազինվել տարոնական պատմական զգացումով, սպառազինվել ցեղակրոնության բերած ամբողջականության*

իդեալով եւ խռովքոտ ապագայատենչությամբ - ահա՛ հոգեւոր այն զենքերը, որոնք հայոց նարտական կազմակերպությունը կրնան վերածել պատմաստեղծ ուժի» (2): Ցավոք, ուժերի նման համադրում տեղի չունեցավ, քանզի ժամանակի Յ.Յ.Գ. ղեկավարությունն անընդունակ գտնվեց կազմակերպությունը նման ուսմունքներով վերազինելու:

Էսպես՝ տարբեր չեն կարող լինել հարցադրումները նաեւ այսօր: Մեր ժամանակի համահայկական ամենակազմակերպված ու ազդեցիկ ուժը Հայոց պետությունն է, որը, Ազգի հարատեւությունն ապահովելու համար, անհրաժեշտորեն պետք է սպառազինվի հայկական էության վրա խարսխված եւ հայության առաքելության ուղին նախանշող ազգային գաղափարախոսությամբ:

Այս առումով, Ցեղակրոնությունն ու Տարոնականությունը պատմականորեն կոչված են համադրաբար կազմելու Հայոց ազգային գաղափարախոսության առանցքը:

Ծանոթագրություններ

1. «Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 5-6, էջ 15-16:
2. «Ռազմիկ», 1938թ., թիվ 42-45: Սույն խմբագրականը ակնհայտորեն պատկանում է Հայկ Ասատրյանի գրչին:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՍՔԸ (1)

Ա. Ես ցեղակրօն եմ -

Եւ ահա՛ կ'երդնում Վահագնի աջի վրայ՝ երբեք չմեղանչել ուխտիս դէմ - ապրել, գործել ու մեռնել որպէս ցեղամարդ:

Բ. Ինձ համար անհատականութեան եւ ազատութեան ամենաբարձր արարքը - դա հնազանդուելն է ցեղիս:

Գ. Ես ցեղաճանաչ եմ, եւ ահա՛ գիտեմ, թէ մե՛ծ է իմ ցեղը, թէ իմ ցեղն աւելի՛ն է տուել մարդկութեան, քան ստացել է նրանից. գիտեմ, որ հայոց նորագոյն յեղափոխութիւնը վերջին գործը չէ իմ ցեղի էութեան. գիտեմ, թէ ի՞նչ բաների ատակ է իմ ցեղը:

Դ. Ես ցեղահաւատ եմ, եւ ահա՛ պաշտում եմ ե՛ւ մի այլ աստուածութիւն - ցեղիս արիւնը, որի անարատութեան մէջ է իմ ցեղի ապագան:

Ե. Ես ցեղահաղորդ եմ, եւ ահա՛ զգում եմ, որ իմ անձը աւելի՛ իմ գերագոյն ծնողին - իմ ցեղին է պատկանում, քան իմ անմիջական ծնողներին:

Զ. Իմ ժողովրդի քաղաքական ճակատագրով զբաղուելու պարտականութիւն ունիմ ես, եւ ահա՛ պայքարում եմ մի մե՛ծ ճակատագրի համար, որին արժանի է իմ ցեղը:

Է. Ցեղակրօն եմ, ասել է՝ ուր էլ որ լինեմ, ընկերային ինչ դիրք էլ որ ունենամ, ես խանդավառօրէն կը մնամ հպատակն ու մարտիկն իմ ցեղի:

Ը. Հայաստանից դուրս, սփիւռքի մէջ, ինչ վիճակում էլ որ լինեմ՝ մեծահարուստ, բարեկեցիկ թէ օրավարձով աշխատող բանուոր՝ անդարձ պանդխտութիւն չեմ համարի տարագրի կեանքս: Չէ՛, վերադարձ կայ:

Թ. Կը դաւանեն, որ իմ սերունդը աւելի՛ մեծ պարտականութիւն ունի, քան ունէր անցնող ազատագրական սերունդը: Պարտականութեան մէջ՝ ցեղակրօնի իմ բաժինը - առիծի բաժինն է, ամենամեծը:

Ժ. Ցեղակրօնը, որի նշանաբանն է - աւելի՛, էլ աւելի զօրութիւն - պաշտամունք ունի իր ցեղի մարտական ոյժի, իմա՛ Յայ Յեղ. Դաշնակցութեան հանդէպ:

ԺԱ. Ջոհապաշտ են ես, եւ ահա՛ երկիւղածօրէն կ'ոգեկոչեն նրանց, որոնց պաշտամունքը յաւիտենական է, որոնք առիծացան իրենց արիութեան մէջ, աստուածացան իրենց հոյակապ նուիրումի մէջ - որոնք իրենց արիւնը շռայլեցին մեր ցեղի գոյութիւնը եւ պատիւը յաւիտենականացնելու համար:

ԺԲ. Ցեղակրօնն էլ է ձգտում երջանկութեան - տեսնել թէ ինչպէ՛ս ածում է իր ժողովրդի զօրութիւնը եւ արդարօրէն ընդարձակում է Յայաստանը:

ԺԳ. Ցեղով է ապրում, ստեղծագործում եւ յաւերժանում ժողովուրդը: Մարդկային մշակոյթի գործում զօրութեանական ոյժ է ցեղայնութիւնը: Արդ, թէ ինչո՛ւ ցեղային անհատականութեան եղծումը ցեղակրօնը համարում է ոճիր՝ ուղղուած մարդկութեան եւ, ի մասնաւորի, իր ժողովրդի դէմ:

ԺԴ. Ցեղակրօնը խորշում է այն բոլոր վարդապետութիւններից եւ հոսանքներից, որոնք միտում են մեր նորահաս սերունդը հեռու պահել ցեղի կազդուրիչ ստինքէն - կաթէն:

Նա խորշում է հայ իրականութեան մէջ զեռացող այն բոլոր ոյժերէն, որոնք թեպէտեւ հասարակական դիրքով հակոտնեայ, բայց ընդհանուր հոգեբանութեամբ միացած ճակատ է յարդարած մեր լուսաւոր ազգայնականութեան դէմ:

Աւելի՛ պարզ: Ազգայնականութեան երկու ձեւերից - ազգայնական անհատապաշտութիւն եւ եսապաշտութիւն - ցեղակրօնը ողջունում է առաջինը, որն այլ բան չէ, եթէ ոչ ազգ-անհատի արդար եւ արգասաւոր ձգտումը՝ հաւատարիմ մնալ իր ցեղի ոգուն, կատարելագործել իր պատմական տիպը, եւ պաշտպանել իր հաւաքական անձի ազատութիւնը:

Ցեղակրօնի այդ ձգտումը լիովի համապատասխանում է համա-
մարդկային բարոյականի եւ յառաջդիմութեան բարձր սկզբունք-
ներին:

ԺԵ. Մե՛ծ է ցեղակրօնի իմ թշնամանքը, ինչպէս մե՛ծ է իմ պաշտա-
մունքը:

Ցեղիս թշնամիներ են թուրքը, բուլշեւիկը եւ սրանց հայադաւ
գործակալները, ամէն անուան ու ծպտումի տակ - որոնց վճռաբար կը
հակադրեմ իմ զօրութենական ցեղապաշտութիւնը:

- Ինձ համար գոյութիւն ունի հարցերի հարցը՝ հապա բախտահաս
թո՛ւրքը:

- Ես խորշում են բուլշեւիզմից, որովհետեւ հակամարդկային է:
Երիցս ատում են դա, որովհետեւ հակահայ է՝ թուրքի չափ,
որովհետեւ թուրքի հետ զինակցած մտաւ Յայաստան, որովհետեւ
նրանից ցայսօր օգտուեց ցեղիս գերեզմանափորը - թո՛ւրքը, միայն
թուրքը:

Ցեղադրուժ բուլշեւիկը իր շնական հրաժարիմքն ունի.

Ես՝ իմ վճռական այո՞ն՝ ցեղիս.

Նա իր թուղթէ անզօր եղիցի՞ն ունի.

Ես՝ իմ հանապազօրեայ ազատագրական աշխատանքը ցեղիս
համար:

Զգուելիօրէն բացասական է բուլշեւիկը, եւ դիմագուրկ՝ հոգեպէս:

Ցեղակրօնը մարդկութեան ներկայանում է ցեղադրոշմ ճա-
կատով:

ԺԶ. Պարտուողականութիւն, կրաւորական տառապանք, սար-
սափի հոգեբանութիւն, լալկանութիւն, մտքի անիշխանականութիւն,
կրօնական անդենականութիւն, դասակարգային եւ յարանուանական
եսականութիւն - այդ ամէնից խորշելով խորշում է ցեղակրօնը:

ԺԷ. Ցեղակրօն են, ասել է՝ պարտիմ, կամիմ, կարող են գերազան-
ցել, եւ պէ՛տք է գերազանցեմ ցեղիս թշնամիներին - նախ թուրքին:

ԺԸ. Ուժապաշտ՝ տկարութիւն ու նահանջ չի ճանաչում ցեղա-
կրօնը: Նրա մօտ կենդանի է ծարաւը՝ ոյժի, քաղցրութիւնը՝
զօհաբերութեան, եւ ճիզը՝ ցեղի ոյժերի կենդրոնացման:

Արտաշիսեան իր նախնիքների մեծութեան հետամուտ՝ նա պատկառում է իր ցեղէն, եւ աշխատում ամենուրեք արժանաւորապէս ներկայացնել դա:

ԺԹ. Նրա համար նուիրական է հայոց նորագոյն քաղաքական գոյառութեան օրը - Մայիս 28-ը - եւ այն խորհրդանշող սրբազան եռագոյնը, որ է՝ սրբութիւն, քաղաքական դա՛տ եւ վախճանաբանութիւն, միաժամանակ:

Ի. Հայ մարդու հետ ցեղակրօնը խօսում է հայերէն, որովհետեւ գիտակցում է, թէ լեզուի մահը արագացնում է ժողովուրդների հոգեւոր մահը:

ԻԱ. Ինքնամսխումի մէջ ազատ չէ՛ ցեղակրօնը:

Քաջառողջ լինելու իրաւունք եւ պարտականութիւն ունի նա, որի ձեռքին է գալոց սերունդների ճակատագիրը:

ԻԲ. Նրա համար նախասիրելի են ա՛յն գիտութիւնները, արուեստներն ու արհեստները, որոնք կարելի է ծառայեցնել իր ցեղի հզօրութեան եւ յաղթանակին: Ցեղակրօնը՝ մարտիկ է կամ պատրաստում է դառնալ այդպիսին:

ԻԳ. Անձնական կամքի մշակութեամբ՝ ցեղակրօնը սատարում է հայ ոգու հսկայացումին:

Ցեղի կամքի աստուածացումը - ահա՛ թէ ինչի է ձգտում նա:

Այդ անմեռ կամքին ահա՛, որ չմեռաւ դաժան դարերի հարուածների տակ, եւ չթողեց որ հայութեան մէջ Մամիկոնեանների ռազմաշունչ ոգին մեռնի, ցեղակրօնն ասում է վճռաբար՝ այո՛ եւ ամէ՛ն:

ՑԵՂԱԿՐՕՆԻ ԴԱԲԱՆԱՆՔԸ (2)

Հայ եմ:

Ես աւանդապահն եմ Հայոց ազնիւ արիւնին:

Ես ժառանգորդն եմ ու տէրը Հայաստանի:

Ես պահակն եմ Ցեղիս հոգեւոր հարստութեանց ու դրօշակիրը
անոր պատմական կոչումին:

* * *

Ես կը դաւանիմ ու կը պաշտեմ ցեղիս ստեղծագործ Աստուածը:

Ցեղս մեծ է ու արժէքաւոր:

Ոյժի անսպառ աղբիւր է նա, գիտակցութեան ջահ, առաջնորդ եւ
ապաւեն:

Ցեղս արիւնի սրբազան միութիւնն է, որ ճակատ կը յարդարէ
թշնամիին դիմաց եւ ներքին պառակտումները կը վերացնէ:

Ցեղս ընկերային արդարութեան անշեղ դատաւորն է, որ կը մերժէ
դասակարգային ամեն հասկացողութիւն:

Հայաստանը հարազատ մայրն է ամեն Հայու՝ պարգեւաբաշխ ու
լիառատ:

* * *

Ցեղակրօն եմ:

Ես նուիրուած եմ Ցեղիս պայքարին ու յաղթանակին:

Իմ կեանքս, կարողութիւններս ու նուաճումներս - դիրք, փառք եւ
հարստութիւն - կը պատկանին ու կը ծառայեն ո՛չ թէ ինձ, այլ՝ Ցեղիս:

Իմ գոյութիւնս մէկ նպատակ ունի միայն - անաղարտ պահել
երակներուս արիւնը եւ Ցեղս տեւականացնել:

Իմ կեանքս մէկ արդարացում ունի միայն - տիրանալ հայրենի
սուրբ հողին եւ կառչիլ անոր:

Իմ մեծագործ նախահայրերուս պատմութիւնը, մշակոյթը եւ
լեզուն ինձնով չեն վերջանար, այլ՝ կը շարունակուին ու կը ծաղկին
ինձնով:

* * *

Ես կը լսեմ կանչը իմ վտանգուած Յեղիս:

Արիւնիս մէջ կը զգամ պայքարի կրակը եւ հոգիիս մէջ՝ արեւը
հաւատքի:

Յեղիս ու Յայրենիքիս համար պատրաստ եմ գործելու եւ մեռ-
նելու:

Որոշումս անդարձ է, կամքս՝ անընկճելի:

Ահա կ'ուխտեմ ես Մամիկոնեան զօրավարներու մեռնելու ուխ-
տով. *«Քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր եւ ի վերայ ազ-
գիս մեր եւ մի՛ տեսցեն աչք մեր կոխան ոտից պղծալից լեալ զսրբա-
րանս մեր»:*

Ուխտեցի՛:

Յետեւեցէ՛ք ինձ:

ՀԱՅ ՑԵՂԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ (3)

ա) Ցեղն է գոյարմատականը: Դրանում են օրգանապես ներդաշնակուած ոգին եւ արինը: Դա՛ է մեր բարոյականի, խղճմտանքի եւ նպատակի կառավարիչը:

բ) Ցեղն է ազգութեան հիմքը, իսկ վերջինը՝ ընկերային միակ բնական կազմակերպութիւնը:

գ) Պետութիւնը ղեկավարում է ցեղի կամքով եւ ազգային ընկերութեան պաշտպանման եւ զարգացման ծառայելու սկզբունքով:

դ) Ընկերութեան կազմակերպութիւնը եւ ընկերային արդարութիւնը յենւում են ներքեղային բարոյականի վրայ: Ներքեղային բարոյականով առաջնորդուող ընկերութիւնը միայն կարող է ապահովել ազգի գոյատեւումը, ինչպէս եւ նրա անդամների հոգեւոր, բարոյական, տնտեսական շահերի ամբողջականութիւնը:

ե) Անհատի ազատութեան, ստեղծագործութեան, պարտականութեան եւ երջանկութեան աստիճանաչափը՝ դա կախումի իր զգացումն է ցեղի ճակատագրից եւ ուրախ նուիրումը՝ նրա յաւիտենականին:

զ) Անհատն այն դէպքում է միայն ազատ, երբ մեռնելու կամքով է մօտենում բոլոր այն հարցերին, որոնք շօշափում են ցեղի եւ հայրենիքի ճակատագիրը:

է) Անհատն ստեղծագործ է, երբ նուիրապետական զգացում ունի իր ցեղի յաւիտենական արժէքների հանդէպ:

ը) Անհատը պարտաճանաչ է, երբ ունի իր խղճմտանքի վաւերացումը, թէ անթերի է նուիրումի իր կամքը՝ ցեղին:

թ) Անհատն երջանիկ է, երբ կեանքի բարձրագոյն իմաստը տեսնում է այն գիտակցութեան մէջ, թէ հզօր է իր ցեղը:

ժ) Հզօրանքն է աղբիւրը դրական ամեն առաքինութեան եւ ստեղծագործութեան: Դա՛ է կեանքի իմաստը:

ժա) Ցեղն է հզօրանքի պարգեւատում:

ժբ) Անցաւորից դէպի անանցն երկարող ճամբին ցեղն է միայն

յաւիտենական: Նրան հաղորդակից դառնալով միայն հնարաւոր է կենսաբանօրէն հաւատաւորել կամքը, իմաստաւորել կեանքը:

ժգ) Ցեղը ժխտում է ամեն կարգի հատուծականութիւն, կուսակցականութիւն, դասակարգային «ես» եւ շահ՝ ազգի ներքին կեանքում: Դա պահանջադրում է հայոց լիագունար ազգահաւաքումը հայրենի երկնքի տակ եւ ազգային ներդաշնակ մի համակերպութիւն, որում հայը՝ հայի մէջ տեսնում է ճակատագրի ճշմարիտ իր եղբայրը:

ժդ) Հայրենատէր է ցեղը - ստեղծագործ, նորոգիչ եւ յաղթանակիչ ներքին ամեն տկարութեան:

ժե) Ցեղային շարժման ամեն մի զինուորը պատուի ուխտով հաւատում է, թէ՛

- Հօգորանքն է իմաստը հայ ճակատագրի:

- Յաւիտենական է Հայաստանը:

Ծանոթագրութիւններ

1. «Ցեղակրոնության հավատամքը» բերում ենք ըստ Գ. Նժդեհի «Ամերիկահայութիւնը - Ցեղը եւ իր տականքը» գրքի (էջ 90-95): Թեեւ այն ավելի վաղ ներկայացվել է հեղինակի «Ցեղային արթնութիւն» հոդվածաշարում, վերոհիշյալ գրքում առավել հղկված ու ամբողջական տեսքի է բերված:

2. «Ռազմիկ», 1943 թ., թիւ 131:

3. Նույն տեղում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՅ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԵԼՔԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ	
20-ՐԴ ԴԱՐԻ 30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ	3
ՑԵՂԱՅԻՆ-ՎԵՐԱՆՈՐՈԳՉԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ	7
ՄԱՐՏԿՈՑԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱԶՍԱԳՐԱԿԱՆ ՈՒԽՏԸ	10
ՀԱՅ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ	16
2. ՑԵՂԱԿՐՈՆ ՇԱՐԺՈՒՄԸ	
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ	20
Ա) ՑԵՂԱԿՐՈՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ	21
Բ) ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆ	28
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ (կենսագրական ակնարկ)	53
3. ՏԱՐՈՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ	
ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ	76
Ա) ՏԱՐՈՆԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ	77
Բ) ՏԱՐՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	81
ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ (կենսագրական ակնարկ)	100
4. ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐՈՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԴՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ	107
5. ՀԱՎԵԼՎԱԾ	109

